ԱՆԱԶԳԻ, ա. Անազատ, անտոհմիկ, վատատոհմիկ:
ԱՆԱԶԴ, տե՛ս ԱՆԳՈՒՇԱԿ:
ԱՆԱԶԴԱԿ, ա. Անհնազանդ, անսաստ, անզգամ, ապիրատ, չար:
ԱՆԱԶԴԱԿԱՆ, ա. Անազդելի, անազդողական, աններգործական:
ԱՆԱԶԴԱԿԵԼ, չբ. Անզգամել, անսաստել, անհնազանդել:
ԱՆԱԶԴԵԱԼ, ա. Անծանօթ, անտեղեակ:
ԱՆԱԶԴԵԼԻ, ԱՆԱԶԴՈՂԱԿԱՆ, ա. 1. տե՛ս ԱՆԱԶԴԱԿԱՆ: 2. Անզգալի:
ԱՆԱԶՆՈՒԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Տմարդութիւն:
ԱՆԱԹԵՄԱՅ, տե՛ս ԲԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ:
ԱՆԱԹԵՄԱՅԵԼ, տե՛ս ԲԱՆԱԴՐԵԼ:
ԱՆԱԼԷԿՈԾ, ա. 1. Անծուփ, խաղաղ, հանդարտ: 2. Հանդարտօրէն, խաղաղօրէն:
ԱՆԱԼՈՒԹ, տե՛ս ԵՂՆ:
ԱՆԱԽՈՐԺ, ա. 1. Անախորժելի, անախորժակ, անախորժական, չախորժական, անհաճելի, անհաճոյ:
ԱՆԱԽՈՐԺԱԲԱՐ, մ. Ակամայ (դժկամութեամբ):
ԱՆԱԽՈՐԺԱԿ, ԱՆԱԽՈՐԺԱԿԱՆ, տե՛ս ԱՆԱԽՈՐԺ:
ԱՆԱԽՈՐԺԵԼԻ, տե՛ս ԱՆԱԽՈՐԺ:
ԱՆԱԽՈՐԺԵԼՈՒԹԻՒՆ, ԱՆԱԽՈՐԺՈՒԹԻՒՆ, ԱՆԱԽՈՐԺՈՒՄՆ, գ. Դժպհութիւն (անախորժելի լինելը):
ԱՆԱԽՏ, ա. 1. Անախտակիր (ախտերից ազատ՝ զերծ): 2. Անապական, անարատ, մաքուր, անբիծ:
ԱՆԱԽՏԱԲԱՐ, մ. Անախտապէս, անարատաբար:
ԱՆԱԽՏԱԿԱՆ, տե՛ս ԱՆԱԽՏ:
ԱՆԱԽՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԱԽՏՈՒԹԻՒՆ:
ԱՆԱԽՏԱԿԻՐ, ա. 1. տե՛ս ԱՆԱԽՏ (1): 2. Անկարեկիր, անկարեկից:
ԱՆԱԽՏԱԿԻՑ, ա. Անկարեկից, անցաւակից:
ԱՆԱԽՏԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. Անկարեկցութիւն:
ԱՆԱԽՏԱՊԷՍ, տե՛ս ԱՆԱԽՏԱԲԱՐ:
ԱՆԱԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ, ԱՆԱԽՏՈՒԹԻՒՆ, գ. Անարատութիւն:
ԱՆԱԾԵԼԻ, ԱՆԱԾՈՒ, ա. Անկորանալի:
ԱՆԱԿԻՒՂՍ, գ. Պարեգօտ (կարճ):
ԱՆԱԿՆԱԾԵԼԻ, ա. 1. Անպատկառ, անակնածող: 2. մ. Անպատկառաբար:
ԱՆԱԿՆԱԾՈՂ, տե՛ս ԱՆԱԿՆԱԾԵԼԻ (1):
ԱՆԱԿՆԱՌՈՒ, ԱՆԱԿՆԱՌՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԱՉԱՌ, ԱՆԱՉԱՌՈՒԹԻՒՆ:
ԱՆԱԿՆԱՐԿՈՒՄՆ, գ. Անտեսութիւն (անտեսելը, անտես առնելը):
ԱՆԱԿՆԿԱԼ, ա. 1. Անակնկալ(լ)ի, անակնունելի, յանկարծական: 2. Յուսահատ, անյոյս:
ԱՆԱԿՆԿԱԼ(Լ)Ի, տե՛ս ԱՆԱԿՆԿԱԼ (1):
ԱՆԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆ, գ. Անյուսութիւն (ակնկալութիւն՝ սպասելիք չունենալը):
ԱՆԱԿՆՈՒՆԵԼԻ, տե՛ս ԱՆԱԿՆԿԱԼ (1):
ԱՆԱՀ, ա. մ. Աներկիւղ, անվեհեր, անվախ:
ԱՆԱՀՈԿ, ա. Անվնաս, անվթար:
ԱՆԱՂԱՆԴ, ա. (Աղանդ չպարունակող), անմոլար, անսխալ:
ԱՆԱՂԱՉԱՒՈՐ, ա. Անաղերսալի:
ԱՆԱՂԱՐՏԵԼԻ, ա. Անեղծանելի, անխարդախ:
ԱՆԱՂԵԼԻ, տե՛ս ԱՆԱՂԻ:
ԱՆԱՂԵՐՍԱԼԻ, տե՛ս ԱՆԱՂԱՉԱՒՈՐ:
ԱՆԱՂԵՐՍԵԼԻ, ա. Անողոք, անողոքելի:
ԱՆԱՂԻ, ա. Անաղելի:
ԱՆԱՂՏ, ա. Անաղտական, անաղտելի, մաքուր (չկեղտոտուած):
ԱՆԱՂՏԱԿԱՆ, ԱՆԱՂՏԵԼԻ, տե՛ս ԱՆԱՂՏ:
ԱՆԱՂՏՈՒԹԻՒՆ, գ. Մաքրութիւն (անաղտ լինելը):

ԱՆԱՂՈՏ, ա. մ. Անաղոտական, անաղոտելի, անաղոտապէս, լուսաւոր, պայծառ:
ԱՆԱՂՈՏԱԿԱՆ, ԱՆԱՂՈՏԱՊԷՍ, ԱՆԱՂՈՏԵԼԻ, տե՛ս ԱՆԱՂՈՏ:
ԱՆԱԾ, ա. Անաճական, անաճելի (չաճող, չաւելացող):
ԱՆԱԾԱԿԱՆ, ԱՆԱԾԵԼԻ, տե՛ս ԱՆԱԾ:
ԱՆԱՄԱՆԱԿ, տե՛ս ԱՆԺԱՄԱՆԱԿ:
ԱՆԱՄԱՆԱԿԱԲԱՐ, տե՛ս ԱՆԺԱՄԱՆԱԿԱԲԱՐ:
ԱՆԱՄԱՋ, ԱՆԱՄԱՋԵԼԻ, ա. Անամօթ, անպատկառ:
ԱՆԱՄԲԱՐՀԱՒԱԾՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԱՄԲԱՐՏԱՒԱՆՈՒԹԻՒՆ:
ԱՆԱՄԲԱՐՏԱՒԱՆ, ա. Խոնարհամիտ, հեզ:
ԱՆԱՄԲԱՐՏԱՒԱՆՈՒԹԻՒՆ, գ. Անամբարհաւաճութիւն, խոնարհամտութիւն, հեզութիւն:
ԱՆԱՄԲՈԽ, ԱՆԱՄԲՈԽԵԼԻ, ա. Հանդարտ, անվրդով, անխռով:
ԱՆԱՄԲՈԽՈՒԹԻՒՆ, գ. Հանդարտութիւն, անխռովութիւն:
ԱՆԱՄԲՈՂՋԱԽՈՀ, ա. Բղջախոհ (ոչ ողջախոհ):
ԱՆԱՄԵՆԱԳՈՐԾ, ա. Աննենգ, անխարդախ:
ԱՆԱՄՈՒՍՆԱԿԱՆ, ԱՆԱՄՈՒՍՆԱՑԵԱԼ, ա. Անայր, անհարսն, անհարսնական, անհարսնացեալ:
ԱՆԱՄՓՈՓԵԼԻ, տե՛ս ԱՆԲԱՒԵԼԻ (1):
ԱՆԱՄՕԹ, ա. 1. Անպատկառ, լիրբ: 2. Պարզերես (առանց ամաչելու): 3. մ. Անամօթաբար, լրբաբար:
ԱՆԱՄՕԹԱԲԱՐ, տե՛ս ԱՆԱՄՕԹ (3):
ԱՆԱՄՕԹԱԿԱՆ, տե՛ս ԱՆԱՄՕԹ:
ԱՆԱՄՕԹԱՆԱԼ, տե՛ս ԱՆԱՄՕԹԵԼ:
ԱՆԱՄՕԹԵԼ (իմ), չբ. Անամօթանալ, լրբել:
ԱՆԱՄՕԹՈՒԹԻՒՆ, գ. Անպատկառութիւն, լրբութիւն:
ԱՆԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ, գ. Համանմանութիւն, նմանակերպութիւն, նմանութիւն:
ԱՆԱՅԼԱՅԼ, ա. Անփոփոխ, անայլափոխ:
ԱՆԱՅԼԱՅԼԱԲԱՐ, մ. Անփոփոխապէս:
ԱՆԱՅԼԱՅԼԱԿ, ԱՆԱՅԼԱՅԼԱԿԱՆ, տե՛ս ԱՆԱՅԼԱՅԼ:
ԱՆԱՅԼԱՅԼԱՊԷՍ, տե՛ս ԱՆԱՅԼԱՅԼԱԲԱՐ:
ԱՆԱՅԼԱՅԼԵԼԻ, ա. 1. Անփոփոխելի, անփոփոխ, հաստատուն, անշարժ: 2. Նոյն (ոչ այլեայլ): 3. մ. Անայլայլաբար, անփոփոխապէս, անվրէպ:
ԱՆԱՅԼԱՅԼՈՒԹԻՒՆ, գ. Անփոփոխութիւն, նոյնութիւն, հաւասարութիւն:
ԱՆԱՅԼԱՓՈԽ, տե՛ս ԱՆԱՅԼԱՅԼ:
ԱՆԱՅՐ, ա. 1. Ամուրի: 2. Անամուսնացեալ, անարանց: 3. Անմարդ, անբնակ:
ԱՆԱՅՐԵԼԻ, տե՛ս ԱՆԿԷՋ:
ԱՆԱՅՐԵՑՈՂ, տե՛ս ԱՆԿԻԶԱՆՈՂ:
ԱՆԱՅՑԵԼՈՒ, ա. Անօգնական (այցելու չունեցող):
ԱՆԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ, գ. Անօգնականութիւն (անայցելու լինելը):
ԱՆԱՆԳՈՍՆԵԼԻ, ա. Անպարսաւելի, անմեղադրելի, անպախարակելի:
ԱՆԱՆԽԱՅԵԼԻ, ա. Անխնայ, անխիղճ, խիստ:
ԱՆԱՆԿՈՂԻՆ, ա. Գետնախշտի:
ԱՆԱՆՁՆ, ա. 1. Անհոգի, անշունչ: 2. Անկենդան, անկերպարան: 3. Անգոյ, անէ:
ԱՆԱՆՁՆԱՒՈՐ, ա. Զանձնաւոր:
ԱՆԱՆՁՈՒԿ, ա. Ընդարձակ, լայն:
ԱՆԱՆՈՒԽ, գ. (բսբ.) Դաղձն:
ԱՆԱՆՋԱՏ, ա. 1. Անանջատական, անանջատելի, անբաժանելի, անզատելի, անմեկնելի: 2. տե՛ս ԱՆԱՆՋԱՏԱԲԱՐ:
ԱՆԱՆՋԱՏԱԲԱՐ, մ. Անանջատ, անանջատակի, անանջատապէս, անզատաբար:
ԱՆԱՆՋԱՏԱԿԱՆ, տե՛ս ԱՆԱՆՋԱՏ:

ԱՆԱՆՁԱՏԱԿԻ, ԱՆԱՆՁԱՏԱՊԷՍ, տե՛ս ԱՆԱՆՁԱՏԱԲԱՐ:
ԱՆԱՆՁԱՏԵԼԻ, տե՛ս ԱՆԱՆՁԱՏ:
ԱՆԱՆՁՐՊԵՏ, ա. Անբաժան, անանջատ, անմեկնելի:
ԱՆԱՆՑ, ա. 1. Անգնալի, անկոխ: 2. Անվախճան, յաւիտենական, յաւէրժական, մշտնջենաւոր:
ԱՆԱՆՑԱԿԱՆ, ԱՆԱՆՑԱՆԵԼԻ, ԱՆԱՆՑԱՒՈՐ, տե՛ս ԱՆԱՆՑ (2):
ԱՆԱՆՑՈՒԹԻՒՆ, գ. Անվախճանութիւն, մշտնջենաւորութիւն:
ԱՆԱՆՔԱՏ, տե՛ս ԱՆԿԱՐՕՏ (1):
ԱՆԱՇԽԱՏ, ա. 1. Անխոնջ, անվաստակ: 2. Դիւրին (չյոգնեցնող): 3. մ. Անաշխատաբար, հեշտութեամբ:
ԱՆԱՇԽԱՏԱԲԱՐ, տե՛ս ԱՆԱՇԽԱՏ (3):
ԱՆԱՇԽԱՏԵԼԻ, տե՛ս ԱՆԱՇԽԱՏ:
ԱՆԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ, գ. Դիւրութիւն (դիւրին՝ հեշտ լինելը):
ԱՆԱՇԽԱՐՀԻԿ, ա. 1. Օտարական, պանդուխտ: 2. Վտարանդի, գերի, ստրուկ: 3. Միայնակեաց, կրօնաւոր:
ԱՆԱՌԱՌ, ա. 1. Արդարադատ, արդարամիտ, անակնառու: 2. Անակնածող, անպատկառ: 3. մ. Անաչառաբար, անաչառապէս, արդարապէս:
ԱՆԱՌԱՌԱԲԱՐ, տե՛ս ԱՆԱՌԱՌ (3):
ԱՆԱՌԱՌԱԿԱՆ, տե՛ս ԱՆԱՌԱՌ:
ԱՆԱՌԱՌԱՊԷՍ, տե՛ս ԱՆԱՌԱՌ (3):
ԱՆԱՌԱՌԱՏԵՍ, տե՛ս ԱՐԴԱՐԱՏԵՍ:
ԱՆԱՌԱՌԵԼԻ, ԱՆԱՌԱՌՈՒ, տե՛ս ԱՆԱՌԱՌ (1, 3):
ԱՆԱՌԱՌՈՒԹԻՒՆ, գ. Արդարադատութիւն:
ԱՆԱՋԵԱՑ, ա. Կոյր:
ԱՆԱՊԱԿ, ա. 1. Անխառն (գինի), լայնաբար՝ մաքուր, զուտ, պարզ: 2. Լոկ, սոսկ:
ԱՆԱՊԱԿԱՆ, ա. 1. Մաքուր, անարատ, անեղծ: 2. Անփուտ:
ԱՆԱՊԱԿԱՆԱԳՈՐԾ, ա. Անապականաբար:
ԱՆԱՊԱԿԱՆԱՐԱՐ, տե՛ս ԱՆԱՊԱՆԱԳՈՐԾ:
ԱՆԱՊԱԿԱՆԱՑՈՒ, ԱՆԱՊԱԿԱՆԵԼԻ, տե՛ս ԱՆԱՊԱԿԱՆ:
ԱՆԱՊԱՇԱՒ, ա. Անզեղջ:
ԱՆԱՊԱՇԽԱՐ, ա. 1. Անապաշխարող, անզեղջ: 2. Անապաշխարելի, աններելի:
ԱՆԱՊԱՇԽԱՐԵԼԻ, տե՛ս ԱՆԱՊԱՇԽԱՐ (2):
ԱՆԱՊԱՇԽԱՐՈՂ, տե՛ս ԱՆԱՊԱՇԽԱՐ (1):
ԱՆԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ, գ. Անզղջութիւն, անխոստովանութիւն:
ԱՆԱՊԱՏ, ա. 1. Անշէն, անբնակ: 2. Ամայի, վայրի, աւերակ: 3. փխբ. Թափուր, դատարկ, անմասն:
ԱՆԱՊԱՏԱԿԱՆ, ա. գ. 1. Վայրի (անապատին յատուկ): 2. Ճգնաւոր, միայնակեաց, անապատաւոր, անապատային: 3. Ճգնաւորական:
ԱՆԱՊԱՏԱԿԵԱՑ, ա. գ. Ճգնաւոր, միայնակեաց, անապատական, անապատացի:
ԱՆԱՊԱՏԱՅԻՆ, տե՛ս ԱՆԱՊԱՏԱԿԱՆ (2):
ԱՆԱՊԱՏԱՆԱԼ, չբ. 1. Ամայանալ: 2. Ճգնաւորել, միայնանալ: 3. փխբ. Թափուրել, Թափուր մնալ:
ԱՆԱՊԱՏԱՍՆՈՒՆԴ, տե՛ս ԱՆԱՊԱՏԱՍՈՒՆ:
ԱՆԱՊԱՏԱՍՈՒՆ, ա. Անապատասնունդ (անապատում սնուած՝ մեծացած):
ԱՆԱՊԱՏԱՑԻ, տե՛ս ԱՆԱՊԱՏԱԿԵԱՑ:
ԱՆԱՊԱՏԱՑՈՒՑԱՆԵԼ, պբ. Ամայացուցանել:
ԱՆԱՊԱՏԱՒՈՐ, տե՛ս ԱՆԱՊԱՏԱԿԱՆ (2):
ԱՆԱՊԱՏՈՒԹԻՒՆ, գ. Մենակեցութիւն, միայնակեցութիւն:
ԱՆԱՊԱՒԷՆ, ա. Անօգնական:
ԱՆԱՊՇԵԼԻ, ա. Անխռով, անչփոթ:

ԱՆԱՌ, տե՛ս ԱՆԱՌԻԿ:

ԱՆԱՌԱԿ, ա. 1. Անամօթ, անպատկառ: 2. Ձեղխ, շուայտ: 3. Անկարգ, խառնակ:

ԱՆԱՌԱԿԱԲԱՐ, մ. Անպատկառաբար, յանդգնաբար:

ԱՆԱՌԱԿԵԼ (իմ), չբ. 1. Անամօթել, յաղադարձել: 2. Ձեղխել:

ԱՆԱՌԱԿՈՒԹԻՒՆ, գ. Անպատկառութիւն, անամօթութիւն, գեղխագործութիւն:

ԱՆԱՌԱՋՆՈՐԴ, ա. մ. Անտերունչ:

ԱՆԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ, գ. Անիշխանութիւն, անտերնչութիւն:

ԱՆԱՌԱՒԵԼ, ա. Անաւելի, չափաւոր:

ԱՆԱՌԻԿ, ա. Անառ, ամուր:

ԱՆԱՌՆԵԼԻ, ա. 1. Անարար, անստեղծ, անեղ: 2. Անլինելի, անկարելի, անհնարին:

ԱՆԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ, գ. Հիւանդութիւն, խօթութիւն:

ԱՆԱՍԱՑ, տե՛ս ԱՆԱՍԵԼԻ (1):

ԱՆԱՍԵԼԻ, ա. 1. Անասաց, անճառելի, անպատում, անբաւելի, աննկարագրելի: 2. Անպատշաճ, անվայելուչ (ասելու համար անվայել):

ԱՆԱՍՆԱԲԱՐ, մ. Անասնապէս, անասնօրէն, պաճարապէս:

ԱՆԱՍՆԱԲԱՐՈՅ, ա. Անասնակենցաղ:

ԱՆԱՍՆԱԲՈՅԾ, ա. Պաճարաբոյծ, անասնասնոյց:

ԱՆԱՍՆԱԳԷՏ, ա. Անասնամօլ, անասնամեղ, անասնազանց:

ԱՆԱՍՆԱԳՈՅՆ, ա. Կենդանագոյն:

ԱՆԱՍՆԱԴԷՄ, ա. Անասնակերպ:

ԱՆԱՍՆԱԶԱՆՑ, տե՛ս ԱՆԱՍՆԱԳԷՏ:

ԱՆԱՍՆԱԶՈՀՈՒԹԻՒՆ, գ. Կենդանազոհութիւն:

ԱՆԱՍՆԱԿԱՆ, ա. 1. Անասնային, անասնավայել (անասուններին յատուկ՝ վայել): 2. Անբնական (իբրև հակադրութիւն բանականին):

ԱՆԱՍՆԱԿԵՆՑԱՂ, տե՛ս ԱՆԱՍՆԱԲԱՐՈՅ:

ԱՆԱՍՆԱԿԵՐՊ, տե՛ս ԱՆԱՍՆԱԴԷՄ:

ԱՆԱՍՆԱՄԵՂ, ԱՆԱՍՆԱՄՈԼ, տե՛ս ԱՆԱՍՆԱԳԷՏ:

ԱՆԱՍՆԱՅԻՆ, տե՛ս ԱՆԱՍՆԱԿԱՆ:

ԱՆԱՍՆԱՊԷՍ, տե՛ս ԱՆԱՍՆԱԲԱՐ:

ԱՆԱՍՆԱՍՆՈՅՑ, տե՛ս ԱՆԱՍՆԱԲՈՅԾ:

ԱՆԱՍՆԱՎԱՅԵԼ, տե՛ս ԱՆԱՍՆԱԿԱՆ (1):

ԱՆԱՍՆԱԽՈՐՈՒԹԻՒՆ, գ. Անասնութիւն, անբանութիւն, պաճարեղութիւն:

ԱՆԱՍՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԱՍՆԱԽՈՐՈՒԹԻՒՆ:

ԱՆԱՍՆՕՐԷՆ, տե՛ս ԱՆԱՍՆԱԲԱՐ:

ԱՆԱՍՈՒՆ, գ. 1. Կենդանի: 2. ա. գ. Անբան, անբանական: 3. ա. Անխօս, անբարբառ:

ԱՆԱՍՏՈՒԱԾ, ա. Ամբարիշտ, անհաւատ:

ԱՆԱՍՏՈՒԱԾԱԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՍՏՈՒԱԾԱՆԳԻՏՈՒԹԻՒՆ:

ԱՆԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ, գ. Ապաստուածութիւն, ամբարշտութիւն:

ԱՆԱՏԱԿ, ա. Անկարող, տկար:

ԱՆԱՐԱԿԱՆ, ա. Կնամարդի, իգացեալ:

ԱՆԱՐԱՆՑ, տե՛ս ԱՆԱՅՐ (2):

ԱՆԱՐԱՏ, ա. 1. Անախտ, անապական, ամբիծ, մաքուր, անմեղ: 2. Սուրբ, աստուածային: 3. Անկասկած, աներկբայ:

ԱՆԱՐԱՏԱԲԱՐ, մ. Մաքրաբար, սրբապէս:

ԱՆԱՐԱՏԱՊԷՍ, տե՛ս ԱՆԱՐԱՏԱԲԱՐ:

ԱՆԱՐԱՏՈՒԹԻՒՆ, գ. Անախտութիւն, անապականութիւն, ամբծութիւն:

ԱՆԱՐԱՐ, ա. 1. Անստեղծ, ինքնագոյ, անեղ: 2. Անպատրաստ, անկազմ: 3. Անորակ (որպիսութիւն չունեցող):

ԱՆԱՐԱՐՈՒԱԾ, ա. Անստեղծ, անգոյ, անէ:

ԱՆԱՐԲ, տե՛ս ԱՆԸՄՊԵԼԻ, ԱՆԽՈՒՄ:

ԱՆԱՐԳ, ա. 1. Նուաստ, անպատիւ, անփառ, անշուք: 2. Անպէտ, չնչին:

ԱՆԱՐԳԱԲԱՐ, մ. Անարգապէս:

ԱՆԱՐԳԱԳՈՅՈՒԹԻՒՆ, գ. Անարգութիւն (անարգ կացութիւն՝ վիճակ), անպատուութիւն:

ԱՆԱՐԳԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ, գ. Անշքութիւն:

ԱՆԱՐԳԱՀԱՏԵԼԻ, ա. Անողոքելի, անխնայ, անգութ:

ԱՆԱՐԳԱՄԱՀ, ա. Խայտառակամահ:

ԱՆԱՐԳԱՄԵԾԱՐ, տե՛ս ԾԱՌԱՅԱՄԵԾԱՐ:

ԱՆԱՐԳԱՆՔ, գ. 1. Անպատուութիւն, արհամարհութիւն, նշաւակութիւն, խայտառականք: 2. Նախատինք, պարսաւանք: 3. Ամօթոյք, առականք: 4. Անփառութիւն, անշքութիւն:

ԱՆԱՐԳԱՊԷՍ, տե՛ս ԱՆԱՐԳԱԲԱՐ:

ԱՆԱՐԳԱՍԱՒՈՐ, ա. Անարգիւն, անպտուղ:

ԱՆԱՐԳԱՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ, գ. Տձեւութիւն, անձեւութիւն, անկազմութիւն, անհարթութիւն:

ԱՆԱՐԳԱՍԻ, ա. Անձեւ, անհարթ:

ԱՆԱՐԳԵԼ[1], նբ. 1. Անպատուել, պարսաւել, վիրաւորել, թշնամանս դնել: 2. Արհամարհել, զանց առնել: 3. Նուաստացուցանել: 4. Զարախօսել:

ԱՆԱՐԳԵԼ[2], ա. 1. Անխափան, ազատ, համարձակ: 2. Անսանձ, անժոյժ, անժուժկալ: 3. մ. տե՛ս ԱՆԱՐԳԵԼԱԲԱՐ:

ԱՆԱՐԳԵԼԱԲԱՐ, մ. Անարգելապէս, ազատաբար:

ԱՆԱՐԳԵԼԱԿԱՆ, տե՛ս ԱՆԱՐԳԵԼ[2] (1):

ԱՆԱՐԳԵԼԱՊԷՍ, տե՛ս ԱՆԱՐԳԵԼԱԲԱՐ:

ԱՆԱՐԳԵԼԱՒՈՐՈՒԹԻՒՆ, գ. Անարգելութիւն, անժուժկալութիւն:

ԱՆԱՐԳԵԼՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԱՐԳԵԼԱՒՈՐՈՒԹԻՒՆ:

ԱՆԱՐԳՈՒ, ա. Նախատիչ:

ԱՆԱՐԳՈՒԹԻՒՆ, գ. Անպատուութիւն (անարգ՝ անպատիւ լինելը): 2. Անարգանք, նախատինք, պարսաւանք: 3. Նուաստութիւն, անշքութիւն:

ԱՆԱՐԴ, ա. 1. Անզարդ, անշուք: 2. Անձեւ, անկերպ, տձեւ:

ԱՆԱՐԴԱԿ, ա. 1. Անհարթ: 2. Անզուգական, աննման:

ԱՆԱՐԴԱՐ, ա. Անիրաւ, անօրէն:

ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ, գ. Անիրաւութիւն:

ԱՆԱՐԴԻ, ա. Անպատեհ, անպատշաճ, անյարմար, անվայելուչ:

ԱՆԱՐԴԻԼ, ա. Վիթխարի (անճոռնի մեծութեամբ):

ԱՆԱՐԴԻՒՆ, տե՛ս ԱՆԱՐԳԱՍԱՒՈՐ:

ԱՆԱՐԴՈՒԹԻՒՆ, գ. Անձեւութիւն, տձեւութիւն:

ԱՆԱՐԵԳԱԿՆ, տե՛ս ԱՆԱՐԵՒ:

ԱՆԱՐԵՒ, ա. Անարեգակն, անլոյս, խաւար, մութ:

ԱՆԱՐԺԱՆ, ա. 1. Անարժանաւոր, չարժանի: 2. Անարդար, անիրաւ, անօրէն: 3. Անվայելուչ, անյարմար, անպատշաճ: 4. Անսուրբ, պիղծ: 5. Վատթար, չարաչար: 6. մ. տե՛ս ԱՆԱՐԺԱՆԱԲԱՐ:

ԱՆԱՐԺԱՆԱԲԱՐ, մ. Անարժանապէս, անարժան:

ԱՆԱՐԺԱՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. Ապիրատութիւն, անիրաւութիւն:

ԱՆԱՐԺԱՆԱՊԷՍ, տե՛ս ԱՆԱՐԺԱՆԱԲԱՐ:

ԱՆԱՐԺԱՆԱՒՈՐ, տե՛ս ԱՆԱՐԺԱՆ (1):

ԱՆԱՐԺԱՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԱՐԺԱՆՈՒԹԻՒՆ:

ԱՆԱՐԺԱՆԻ, տե՛ս ԱՆԱՐԺԱՆ:

ԱՆԱՐԺԱՆՈՒԹԻՒՆ, գ. 1. Անարժանաւորութիւն, չարժանութիւն (անարժան լինելը): 2. Անպատեհութիւն, անպատշաճութիւն, անտեղութիւն, անյարմարութիւն:

ԱՆԱՐԻ[1], ա. 1. Երկչոտ, վախկոտ: 2. Անարիական (այրիական զօրութիւնը կորցրած):

ԱՆԱՐԻ[2], ա. Վիթխարի (չափազանց խոշոր՝ մեծ):

ԱՆԱՐԻԱԿԱՆ, տե՛ս ԱՆԱՐԻ[1] (2):

ԱՆԱՐԻՈՒԹԻՒՆ, գ. Երկչոտութիւն, վեհերկոտութիւն:

ԱՆԱՐԾԱԹԱՍԷՐ, ա. Անընչասէր:

ԱՆԱՐԾԱՐԾԵԼԻ, տե՛ս ԱՆԲՈՐԲՈՔ:

ԱՆԱՐՀԵՍՏ, տե՛ս ԱՆԱՐՈՒԵՍՏ:

ԱՆԱՐՈՒԵՍՏ, ա. 1. Անարհեստ, անհմուտ, անփորձ, անտեղեակ: 2. Անարուեստացեալ (առանց արուեստի): 3. Պարզ, անշուք, անպաճոյճ: 4. Անարուեստաչէն, անձեռագործ, աննիւթ: 5. մ. տե՛ս ԱՆԱՐՈՒԵՍՏԱԲԱՐ:

ԱՆԱՐՈՒԵՍՏԱԲԱՐ, մ. Անհմտաբար:

ԱՆԱՐՈՒԵՍՏԱՇԷՆ, տե՛ս ԱՆԱՐՈՒԵՍՏ (4):

ԱՆԱՐՈՒԵՍՏԱՑԵԱԼ, տե՛ս ԱՆԱՐՈՒԵՍՏ (2, 4):

ԱՆԱՐՈՒԵՍՏՈՒԹԻՒՆ, գ. Անհմտութիւն:

ԱՆԱՐՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԱՐԻՈՒԹԻՒՆ:

ԱՆԱՐՏԱՃԱՆԱՊԱՐՀ, ա. Անել (դուրս գալու ճանապարհ չունեցող):

ԱՆԱՐՏԱՔՍԲԵՐԵԼԻ, ա. Անհերքելի:

ԱՆԱՐՕՐ, ա. 1. Անմշակելի, անարօրադիր: 2. Անսերմն:

ԱՆԱՐՕՐԱԴԻՐ, ա. 1. տե՛ս ԱՆԱՐՕՐ (1): 2. Ինքնաբոյս:

ԱՆԱՒԱԳ, ա. Յետին, տկար, անզօր:

ԱՆԱՒԱԳԵԼ (իմ), չբ. Տկարանալ, անզօրանալ:

ԱՆԱՒԱԳՈՒԹԻՒՆ, գ. Տկարութիւն, անզօրութիւն:

ԱՆԱՒԱՐՏ, ա. 1. Անվախճան: 2. Անկատար, կիսակատար, թերի:

ԱՆԱՒԵԼԱՍՏԱՑՈՒԹԻՒՆ, գ. Չափաւորութիւն, սակաւապետութիւն:

ԱՆԱՒԵԼԻ, տե՛ս ԱՆԱՒԵԼՈՐԴ:

ԱՆԱՒԵԼՈՐԴ, ա. Անաւելի:

ԱՆԱՒԵՐ, ա. (Չաւերուած), յապահով, անվտանգ:

ԱՆԲԱԳՋԱՋԱԿԱՆ, տե՛ս ԱՆԲՈՎԱՆԴԱԿ (1):

ԱՆԲԱԺ, ա. 1. Անմասն (բաժին՝ մաս չունեցող): 2. տե՛ս ԱՆԲԱԺԱՆ:

ԱՆԲԱԺԱՆ, ա. Անանջատ, անբաժանելի, անզատելի, անզատ:

ԱՆԲԱԺԱՆԱԲԱՐ, մ. Անբաժանապէս, անբաժանօրէն, անանջատաբար, անմասնաբար, անզատաբար:

ԱՆԲԱԺԱՆԱԿԱՆ, տե՛ս ԱՆԲԱԺԱՆԵԼԻ (1, 2):

ԱՆԲԱԺԱՆԱՊԷՍ, տե՛ս ԱՆԲԱԺԱՆԱԲԱՐ:

ԱՆԲԱԺԱՆԵԼԻ, ա. 1. Անբաժան, անանջատ, անզատելի: 2. մ. տե՛ս ԱՆԲԱԺԱՆԱԲԱՐ:

ԱՆԲԱԺԱՆՕՐԷՆ, տե՛ս ԱՆԲԱԺԱՆԱԲԱՐ:

ԱՆԲԱԺԻՆ, ա. 1. Անբաժան (չբաժանուած): 2. Անբաժանելի, անանջատ: 3. Միաձոյլ, միասնական:

ԱՆԲԱԽՏՈՒԹԻՒՆ, գ. Չարաբաստութիւն, վատաբախտութիւն, թշուառութիւն, ձախողանք:

ԱՆԲԱՂԱԲԱՐ, մ. ա. Անբաղապէս (առանց բաղադրուելու, չբաղադրուած), անխառն, պարզ:

ԱՆԲԱՂԱՑ, ա. 1. Անկասկածելի, անվրէպ: 2. Անմեղադրելի, անպարսաւելի, ան(ը)ստգիւտ:

ԱՆԲԱՂԱՑԱՊԷՍ, մ. 1. Աներկբայ, անկասկած, անտարակոյս: 2. Անմեղադրելի, անպարսաւ:

ԱՆԲԱՂԲԱՂԱՑ, ԱՆԲԱՂԲԱՂԵԼԻ, տե՛ս ԱՆԲԱՂԱՑ:

ԱՆԲԱՂԴԱՏ, ա. Անբաղդատական, անբաղդատելի, անհամեմատելի:

ԱՆԲԱՂԴԱՏԱԲԱՐ, մ. Անհամեմատաբար:

ԱՆԲԱՂԴԱՏԱԿԱՆ, ԱՆԲԱՂԴԱՏԵԼԻ, տե՛ս ԱՆԲԱՂԴԱՏ:

ԱՆԲԱՂՑՕԴ, ա. Անյօդ:

ԱՆԲԱՄԲԱՍ, ա. Անբամբասելի, անպարսաւ, անմեղադրելի:

ԱՆԲԱՄԲԱՍԵԼԻ, տե՛ս ԱՆԲԱՄԲԱՍ:
ԱՆԲԱՆ, ա. գ. 1. Անասուն (բանականություն չունեցող): 2. Անմիտ, անխորհուրդ: 3. Անբարբառ, անխոս, համր:
ԱՆԲԱՆԱԲԱՐ, մ. 1. Անբանապէս, անբանաւորապէս, անասնաբար: 2. Անխօս:
ԱՆԲԱՆԱԿԱՆ, ա. Անբան, անբանաւոր, անասնական:
ԱՆԲԱՆԱՆԱԼ, չբ. Անմտանալ, յիմարանալ:
ԱՆԲԱՆԱՊԷՍ, տե՛ս ԱՆԲԱՆԱԲԱՐ:
ԱՆԲԱՆԱՒՈՐ, տե՛ս ԱՆԲԱՆԱԿԱՆ:
ԱՆԲԱՆԱՒՈՐԱՊԷՍ, տե՛ս ԱՆԲԱՆԱԲԱՐ:
ԱՆԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. 1. Անմտութիւն: 2. Անխօսութիւն: 3. Բաջաղանք:
ԱՆԲԱՇԽԵԼԻ, տե՛ս ԱՆՀԱՆԳԱՆԱԿ:
ԱՆԲԱՌԱՋ, ա. Անմռունչ, մունջ:
ԱՆԲԱՍԻՐ, ա. Անպարսաւելի, անմեղադրելի:
ԱՆԲԱՐԲԱՌ, ա. Անխօս, մունջ, անբեբան:
ԱՆԲԱՐԲԱՌԱԲԱՐ, մ. Անճառաբար:
ԱՆԲԱՐԲԱՌԵԼԻ, ա. Անճառ, անճառելի, անպատմելի:
ԱՆԲԱՐԲԱՌՈՒԹԻՒՆ, գ. Լռութիւն:
ԱՆԲԱՐԳԱՒԱԾ, ա. Անփառունակ, նուաստ, անարգ:
ԱՆԲԱՐԴ, ԱՆԲԱՐԴԵԼԻ, ա. Անպարփակելի, ցիր և ցան:
ԱՆԲԱՐԵԳԹՈՒԹԻՒՆ, գ. Անգթութիւն:
ԱՆԲԱՐԵԽՕՍ, ա. Անօգնական:
ԱՆԲԱՐԵԿԱՄ, ա. Անընկեր:
ԱՆԲԱՐԵՄՏՈՒԹԻՒՆ, գ. Չարամտութիւն, նենգութիւն:
ԱՆԲԱՐԵՍԷՐ, ա. Չարասէր:
ԱՆԲԱՐԵՓՈՐՁ, ա. Անփորձ, միամիտ, անմիտ:
ԱՆԲԱՐԵՓՈՐՁՈՒԹԻՒՆ, գ. Անփորձութիւն, միամտութիւն, անմտութիւն:
ԱՆԲԱՐԵՔԱՎԱՅԵԼՈՒՉ, ա. Անշուք:
ԱՆԲԱՐԺ, տե՛ս ԱՆԲԱԺ:
ԱՆԲԱՐԺԱՆԱԲԱՐ, ԱՆԲԱՐԺԱՆԱՊԷՍ, տե՛ս ԱՆԲԱԺԱՆԱԲԱՐ:
ԱՆԲԱՐԻ, ա. Չբարի:
ԱՆԲԱՐԻՇՏ, տե՛ս ԱՄԲԱՐԻՇՏ:
ԱՆԲԱՐԿԱՑՈՂՈՒԹԻՒՆ, ԱՆԲԱՐԿՈՒԹԻՒՆ, գ. Անցասմնութիւն, հեզութիւն:
ԱՆԲԱՐԿԱԿԱՆ, ԱՆԲԱՐԿԱՆԱԼԻ, ԱՆԲԱՐԿԱՑՈՂ, ա. Անցասումն, հեզ:
ԱՆԲԱՒ, ա. 1. Անսահման, անեզր, անհուն: 2. Անհաշիւ, անհամար, անչափ: 3. Անհնարին, անկարելի: 4. Անկարող, անհմուտ, անձեռնհաս: 5. մ. Անսահմանաբար:
ԱՆԲԱՒԱԲԱՐ, մ. Անբաւապէս, անբաւակի, անչափ:
ԱՆԲԱՒԱԳԷՏ, ա. Ամենագէտ, ամենիմաստ:
ԱՆԲԱՒԱԶՕՐ, ա. Ամենազօր, ամենակարող:
ԱՆԲԱՒԱՀՐԱՇ, ա. Գերահրաշ:
ԱՆԲԱՒԱՊԷՍ, տե՛ս ԱՆԲԱՒԱԲԱՐ:
ԱՆԲԱՒԵԼԻ, ա. 1. Անամփոփելի, անբովանդակ, անսահման, անեզր: 2. տե՛ս ԱՆԱՍԵԼԻ (1):
ԱՆԲԵԿԱՆԵԼԻ, ԱՆԲԵԿՁԵԼԻ, ա. 1. Անկոտոր, անխորտակելի, անփշրելի: 2. փխբ. Անեղծ, անխախտելի, հաստատուն:
ԱՆԲԵՂՄՆԱՒՈՐ, ԱՆԲԵՂՆԱՒՈՐ, ԱՆԲԵՂՈՒՆ, ա. Անբեր, անպտուղ, ամուլ:
ԱՆԲԵՐ, ա. Անարդիւն, անպտուղ:
ԱՆԲԵՐԱՆ, տե՛ս ԱՆԲԱՐԲԱՌ:
ԱՆԲԵՐԵԼԻ, ա. 1. Անկրելի: 2. Անտանելի, անհանդուրժելի, անհամբերելի:
ԱՆԲԵՐՈՒԹԻՒՆ, գ. Անպտղութիւն:
ԱՆԲԵՐՐԻ, ա. Անարգասաւոր, անպտղաբեր:
ԱՆԲԺՇԿԱԲԱՐ, մ. Անբժշկապէս (անբժշկելի կերպով):
ԱՆԲԺՇԿԱԿԱՆ, ա. Անբոյժ, անբուժելի, անբժշկելի, անկազդուրելի:
ԱՆԲԺՇԿԱՊԷՍ, տե՛ս ԱՆԲԺՇԿԱԲԱՐ:
ԱՆԲԺՇԿԵԼԻ, տե՛ս ԱՆԲԺՇԿԱԿԱՆ:

ԱՆԲԻԾ, տե՛ս ԱՄԲԻԾ:

ԱՆԲՆԱԿ, ա. 1. Անմարդաբնակ, անչէն, ամայի: 2. Անտուն, անյարկ: 3. Նժդեհ, տարաբնակ: 4. տե՛ս ԱՆԲՆԱԿԱՆ:

ԱՆԲՆԱԿԱԿԱՆ, տե՛ս ԱՆԲՆԱԿ (1):

ԱՆԲՆԱԿԱՆ, ա. Անբուն, անբնակ (ոչ բնական, բնական օրէնքից դուրս):

ԱՆԲՆԻԿ, ա. Անհարազատ, օտար (տէր):

ԱՆԲՈՅԺ, ա. 1. Անբուժելի, անբուժական, անբժշկական, անառողջանալի, անողջանալի: 2. փխբ. Անփարատելի, անափոփելի:

ԱՆԲՈՎ, տե՛ս ԱՆԲԱԻ:

ԱՆԲՈՎԱՆԴԱԿ, ԱՆԲՈՎԱՆԴԱԿԱԿԱՆ, ա. 1. Անբաւելի, անամփոփելի, անբագձաձական: 2. Անբաւ, անհուն, անեզր, անսահման:

ԱՆԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ, գ. Անսահմանութիւն:

ԱՆԲՈՐԲՈՔ, ա. Անարծարծելի:

ԱՆԲՈՑԱԿԷՁ, ա. Անայրելի (չայրուող):

ԱՆԲՈՒԺ, ԱՆԲՈՒԺԱԿԱՆ, ԱՆԲՈՒԺԵԼԻ, տե՛ս ԱՆԲՈՅԺ:

ԱՆԲՈՒՆ, տե՛ս ԱՆԲՆԱԿԱՆ:

ԱՆԲՈՒՔ, ա. Անբքալի:

ԱՆԲՔԱԼԻ, տե՛ս ԱՆԲՈՒՔ:

ԱՆԳԱՂԱՓԱՐ, ա. Անօրինակ, անտիպ, հոգեղէն:

ԱՆԳԱՄ[1], գ. մ. Նուագ, հաղ:

ԱՆԳԱՄ[2], մ. եղբ. Նոյն իսկ, նաև, ևս:

ԱՆԳԱՄԱԳԻՏ, ԱՆԳԱՄԱԳԻՒՏ, ա. Անձեռնհաս:

ԱՆԳԱՅ, ա. Անխոնարհ, անընկճելի:

ԱՆԳԱՅԹ, ա. Անսայթաք, անսխալ, անգլթելի:

ԱՆԳԱՅԹԱԳՂԵԼԻ, ԱՆԳԱՅԹԱԿՂԵԼԻ, ա. Անգայթ (որ չի գայթակղւում):

ԱՆԳԱՅՏ, ա. 1. Նօսր, անհոծ (ոչ խիտ): 2. Նուրբ, բարակ:

ԱՆԳԱՅՏԱԿԱՆ, ա. 1. Անգայտ, նօսր: 2. փխբ. Թեթև (ոչ լուրջ):

ԱՆԳԱՅՏԱՆԱԼ, չբ. Անօսրանալ:

ԱՆԳԱՅՏԱՑՈՒՑԱՆԵԼ, պբ. Անօսրացուցանել:

ԱՆԳԱՅՏՈՒԹԻՒՆ, գ. Անօսրութիւն:

ԱՆԳԱՆԵԼ, տե՛ս ԱՆԿԱՆԵԼ:

ԱՆԳԱՐԵԼ, նբ. Համարել, հաշուել (դիտել իբրև):

ԱՆԳԵՂԱՂԷՇ, ԱՆԳԵՂԵԱՅ, տե՛ս ԱՆԳԵՂԵՑԻԿ:

ԱՆԳԵՂԵՑԻԿ, ա. Տգեղ:

ԱՆԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ, գ. Տգեղութիւն:

ԱՆԳԷՏ, ա. 1. Անգիտակ, չգիտուն, տըգէտ: 2. Անտեղեակ, անփորձ, անհմուտ: 3. Անգիտելի, անյայտ, անծանօթ:
– ՅԱՆԳԷՏՍ, մ. Անգիտաբար:

ԱՆԳԹԱԲԱՐ, մ. Անխղճաբար:

ԱՆԳԹԵԼԻ, տե՛ս ԱՆԳԱՅԹ:

ԱՆԳԹՈՒԹԻՒՆ, գ. Անողորմութիւն, անագորոյնութիւն, անգորովութիւն, անխըղճմտութիւն:

ԱՆԳԻԾ, ա. Անգծական, անգծելի, դժուարագիծ:

ԱՆԳԻՆ, ա. 1. Մեծագին: 2. մ. Ձրի:

ԱՆԳԻՇԵՐ, ա. Աներեկոյ:

ԱՆԳԻՏԱԲԱՐ, մ. Յանգէտս:

ԱՆԳԻՏԱԿ, տե՛ս ԱՆԳԷՏ:

ԱՆԳԻՏԱԿՈՒԹԻՒՆ, գ. Անտեղեկութիւն (անգիտակ՝ անտեղեակ լինելը):

ԱՆԳԻՏԵԼԻ, ա. Անիմանալի, անյայտ, անհաս:

ԱՆԳԻՏՈՒԹԻՒՆ, գ. Ջգիտանք:

ԱՆԳԻՐ, ա. 1. Անգրեալ, անգրաւորական: 2. Անգրելի: 3. Անգրագէտ:

ԱՆԳԻՒՏ, ա. 1. Անգտանելի: 2. Մեծագին, անգին: 3. Անպէտ, անօգուտ:

ԱՆԳԼՈՐ, ա. Անհոլով (չգլորուող), փխբ. անգայթ (չգայթող):

ԱՆԳԾԱԿԱՆ, ԱՆԳԾԵԼԻ, տե՛ս ԱՆԳԻԾ:

ԱՆԳՆԱԼԻ, ա. 1. Անգնաց, անկոխ, անմատչելի: 2. Անհասանելի:

ԱՆԳՆԱՑ, տե՛ս ԱՆԳՆԱԼԻ (1):

ԱՆԳՈՀ, ա. Դժգոհ:

ԱՆԳՈՀԱՑՈՂ, ա. Անշնորհակալ:

ԱՆԳՈՀԱՑՈՂՈՒԹԻՒՆ, գ. Անշնորհակալութիւն:

ԱՆԳՈՅ, ա. գ. 1. Զգոյ, անէ, ոչինչ, չէ: 2. Անկարեւոր, չնչին: 3. Անյայտ, անյուսալի:

ԱՆԳՈՅԱՆԱԼ, չբ. Զքանալ, ոչնչանալ:

ԱՆԳՈՅՆ, ա. Գունատ:

ԱՆԳՈՅՈՒԹԻՒՆ, գ. Անէութիւն, չէութիւն, ոչեղութիւն, ոչնչութիւն, ոչինչ:

ԱՆԳՈՌՈՋԱԲԱՐ, մ. Համեստաբար:

ԱՆԳՈՌՈՋՈՒԹԻՒՆ, գ. Համեստութիւն:

ԱՆԳՈՍՆԱԲԱՐ, մ. Արհամարհաբար:

ԱՆԳՈՍՆԱՍԷՐ, ա. Արհամարհիչ, արհամարհոտ:

ԱՆԳՈՍՆԵԼ, նբ. Արհամարհել, անարգել, պարսաւել, պախարակել:

ԱՆԳՈՍՆՈՒԹԻՒՆ, ԱՆԳՈՍՆՈՒՄՆ, գ. Արհամարհանք (անգոսնելը):

ԱՆԳՈՎ, ա. Ապագով, անգովելի, անդրուատ:

ԱՆԳՈՎԵԼԻ, տե՛ս ԱՆԳՈՎ:

ԱՆԳՈՐԾ, ա. 1. Ծոյլ (գործ չանող), չկեցու: 2. Անկատար (չգործուած, չկատարուած): 3. Անմշակելի (չմշակուած): 4. Անգործելի (չներգործուող):

- ԱՆԳՈՐԾ ՄԵՂՈՒ, տե՛ս ԲՈՌ:

ԱՆԳՈՐԾԱԿԱՆ, ա. Անգործ, ծոյլ:

ԱՆԳՈՐԾԵԼ (իմ), չբ. Պարապանալ (անգործ դառնալ՝ մնալ):

ԱՆԳՈՐԾԵԼԻ, ա. 1. Անգործ (չգործող): 2. Աններգործելի, անազդելի:

ԱՆԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. Պարապութիւն, չկեցութիւն:

ԱՆԳՈՐՈՎ, ա. Անկարեկիր, անգութ:

ԱՆԳՈՐՈՎՈՒԹԻՒՆ, գ. Անկարեկցութիւն, անգթութիւն:

ԱՆԳՈՒ, ա. Պատշաճաւոր, արժանաւոր:

ԱՆԳՈՒԹ, ա. Անգորով, անողորմ:

ԱՆԳՈՒՆՈՒԹԻՒՆ, գ. Դժգունութիւն, գունատութիւն:

ԱՆԳՈՒՇԱԿ, ա. մ. Անազդ, յանկարծակի, յեղակարծ:

ԱՆԳՏԱԿԱՆ, ԱՆԳՏԱՆԵԼԻ, տե՛ս ԱՆԳԻՒՏ (1):

ԱՆԳՐԱԳԷՏ, տե՛ս ԱՆԳԻՐ (3):

ԱՆԳՐԱՒՈՐԱԿԱՆ, ԱՆԳՐԵԱԼ, տե՛ս ԱՆԳԻՐ (1):

ԱՆԳՐԵԼԻ, ա. Անյիշատակելի:

ԱՆԴ[1], գ. Անդաստան, ագարակ:

ԱՆԴ[2], մ. 1. Անդր: 2. Երբեմն, ժամանակաւ:

ԱՆԴԱԴԱՐ, ա. 1. Անընդհատ, չարունակ: 2. Շարունակաբար, միշտ:

ԱՆԴԱԴԱՐԱԲԱՐ, ԱՆԴԱԴԱՐԱԳՈՅՆ, ԱՆԴԱԴԱՐԱՊԷՍ, ԱՆԴԱԴԱՐԵԼԻ, տե՛ս ԱՆԴԱԴԱՐ:

ԱՆԴԱՃԵԼ, չբ. Մտածել, խորհրդածել, քննել:

ԱՆԴԱՄ, գ. 1. տե՛ս ՅՕԴ (2): 2. (յոգնակի ձեւով) Մարմին (ամբողջ մարմինը):

- ԱՆԴԱՄ ԱՆԴԱՄ, տե՛ս ՅՕԴ ՅՕԴ:

- ԱՆԴԱՄՔ ԱՄՕԹՈՅ կամ ԾԱԾՈՒԿՔ, տե՛ս ԱՄՕԹՈՅՔ:

ԱՆԴԱՄԱԹԻՒ, գ. 1. Յօդուած: 2. մ. Անդամ անդամ, մասն առ մասին:

ԱՆԴԱՄԱԼՈՅԾ, ա. Հաշմ, խեղ, խեղանդամ, անդամախեղ:

ԱՆԴԱՄԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ, գ. Հաշմութիւն, խեղութիւն, անդամախեղութիւն:

ԱՆԴԱՄԱԽԵՂ, տե՛ս ԱՆԴԱՄԱԼՈՅԾ:

ԱՆԴԱՄԱԽԵՂՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԴԱՄԱԼՈՒԾՈՒԹԻՒՆ:

ԱՆԴԱՄԱՅԱՂԹ, տե՛ս ՅԱՂԹԱՆԴԱՄ:

ԱՆԴԱՆԴԱՂ, ա. 1. Անդանդաղական, աշխատասէր, ժրաջան: 2. մ. Անդանդաղաբար (առանց դանդաղելու):

ԱՆԴԱՆԴԱՂԱԲԱՐ, տե՛ս ԱՆԴԱՆԴԱՂ (2):

ԱՆԴԱՆԴԱՂԱԿԱՆ, տե՛ս ԱՆԴԱՆԴԱՂ (1):

ԱՆԴԱՆԴԱՂԵԼ, չբ. Փութալ (անդանդաղ լինել):

ԱՆԴԱՆԴԱՂԵԼԻ, տե՛ս ԱՆԴԱՆԴԱՂ:

ԱՆԴԱՆԴԱՂՈՒԹԻՒՆ, գ. Ժրութիւն (անդանդաղ լինելը):

ԱՆԴԱՆՕՐ, մ. Անդ[2]:

ԱՆԴԱՇՆ, ա. մ. Անհաշտ:

ԱՆԴԱՌՆԱԼԻ, ա. 1. Անդարձ, անխոտոր, անփոփոխելի, հաստատուն: 2. մ. Անդարձաբար:

ԱՆԴԱՍ, ա. Անկարգ (դասաւորութիւն չունեցող):

ԱՆԴԱՍԱԲԱՐ, մ. Անկարգաբար, խառնիխուռն:

ԱՆԴԱՍԱԿԻՑ, ա. Անկցորդ (ոչ դասակից):

ԱՆԴԱՍԵԼԻ, ա. Անկարգ, խառնակ:

ԱՆԴԱՍՈՒԹԻՒՆ, գ. Անկարգութիւն (անդաս լինելը), խառնակութիւն:

ԱՆԴԱՍՏԱԿ, գ. Գաւիթ, նախադուռն, բակ:

ԱՆԴԱՍՏԱՆ, տե՛ս Անդ[1]:

ԱՆԴԱՍՏԻԱՐԱԿ, ա. Անհրահանգ, անկիրթ:

ԱՆԴԱՏ, ա. 1. Անպարտ, անմեղ: 2. Անքնին, անյայտ, անծանօթ:

ԱՆԴԱՏԱՊԱՐՏ, ա. 1. Անդատապարտելի, անմեղ, անպարտ: 2. Անբստգիւտ, անպարսաւ, անարատ: 3. Պարգերես:

ԱՆԴԱՏԱՊԱՐՏԱԿԱՆ, ԱՆԴԱՏԱՊԱՐՏԵԱԼ, ԱՆԴԱՏԱՊԱՐՏԵԼԻ, տե՛ս ԱՆԴԱՏԱՊԱՐՏ:

ԱՆԴԱՐՁ[1], ա. 1. Յամառ, անզեղջ: 2. Անդառնալի: 3. մ. տե՛ս ԱՆԴԱՐՁԱԲԱՐ:

ԱՆԴԱՐՁ[2], գ. Կտակ, կտակագիր (կտակի թուղթը):

ԱՆԴԱՐՁԱԲԱՐ, մ. Անդարձ (անդառնալի կերպով):

ԱՆԴԱՐՁՈՒԹԻՒՆ, գ. Յամառութիւն (անդարձ՝ անզեղջ լինելը):

ԱՆԴԱՐՄԱՆ, ա. Անխնամ:

ԱՆԴԱՒԱՃԱՆՈՂ, ա. Հաւատարիմ, անխարդախ, անկեղծ:

ԱՆԴԵԱՅ, գ. Անդի, նախիր, պաճար:

ԱՆԴԵԴԵԻ, ա. Անդրդուելի, հաստատուն, անշարժ:

ԱՆԴԵՂԱՑ, ԱՆԴԵՂԵԱՑ, գ. Թերիակէ (հակաթոյն), հակառակադեղ:

ԱՆԴԵՐՁԱՊԵՏ, գ. Մոգպետ:

ԱՆԴԷՆ, մ. 1. Անդանօր (այնտեղ, նոյն տեղը): 2. Անդրէն, դարձեալ:

- ԱՆԴԷՆ ԱՆԴԷՆ, մ. Շուտով, իսկոյն:

ԱՆԴԷՈՐԴ, գ. Հովիւ (նախիրն արածեցնող, նախրապան):

ԱՆԴԷՊ, մ. Անտեղի, անպատեհ, անյարմար, անպատշաճ, տարադէպ, տարաժամ:

- ՅԱՆԴԷՊՍ, մ. Անդիպաբար:

ԱՆԴԻ, տե՛ս ԱՆԴԵԱՅ:

ԱՆԴԻՄԱՃԱՌԵԼԻ, տե՛ս ԱՆԸՆԴԴԻՄԱԲԱՆԵԼԻ:

ԱՆԴԻՊԱԲԱՐ, տե՛ս ՅԱՆԴԷՊՍ (ԱՆԴԷՊ-ի տակ):

ԱՆԴԻՏԵԼ, նբ. Անտես առնել, անտեսել:

ԱՆԴԻՒՐ, ա. Դժուարին:

ԱՆԴՂՈՐԴԵԼԻ, ԱՆԴՂՐԴԵԼԻ, ա. Անխախտելի, անշարժ, հաստատուն, անսասան, անդրդուելի:

ԱՆԴՆԴԱԽՈՐ, ա. Անդնդայեղց, անդընդափոս:

ԱՆԴՆԴԱԿԱՆ, տե՛ս ԱՆԴՆԴԱՅԻՆ:

ԱՆԴՆԴԱՅԵՂՑ, տե՛ս ԱՆԴՆԴԱԽՈՐ:

ԱՆԴՆԴԱՅԻՆ, ա. Անդնդական (անդունդին յատուկ):

ԱՆԴՆԴԱՍՈՅԶ, ա. Անդնդավիժակ:

ԱՆԴՆԴԱՎԻԺԱԿ, տե՛ս ԱՆԴՆԴԱՍՈՅԶ:

ԱՆԴՆԴԱՓՈՍ, տե՛ս ԱՆԴՆԴԱԽՈՐ:

ԱՆԴՈՂԴՈՋ, ա. 1. Անշարժ, անփոփոխ: 2. մ. Անշարժաբար, հանդարտօրէն:

ԱՆԴՈՅԼ, տե՛ս ԱՆԴՈՒԼ:

ԱՆԴՈՅՐ, ԱՆԴՈՅՐՐ, ա. 1. Ընդարձակ, լայն: 2. տե՛ս ԱՆԴԻՒՐ:

ԱՆԴՈՐՐ, գ. 1. տե՛ս ԱՆԴՈՐՐՈՒԹԻՒՆ: 2. ա. մ. Խաղաղ, հանգիստ, անվրդով: 3. Ընդարձակ, լայնատարած:

ԱՆԴՈՐՐԱՄԻՏ, ա. Հանդարտասիրտ, անխռով:

ԱՆԴՈՐՐԱՆԱԼ, չբ. Լայնանալ (ընդարձակուել):

ԱՆԴՈՐՐԱՊԷՍ, մ. 1. Խաղաղապէս, հանդարտապէս: 2. Ընդարձակապէս:
ԱՆԴՈՐՐԱՑՈՒՑԱՆԵԼ, պբ. Դիւրել, հանդարտեցուցանել, խաղաղացուցանել:
ԱՆԴՈՐՐԵԼ, չբ. 1. Խաղաղանալ, հանդարտել: 2. տե՛ս ԱՆԴՈՐՐԱՆԱԼ:
ԱՆԴՈՐՐԻՉ, ա. Հանգստարար, խաղաղացուցիչ:
ԱՆԴՈՐՐՈՒԹԻՒՆ, գ. 1. Հանդարտութիւն, հանգիստ, խաղաղութիւն: 2. Ընդարձակութիւն:
ԱՆԴՈՒԼ, ա. մ. Անդադար, անընդհատ, չարունակ, անընդմիջելի:
ԱՆԴՈՒԼՈՒԹԻՒՆ, գ. Շարունակութիւն (անդուլ՝ անդադար՝ անընդհատ լինելը):
ԱՆԴՈՒՆԴՔ (սովորաբար յոգն. ձեւով), գ. 1. Վիհ (անյատակ խորութիւն): 2. Դժոխք: 3. Գերեզման:
ԱՆԴՈՒՍՏ, մ. 1. Անտի (այնտեղից): 2. Անդստին, ի բնուստ, ի սկզբանէ: 3. Այնուհետեւ: 4. Անդ (այնտեղ):
ԱՆԴՊԻՐ, ա. Անուսումն, անգրագէտ, տգէտ:
ԱՆԴՊՐՈՒԹԻՒՆ, գ. Անուսումնութիւն (անգրագէտ լինելը):
ԱՆԴՍՏԻՆ, մ. 1. տե՛ս ԱՆԴՈՒՍՏ (1, 2): 2. Ի նորոյ, դարձեալ, վերստին: 4. Անդրէն, իսկոյն, անյապաղ:
ԱՆԴՐ, մ. 1. Անդ (այնտեղ, դէպի այնտեղ): 2. Հեռի: 3. Անդր քան (առաջ քան, ի վեր քան):
- ԱՆԴՐ ՔԱՆ, տե՛ս ԱՆԴՐ (3):
ԱՆԴՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ, գ. Դանդաչութիւն, դանդաչումն, տատանումն, տարուբերումն:
ԱՆԴՐԱԳԻՐ, ա. Արձանագիր (արձանագրուած):
ԱՆԴՐԱԳՈՅՆ, ա. մ. Առաւելագոյն, աւելի եւս:
ԱՆԴՐԱԴԱՐՁԻԼ, տե՛ս ՀԱԿԱԴԱՐՁԵԼ[2] (իմ):
ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ, ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆ, տե՛ս ՀԱԿԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ, ՀԱԿԱԴԱՐՁՈՒՄՆ:
ԱՆԴՐԱԿ, տե՛ս ԱՆՐԱԿ:
ԱՆԴՐԱՆԱԼ, չբ. 1. Հանապազորդել: 2. Հեռանալ (մի կողմ դառնալ):
ԱՆԴՐԱՆԻԿ, ա. 1. Անդրանկածնունդ, առաջածին: 2. Միածին, միամօր:
ԱՆԴՐԱՆԿԱԳՈՅՆ, տե՛ս ԵՐԻՑԱԳՈՅՆ:
ԱՆԴՐԱՆԿԱԾԻՆ, ա. Առաջնածին:
ԱՆԴՐԱՆԿԱԾՆՈՒՆԴ, տե՛ս ԱՆԴՐԱՆԻԿ (1):
ԱՆԴՐԱՎԱՐՏԻՔ, գ. 1. Վարտիք: 2. Տաբատ:
ԱՆԴՐԴՈՒԵԼԻ, ա. մ. Անխախտելի, հաստատուն:
ԱՆԴՐԷՆ, մ. 1. Դարձեալ, վերստին, կրկին: 2. Յետ (դէպի յետ): 3. Իսկոյն, անյապաղ:
ԱՆԴՐԷՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ, ԱՆԴՐԷՆԴԱՐՁՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ:
ԱՆԴՐԺԵԼԻ, ա. մ. Յապահով, անկողոպտելի:
ԱՆԴՐԻ, գ. Արձան, առնապատկեր:
ԱՆԴՐԻԱՆԴ, ԱՆԴՐԻԱՆՏ, տե՛ս ԱՆԴՐԻ:
ԱՆԴՐԻԱՆՏԱԳՈՐԾ, գ. ա. Անդրիաստեղծ, առնապատկերագործ:
ԱՆԴՐԻԱՍՏԵՂԾ, տե՛ս ԱՆԴՐԻԱՆՏԱԳՈՐԾ:
ԱՆԴՐՈՇՄ, տե՛ս ԱՆԿՆԻՔ:
ԱՆԴՐՈՒԱՏ, տե՛ս ԱՆԳՈՎԵԼԻ:
ԱՆԵՁՐ, ԱՆԵՁՐԱԿԱՆ, ա. Անսահման, անծայր, անհուն, անբաւ, անպարփակ:
ԱՆԵՁՐՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹԻՒՆ:
ԱՆԵԼ, ԱՆԵԼԱՆԵԼԻ, ա. 1. Անզերծանելի: 2. Անկոխ, անհպելի, անմատչելի:
ԱՆԵԿԱՄՏԱԲԱՐ, մ. Ի բնէ, ինքնին:
ԱՆԵՂ, ա. 1. Անգոյ, չգոյ, անէ: 2. (կրօն.) Անստեղծ, ինքնագոյ, էական:

ԱՆԵՂԱԿԱՆ, տե՛ս ԱՆԵՂ:

ԱՆԵՂԱԿԵՐՏ, ա. (կրօն.) Անեղաշէն, աստուածակերտ:

ԱՆԵՂԱԿԻՑ, ա. (կրօն.) Էակից, համագոյ:

ԱՆԵՂԱՆԵԼԻ, տե՛ս ԱՆԵՂ:

ԱՆԵՂԱՇԷՆ, տե՛ս ԱՆԵՂԱԿԵՐՏ:

ԱՆԵՂԵԱԼ, տե՛ս ԱՆԵՂ:

ԱՆԵՂԾ, ԱՆԵՂԾԱԿԱՆ, ԱՆԵՂԾԱՆԵԼԻ, ա. 1. Անապական (չեղծուող): 2. Մշտական, անփոփոխ, անջինջ, անմահ:

ԱՆԵՂԾԱՊԷՍ, մ. Անապականաբար:

ԱՆԵՂԾԵԱԼ, տե՛ս ԱՆԵՂԾ:

ԱՆԵՂՈՒԹԻՒՆ, գ. Անգոյութիւն, անէութիւն, չէութիւն:

ԱՆԵՊԵՐ, ա. մ. Անպարսաւելի, անարատ:

ԱՆԵՐԱԺԻՇՏ, ա. 1. Անկիրթ, տգէտ: 2. Անյարմար, աննուազ (աններդաշնակ):

ԱՆԵՐԱԽՏԻ, տե՛ս ԱՊԵՐԱԽՏ (2):

ԱՆԵՐԱՍԱՆ, ա. 1. Աներասանակ, անսանձ, ապերասան: 2. փխբ. Ցանդուգն, անհնազանդ, անսաստ, լկտի:

ԱՆԵՐԱՍԱՆԱԲԱՐ, մ. Ապարասանաբար, յանդգնաբար:

ԱՆԵՐԱՍԱՆԱԿ, տե՛ս ԱՆԵՐԱՍԱՆ:

ԱՆԵՐԲ, ա. Անժամանակ, մշտնջենաւոր, յաւիտենական:

ԱՆԵՐԲԱԲԱՐ, մ. Անժամանակաբար:

ԱՆԵՐԵԱԿ, ԱՆԵՐԵԿ, տե՛ս ԱՆԵՐԵԿՈՅ:

ԱՆԵՐԵԿՈՅ, ա. Աներեակ, աներեկ, մըշտատիւ (երեկոյ չունեցող):

ԱՆԵՐԵՒԱԿ, ԱՆԵՐԵՒԱԿԻ, ա. 1. Աներևոյթ, անտես, (չերևացող): 2. Հասարակ, աննշան (աչքի չընկնող):

ԱՆԵՐԵՒՈՅԹ, ա. 1. Անտեսանելի, աննկատելի (տեսողութեանն անմատչելի): 2. Անծանօթ, գաղտնի, ծածուկ: 3. Անհաւաստի, անյայտ: 4. Աներևակ, աննշան: 5. մ. տե՛ս ԱՆԵՐԵՒՈՒԹԱԲԱՐ:

- ԱՆԵՐԵՒՈՅԹ ԼԻՆԵԼ, տե՛ս ԱՆԵՐԵՒՈՒԹԱՆԱԼ:

- ՅԱՆԵՐԵՒՈՅԹՍ, տե՛ս ԱՆԵՐԵՒՈՒԹԱԲԱՐ:

ԱՆԵՐԵՒՈՒԹԱԲԱՐ, մ. Աներևութապէս, յաներևոյթս, անտեսաբար, անյայտաբար, ծածկաբար:

ԱՆԵՐԵՒՈՒԹԱԿԱՆ, տե՛ս ԱՆԵՐԵՒՈՅԹ:

ԱՆԵՐԵՒՈՒԹԱՆԱԼ, չբ. Աներևոյթ լինել, անհետանալ, չքանալ:

ԱՆԵՐԵՒՈՒԹԱՊԷՍ, տե՛ս ԱՆԵՐԵՒՈՒԹԱԲԱՐ:

ԱՆԵՐԵՒՈՒԹԱՑՈՒՑԱՆԵԼ, պբ. Անհետ առնել, չքացուցանել, ծածկել:

ԱՆԵՐԵՒՈՒԹԵԼ (իմ), տե՛ս ԱՆԵՐԵՒՈՒԹԱՆԱԼ:

ԱՆԵՐԵՒՈՒԹԻՒՆ, գ. Անտեսութիւն, աներևութութիւն (աներևոյթ լինելը):

ԱՆԵՐԵՒՈՒԹՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԵՐԵՒՈՒԹԻՒՆ:

ԱՆԵՐԵՒՈՒԹՈՒՍՏ կամ ՅԱՆԵՐԵՒՈՒԹՈՒՍՏ, մ. Աներևութաբար, յանկարծակի:

ԱՆԵՐԿ, ա. Անգործ (երկ՝ աշխատանք չունեցող):

ԱՆԵՐԿԲԱՅ, ա. 1. Աներկբայելի, անկասկածելի: 2. մ. տե՛ս ԱՆԵՐԿԲԱՅԱԲԱՐ:

ԱՆԵՐԿԲԱՅԱԲԱՐ, մ. 1. Անյերկուաբար, հաւաստապէս, հաւաստեաւ: 2. Անվեհեր, աներկիւղ, անվախ:

ԱՆԵՐԿԲԱՅԵԼԻ, տե՛ս ԱՆԵՐԿԲԱՅ:

ԱՆԵՐԿԲԱՅՈՒԹԻՒՆ, գ. Հաւաստութիւն:

ԱՆԵՐԿԵՂ, տե՛ս ԱՆԵՐԿԻՒՂ:

ԱՆԵՐԿԵՒԱՆ, ա. մ. Անկասկած:

ԱՆԵՐԿԵՒԱՆՈՒԹԻՒՆ, գ. Անկասկածութիւն:

ԱՆԵՐԿԻՒՂ, ա. 1. Անզանգիտելի, անվեհեր, անահ: 2. Անկասկած, անվտանգ, յապահով, աներկիւղուտ: 3. Աներկիւղած: 4. մ. տե՛ս ԱՆԵՐԿԻՒՂԱԲԱՐ:

ԱՆԵՐԿԻՒՂԱԲԱՐ, մ. Աներկիւղապէս, անզանգիտաբար, վստահաբար, համարձակ:

ԱՆԵՐԿԻՒՂԱԾ, ա. Աներկիւղ, համարձակ, արի:

ԱՆԵՐԿԻՒՂԱԾՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԵՐԿԻՒՂՈՒԹԻՒՆ:
ԱՆԵՐԿԻՒՂԱԿԱՆ, տե՛ս ԱՆԵՐԿԻՒՂ:
ԱՆԵՐԿԻՒՂԱՊԷՍ, տե՛ս ԱՆԵՐԿԻՒՂԱԲԱՐ:
ԱՆԵՐԿԻՒՂՈՒԹԻՒՆ, գ. Աներկիւղածութիւն, աներկչոտութիւն, համարձակութիւն, արիութիւն:
ԱՆԵՐԿԻՒՂՈՒՏ, տե՛ս ԱՆԵՐԿԻՒՂ (2):
ԱՆԵՐԿՀԱՒԱՏ, ա. մ. Աներկբայ (առանց երկմտելու):
ԱՆԵՐԿՄԻՏ, ա. Անկասկած, աներկբայ:
ԱՆԵՐԿՄՏԵԼԻ, ա. Անկասկածելի, աներկբայելի:
ԱՆԵՐԿՈՒԱՆԱԼԻ, տե՛ս ԱՆՅԵՐԿՈՒԱՆԱԼԻ:
ԱՆԵՐԿՉՈՏՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԵՐԿԻՒՂՈՒԹԻՒՆ:
ԱՆԵՐԿՐԱԳՈՐԾԵԼԻ, ա. Անմշակելի, խոպան, կորդ:
ԱՆԵՐՋԱՆԻԿ, ա. Չարաբախտ, թշուառ:
ԱՆԶԱՅՐ, ա. Անբարկացող:
ԱՆԶԱՆԱԶԱՆ, ա. Անխտիր, անզանազանեալ:
ԱՆԶԱՆԱԶԱՆԱԲԱՐ, ԱՆԶԱՆԱԶԱՆԱՊԷՍ, մ. Անտարբերապէս, անխտրաբար, անխտրապէս, անխտիրս:
ԱՆԶԱՆԱԶԱՆԵԱԼ, տե՛ս ԱՆԶԱՆԱԶԱՆ:
ԱՆԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ, գ. Անխտրութիւն:
ԱՆԶԱՆԳԻՏԱԲԱՐ, տե՛ս ԱՆԵՐԿԻՒՂԱԲԱՐ:
ԱՆԶԱՆԳԻՏԵԼԻ, տե՛ս ԱՆԵՐԿԻՒՂ (1):
ԱՆԶԱՏ, տե՛ս ԱՆԲԱԺԱՆ:
ԱՆԶԱՏԱԲԱՐ, տե՛ս ԱՆԲԱԺԱՆԱԲԱՐ:
ԱՆԶԱՏԱԿԱՆ, ԱՆԶԱՏԵԼԻ, տե՛ս ԱՆԲԱԺԱՆԵԼԻ (1):
ԱՆԶԱՐԴ, ա. Անարդ, անշուք, անպաճոյճ:
ԱՆԶԱՐԴԱՆԱԼ, չբ. Անզարդել, անչքանալ, անչքեղանալ:
ԱՆԶԱՐԴԱՑՈՒՑԱՆԵԼ, պբ. Անչքացուցանել:
ԱՆԶԱՐԴԵԼ (իմ), տե՛ս ԱՆՇՔԱՆԱԼ:
ԱՆԶԱՐԴԵՑՈՒՑԱՆԵԼ, տե՛ս ԱՆԶԱՐԴԱՑՈՒՑԱՆԵԼ:
ԱՆԶԱՐԴՈՒԹԻՒՆ, գ. Անչքութիւն:
ԱՆԶԱՐՀՈՒՐԵԼԻ, ա. Անվեհեր, աներկիւղ:
ԱՆԶԱՐՄ, ա. մ. Անզաւակ, անորդի (զարմ՝ սերունդ չունեցող):
ԱՆԶԱՒԱԿ, ա. մ. 1. Անզարմ, անժառանգ, անճետ, անորդի: 2. Անպտուղ, ամուլ:
ԱՆԶԱՒԱԿԱՆԱԼ, տե՛ս ԱՆԶԱՒԱԿԵԼ (իմ):
ԱՆԶԱՒԱԿԵԼ[1], նբ. Անճիտել (անզաւակ դարձնել):
ԱՆԶԱՒԱԿԵԼ[2] (իմ), չբ. Անզաւականալ, անորդել (անզաւակ դառնալ, զաւակներից զրկուել):
ԱՆԶԱՒԱԿՈՒԹԻՒՆ, գ. Անորդութիւն, անճետութիւն:
ԱՆԶԱՒԱԿՈՒՆԻ, ա. Ամուլ (զաւակ չբերող՝ չունեցող):
ԱՆԶԲԱՂ, ա. մ. Անզբօս, անխռով (ոչ մտազբաղ՝ մտախոհ):
ԱՆԶԲԱՂԱԲԱՐ, տե՛ս ԱՆԶԲԱՂԱՊԷՍ:
ԱՆԶԲԱՂԱԿԱՆ, տե՛ս ԱՆԶԲԱՂ:
ԱՆԶԲԱՂԱՊԷՍ, մ. 1. Անզբաղաբար, անշփոթ: 2. Անյապաղ, անդանդաղ, փութով:
ԱՆԶԲԱՂՈՒԹԻՒՆ, գ. Անզբօսութիւն (անզբաղ լինելը):
ԱՆԶԲՕՍ, տե՛ս ԱՆԶԲԱՂ:
ԱՆԶԲՕՍՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԶԲԱՂՈՒԹԻՒՆ:
ԱՆԶԳԱԼԻ, ա. 1. Անզգած, անզգայ (չզգացող): 2. Անըմբռնելի, անիմանալի:
ԱՆԶԳԱԾ, ա. Անզգալի, անզգայ (չզգացուող, չզգացող):
ԱՆԶԳԱՄ, ա. 1. Անմիտ, չար, վատ: 2. Ցանդուգն, անպատկառ: 3. Անպարկեշտ, անառակ:

ԱՆԶԳԱՄԱԲԱՐ, մ. Զարակամաբար։

ԱՆԶԳԱՄԵԼ (իմ), չբ. Զարանալ, ժանտանալ, անմտանալ, մոլել։

ԱՆԶԳԱՄՈՒԹԻՒՆ, գ. Զարակամութիւն։

ԱՆԶԳԱՅ, ա. 1. Անշունչ, անկենդան (զգայութիւնից զուրկ)։ 2. Անզգած, անմիտ, անբան (չզգացող)։

– ԱՆԶԳԱՅ, ՅԱՆԶԳԱՅ, ՅԱՆԶԳԱՅՍ, տե՛ս ԱՆԶԳԱՅԱԲԱՐ։

ԱՆԶԳԱՅԱԲԱՐ, մ. Անզգայապէս (առանց զգալու, անզգայ կերպով), անզգաստաբար։

ԱՆԶԳԱՅԱԿԱՆ, ա. Անզգայ (անզգային յատուկ)։

ԱՆԶԳԱՅԱՆԱԼ, չ. Անզգայել, ընդարմանալ, թմրել։

ԱՆԶԳԱՅԱՊԷՍ, տե՛ս ԱՆԶԳԱՅԱԲԱՐ։

ԱՆԶԳԱՅԱՑՈՒՑԱՆԵԼ, պբ. Ընդարմացուցանել, թմրեցուցանել։

ԱՆԶԳԱՅԵԼ (իմ), տե՛ս ԱՆԶԳԱՅԱՆԱԼ։

ԱՆԶԳԱՅՈՒԹԻՒՆ, գ. 1. Թմրութիւն (զգայութեան բացակայութիւն)։ 2. Անմտութիւն, անխոհեմութիւն։

ԱՆԶԳԱՅՈՒՆ, ա. Անզգայ (ոչ զգայուն)։

ԱՆԶԳԱՍՏ, ա. 1. Անզգոյշ, անզգօն։ 2. Անակնկալ (չզգուշացուած)։

– ՅԱՆԶԳԱՍՏՍ, ՅԱՆԶԳԱՍՏԻՑ, ՅԱՆԸԶԳԱՍՏՈՒՑ, մ. տե՛ս ԱՆԶԳՈՒՇԱԲԱՐ։

ԱՆԶԳԱՍՏԱԲԱՐ, տե՛ս ԱՆԶԳԱՅԱԲԱՐ։

ԱՆԶԳԱՍՏՈՒԹԻՒՆ, գ. Անզգուշութիւն, անհոգութիւն։

ԱՆԶԳԵՍՏ, ա. Անհանդերձ, մերկ։

ԱՆԶԳԵՍՏՈՒԹԻՒՆ, գ. Մերկութիւն։

ԱՆԶԳՈՅՇ, ա. 1. Անզգաստ, անզգուշացող։ 2. Անակնկալ (չնախազգուշացուած)։ 3. մ. տե՛ս ԱՆԶԳՈՒՇԱԲԱՐ։

ԱՆԶԳՈՒՇԱԲԱՐ, մ. Անզգաստաբար, յանկարծակի։

ԱՆԶԳՈՒՇԱԿԱՆ, տե՛ս ԱՆԶԳՈՅՇ։

ԱՆԶԳՈՒՇԱՑՈՂ, տե՛ս ԱՆԶԳՈՅՇ (1)։

ԱՆԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ, գ. Անզգաստութիւն (անզգոյշ լինելը)։

ԱՆԶԳՕՆ, ա. Անխրատ, անզգամ (ոչ զգօն)։

ԱՆԶԵԽ կամ ԱՆԶԵՂԽ, ա. Ժուժկալ, զգաստ։

ԱՆԶԵԿՈՒՑԱՆԵԼԻ, ա. Անպատմելի։

ԱՆԶԵՂՋ, ա. 1. Անապաշաւ, անդարձ (չզղջացող)։ 2. Անզղջանալի։

ԱՆԶԵՂՋԱԿԱՆ, տե՛ս ԱՆԶԵՂՋ։

ԱՆԶԵՆ, ա. Անյաշտ (չմորթուած)։

ԱՆԶԵՐԾ, ԱՆԶԵՐԾԱՆԵԼԻ, տե՛ս ԱՆՃՈՂՈՊՐԵԼԻ։

ԱՆԶԵՐԾՈՒԹԻՒՆ, գ. Յապահովութիւն։

ԱՆԶԷՆ, ա. մ. Ապազէն, յապազէն։

ԱՆԶՂՋԱԲԱՐ, տե՛ս ԱՆԽՈՍՏՈՎԱՆ (2)։

ԱՆԶՂՋԱԿԱՆ, տե՛ս ԱՆԶԵՂՋ։

ԱՆԶՂՋԱՆԱԼԻ, տե՛ս ԱՆԶԵՂՋ (2)։

ԱՆԶՂՋՈՒԹԻՒՆ, գ. Անապաշխարութիւն, անխոստովանութիւն։

ԱՆԶՄՏԱԽԱԾԵԼԻ, ա. Անմտածելի։

ԱՆԶՆԻՆ, ԱՆԶՆՆԱԿԱՆ, ԱՆԶՆՆԵԼԻ, ա. Անքնին, անիմանալի, անըմբռնելի։

ԱՆԶՈՅԳ, ա. 1. Անհաւասար, անհամեմատ, անզուգական, աննման։ 2. Կոճատ (կենտ)։

ԱՆԶՈՒԳԱԿԱՆ, ա. Աննման, անզուգելի, անհամեմատելի, անբաղդատ, անհաւասար։

ԱՆԶՈՒԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Աննմանութիւն, անզուգութիւն (անզուգական լինելը, իր նմանը չունենալը)։

ԱՆԶՈՒԳԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. Անզուգութիւն (զուգակցութիւն՝ սեռական հարաբերութիւն չունենալը)։

ԱՆԶՈՒԳԵԼԻ, տե՛ս ԱՆԶՈՒԳԱԿԱՆ։

ԱՆԶՈՒԳՈՒԹԻՒՆ, գ. 1. Աննմանութիւն, անհաւասարութիւն։ 2. Անմիաբանութիւն (զուգութիւն չունենալը)։ 3. տե՛ս ԱՆԶՈՒԳԱԿՑՈՒԹԻՒՆ։

ԱՆԶՐԱԽ, ԱՆԶՐԱԽԱԿԱՆ, ա. Անվախճան, անսպառ, անբաւ։

ԱՆՁՐԱՒԱՊԷՍ, մ. Անսպառաբար, անընդհատ:

ԱՆՁՐԱՒԵԼԻ, տե՛ս ԱՆՁՐԱՒ:

ԱՆՁՐԿՈՂ, ա. Անաչառ, արդարամիտ:

ԱՆՁՕՐ, ԱՆՁՕՐԱԿԱՆ, ա. Տզօր, անոյժ, տկար:

ԱՆՁՕՐԱՆԱԼ, չբ. Տկարանալ:

ԱՆՁՕՐԱՑՈՒՑԱՆԵԼ, պբ. Տկարացուցանել:

ԱՆՁՕՐԵԼԻ, ա. Անընդդիմակայ, անյաղթելի:

ԱՆՁՕՐՈՒԹԻՒՆ, գ. Անկարութիւն, տկարութիւն:

ԱՆԷ, ա. գ. Անգոյ, չգոյ:

ԱՆԷԱԿ, տե՛ս ԱՆԷ:

ԱՆԷԾՔ, գ. Նզովք:

ԱՆԷՈՒԹԻՒՆ, գ. Չէութիւն, անգոյութիւն, ոչէութիւն, ոչեղութիւն, ոչինչ, ոչէ:

ԱՆԷՋ, ա. Անկործան (վայր չիջնող, չընկնող):

ԱՆԸՂՁԱԼԻ, ա. Անըղձանալի (ոչ ըղձալի՝ ոչ բաղձալի):

ԱՆԸՂՁԱՆԱԼԻ, տե՛ս ԱՆԸՂՁԱԼԻ:

ԱՆԸՄԲԵՐ, ա. 1. Անհամբեր (չհամբերող): 2. Անտանելի, անհանդուրժելի:

ԱՆԸՄԲԵՐԵԼԻ, տե՛ս ԱՆԸՄԲԵՐ (2):

ԱՆԸՄԲԵՐՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ:

ԱՆԸՄԲՈՆ, ա. Անպատեհ, անպատշաճ, անյարմար, անդէպ:

ԱՆԸՄԲՈՆՈՒԹԻՒՆ, գ. Անպատեհութիւն, անպատշաճութիւն:

ԱՆԸՄԲՌՆԱԲԱՐ, տե՛ս ԱՆԸՄԲՌՆԱՊԷՍ:

ԱՆԸՄԲՌՆԱԿԱՆ, տե՛ս ԱՆԸՄԲՌՆԵԼԻ:

ԱՆԸՄԲՌՆԱՊԷՍ, մ. Անըմբռնաբար (անըմբռնելի լինելով):

ԱՆԸՄԲՌՆԵԼԻ, ա. 1. Անըմբռնական, անկալլի (չբռնվող): 2. Անհաս, անիմանալի:

ԱՆԸՄԲՌՆՈՒԹԻՒՆ, գ. Անհասութիւն (անըմբռնելի լինելը):

ԱՆԸՄՊԵԼԻ, ա. Անարբ:

ԱՆԸՆԴԴԻՄԱԲԱՆԵԼԻ, ա. Անդիմաճառելի:

ԱՆԸՆԴԴԻՄԱԴՐԵԼԻ, ԱՆԸՆԴԴԻՄԱԿ, ա. Անհակառակելի (որին չի կարելի դիմադրել՝ հակառակել):

ԱՆԸՆԴԴԻՄԱԿԱՑ, ԱՆԸՆԴԴԻՄԱԿԱՑ, տե՛ս ԱՆԸՆԴԴԻՄԱԴՐԵԼԻ:

ԱՆԸՆԴԵԼ, ա. 1. Անվարժ, անփորձ, անտեղեակ: 2. Անսովոր, խորթ, օտարոտի, անծանօթ, նոր: 3. Անընտանի, վայրենի: 4. Դժնի, դաժան, անգութ, անագորոյն:

ԱՆԸՆԴԵԼԱԿԱՆ, տե՛ս ԱՆԸՆԴԵԼ (2):

ԱՆԸՆԴԵՐԿՈՒԱՆԱԼԻ, տե՛ս ԱՆՅԵՐԿՈՒԱՆԱԼԻ:

ԱՆԸՆԴՀԱՏ, տե՛ս ԱՆԴԱԴԱՐ:

ԱՆԸՆԴՀԱՐ, ա. Անմիաւորելի (չմիացող), անկցորդ:

ԱՆԸՆԴՄԻՋԱԲԱՐ, մ. 1. Անմիջաբար, անմիջակաբար: 2. Անընդհատ, անդադար:

ԱՆԸՆԴՄԻՋԵԼԻ, ա. 1. Անբաժանելի, անխախտելի: 2. մ. Անմիջաբար, անընդմիջաբար: 3. Անընդհատ, անդադար:

ԱՆԸՆԴՈՍՏ, ա. մ. 1. Անչարժ, հանդարտ, անխռով: 2. Ծոյլ, պղերգ:

ԱՆԸՆԴՈՒՆԱԿ, ա. 1. Անընդունական (չընդունող, իր մէջ չկրող): 2. Անընդունելի (չընդունուած): 3. Անբովանդակելի, անպարունակելի:

ԱՆԸՆԴՈՒՆԱԿԱՆ, տե՛ս ԱՆԸՆԴՈՒՆԱԿ (1):

ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ, ա. Անընկալ:

ԱՆԸՆԿԱԼ, տե՛ս ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ:

ԱՆԸՆԿԵՐ, ա. 1. Անընկերելի, անբարեկամ (ընկեր չունեցող): 2. մ. Միայնակ (առանց ընկերի):

ԱՆԸՆԿԵՐԵԼԻ, տե՛ս ԱՆԸՆԿԵՐ (1):

ԱՆԸՆԿՂՄԵԼԻ, ա. Անսուզան:

ԱՆԸՆԿՃԵԼԻ, ա. մ. Անխոնարհ, անկրկնելի:

ԱՆԸՆՁԱՆԱԼ, չբ. Աղքատանալ, չքաւորել, տնանկանալ:

ԱՆԸՆՁԱՍԷՐ, ա. Ընչատեաց, անընչաստացիչ:

ԱՆԸՆՁԱՍՏԱՑԻՉ, տե՛ս ԱՆԸՆՁԱՍԷՐ:

ԱՆԸՆՁԱՒԷՏ, ա. Աղքատ, տնանկ, չքաւոր:

ԱՆԸՆՁՈՒԹԻՒՆ, գ. Չքաւորութիւն, աղքատութիւն, տնանկութիւն:

ԱՆԸՆՏԱՆԵԲԱՐ, մ. Անընտանեպէս (ոչ ընտանեբար):

ԱՆԸՆՏԱՆԵՊԷՍ, տե՛ս ԱՆԸՆՏԱՆԵԲԱՐ:

ԱՆԸՆՏԱՆԻ, ա. 1. Օտար (ոչ ընտանի): 2. Անընդել, վայրենի:

ԱՆԸՆՏԵԼ, տե՛ս ԱՆԸՆԴԵԼ:

ԱՆԸՆՏԻՐ, ա. Անպէտ, անպիտան:

ԱՆԸՆՏՐԱԲԱՐ, մ. Անընտրողաբար, անխտրաբար, անխորհրդաբար:

ԱՆԸՆՏՐՈՂ, ա. Անխոհեմ, տգէտ (ընտրութիւն չանող):

ԱՆԸՆՏՐՈՂԱԲԱՐ, տե՛ս ԱՆԸՆՏՐԱԲԱՐ:

ԱՆԸՆՏՐՈՂԱԿԱՆ, տե՛ս ԱՆԸՆՏՐՈՂ:

ԱՆԸՆՏՐՈՂՈՒԹԻՒՆ, գ. Անխոհեմութիւն, անխելութիւն, տգիտութիւն (ընտրութիւն անելու անկարողութիւն):

ԱՆԸՍՏԳԻՒՏ, ԱՆԸՍՏԳՏԱՆԵԼԻ, ա. Անթերի, կատարեալ, անպարսաւելի:

ԱՆԸՍՏԵՐԻՒՐ, ԱՆԸՍՏԵՐԻՒՐԱԿԱՆ, ԱՆԸՍՏԵՐԻՒՐՈՂ, ա. Անխոտոր, անսխալ, ուղիղ:

ԱՆԹ, տե՛ս ԱՆՈՒԹ:

ԱՆԹԱԽԱՆՁԵԼԻ, ա. Անտրտում:

ԱՆԹԱՆԻ, տե՛ս ԹՇՐԻՆ:

ԱՆԹԱՌԱՄ, ԱՆԹԱՌԱՄԱԿԱՆ, ԱՆԹԱՌԱՄԵԼԻ, ա. մ. 1. Անթարշամ, անթարշամելի, անխամրելի: 2. Անեղծ, մշտական:

ԱՆԹԱՐԹԱՓ, ա. մ. 1. Անքթիթ: 2. Անսայթաք:

ԱՆԹԱՐՇԱՄ, ԱՆԹԱՐՇԱՄԵԼԻ, տե՛ս ԱՆԹԱՌԱՄ (1):

ԱՆԹԱՑ, ա. Անթրիջ, անխոնաւ, անտամուկ:

ԱՆԹԱՒԱԼ, ա. Անհոլով, անշարժ:

ԱՆԹԵՂ, գ. Մոխիր, կրակամոխիր (կրակախառն մոխրակոյտ):

ԱՆԹԵՐԱՆԱԼԻ, ա. մ. 1. Անպակաս, անսպառ: 2. Անարատ: 3. Անընդհատ:

ԱՆԹԵՐԻ, ա. մ. 1. Կատարեալ: 2. Ամբողջ, ամբողջական: 3. Աննուազ, անպակաս, անսպառ:

ԱՆԹԵՐՈՒԹԻՒՆ, գ. Կատարելութիւն (անթերի լինելը):

ԱՆԹԻՀԻՒՊԱՏՈՍ կամ ԱՆԹԻՊԱՏՈՍ, գ. Փոխանակ բդեշխի:

ԱՆԹԻՒ, ա. 1. Անթուելի, անհամար, անհաշիւ: 2. Անթուական, անժամանակ:

ԱՆԹԻՒՐ, ԱՆԹԻՒՐԵԼԻ, ա. Անշեղ, ուղիղ, անվրէպ:

ԱՆԹԼՓԱՏ, ա. Այլազգի (ոչ հրեայ):

ԱՆԹՇՆԱՄԱՆԵԼԻ, ա. Անպարսաւ, անըստգիւտ:

ԱՆԹՈՂ, ԱՆԹՈՂԼԻ, ա. Աններելի, անքաւելի:

ԱՆԹՈՅԼ, ա. Պինդ, հաստատուն, անթուլանալի:

ԱՆԹՈՅՆ, ա. Ապաթոյն:

ԱՆԹՈՒԱԿԱՆ, ԱՆԹՈՒԵԼԻ, տե՛ս ԱՆԹԻՒ:

ԱՆԹՈՒԼԱՆԱԼԻ, տե՛ս ԱՆԹՈՅԼ:

ԱՆԹՈՒԼՈՒԹԻՒՆ, գ. Պնդութիւն, հաստատութիւն (անթոյլ՝ անթուլանալի լինելը):

ԱՆԹՐԻՋ, տե՛ս ԱՆԹԱՑ:

ԱՆԺԱՄ, ա. Անժամանակ, տարաժամ, ապաժամ:

ԱՆԺԱՄԱՆԱԿ, ա. 1. Մշտնջենաւոր: 2. Տարաժամ, ապաժամ, անժամ: 3. մ. Անժամանակաբար:

ԱՆԺԱՄԱՆԱԿԱԲԱՐ, մ. 1. Յաւէտաբար, յաւիտեանս: 2. Անմիջաբար: 3. Տարաժամ, անժամ:

ԱՆԺԱՄԱՆԱԿԱԿԱՆ, տե՛ս ԱՆԺԱՄԱՆԱԿ:
ԱՆԺԱՄԱՆԱԿԱՊԷՍ, տե՛ս ԱՆԺԱՄԱՆԱԿԱԲԱՐ:
ԱՆԺԱՄԱՆԱԿԱՒՈՐ, ԱՆԺԱՄԱՆԱԿԵԱՑ, ԱՆԺԱՄԱՆԱԿԵԱՆ, տե՛ս ԱՆԺԱՄԱՆԱԿ:
ԱՆԺԱՌԱՆԳ, ա. Անզաւակ, անորդի, մանկազրաւ:
ԱՆԺՈՂՈՎ, ա. մ. Անկարգ, խառնակ:
ԱՆԺՈՅԺ, ա. 1. Անհամբեր: 2. Անժուժկալ, զեղխ, ցոփ:
ԱՆԺՈՒԺԱԲԱՐ, տե՛ս ԱՆԺՈՒԺԿԱԼԱԲԱՐ:
ԱՆԺՈՒԺԱԼԻ, տե՛ս ԱՆԺՈՒԺԵԼԻ:
ԱՆԺՈՒԺԱՆԱԼ, չբ. Անժուժել, անժուժկալել (անժոյժ դառնալ, չհամբերել):
ԱՆԺՈՒԺԵԼ (իմ), տե՛ս ԱՆԺՈՒԺԱՆԱԼ:
ԱՆԺՈՒԺԵԼԻ, ա. Անհանդուրժելի, անտանելի:
ԱՆԺՈՒԺԿԱԼ, ա. Անժոյժ (ոչ ժուժկալ):
ԱՆԺՈՒԺԿԱԼԱԲԱՐ, մ. Անժուժաբար (անժոյժ՝ անժուժկալ կերպով):
ԱՆԺՈՒԺԿԱԼԵԼ, տե՛ս ԱՆԺՈՒԺԱՆԱԼ:
ԱՆԺՈՒԺԿԱԼԻ, տե՛ս ԱՆԺՈՒԺԵԼԻ:
ԱՆԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԺՈՒԺՈՒԹԻՒՆ:
ԱՆԺՈՒԺՈՒԹԻՒՆ, գ. Անժուժկալութիւն (անժոյժ՝ անժուժկալ լինելը):
ԱՆԻԾԱԲԵՐ, ա. Անիծահրաւիրակ (անէծք բերող):
ԱՆԻԾԱԴՐԱԿԱՆ, տե՛ս ԱՆԻԾԱՊԱՐՏ:
ԱՆԻԾԱԴՐՈՒԹԻՒՆ, գ. Անէծք (անէծքի տակ դնելը):
ԱՆԻԾԱՀՐԱՒԻՐԱԿ, տե՛ս ԱՆԻԾԱԲԵՐ:
ԱՆԻԾԱՆԵԼ, նբ. Անիծել, նզովել:
ԱՆԻԾԱՆԵԼԻ, ա. Անիծիչ (անիծող):
ԱՆԻԾԱՊԱՐՏ, ա. Անիծադրական (անէծքի դատապարտուած):
ԱՆԻԾԵԼ, տե՛ս ԱՆԻԾԱՆԵԼ:
ԱՆԻԾԻՉ, տե՛ս ԱՆԻԾԱՆԵԼԻ:
ԱՆԻՂՁ, ա. Անտենչիկ:
ԱՆԻՄԱՅ, ա. Անիմաց, անմիտ, տխմար:
ԱՆԻՄԱՆԱԼԻ, ա. 1. Անըմբռնելի, անհասանելի: 2. Անծանօթ, անյայտ:
ԱՆԻՄԱՍՏ, ա. 1. Անխոհեմ, անմիտ, տգէտ: 2. Անբան, անզգայ: 3. Յիմարական (ոչ խելացի):
- ՅԱՆԻՄԱՍՏՍ, մ. Անիմացաբար, անզգայաբար:
ԱՆԻՄԱՍՏԱԲԱՐ, մ. Անմտաբար, տգիտաբար:
ԱՆԻՄԱՍՏԱՍԷՐ, ա. Անիմաստասիրելի (իմաստութիւն չսիրող):
ԱՆԻՄԱՍՏԱՍԻՐԵԼԻ, տե՛ս ԱՆԻՄԱՍՏԱՍԷՐ:
ԱՆԻՄԱՍՏՆԱԲԱՐ, տե՛ս ԱՆԻՄԱՍՏԱԲԱՐ:
ԱՆԻՄԱՍՏՆԱՆԱԼ, չբ. Անմտանալ:
ԱՆԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ, գ. Անխելութիւն, անմտութիւն, տգիտութիւն, անխոհեմութիւն:
ԱՆԻՄԱՍՏՈՒՆ, ա. Անիմաստ (ոչ իմաստուն):
ԱՆԻՄԱՑ, տե՛ս 1. ԱՆԻՄԱՅ: 2. ԱՆԻՄԱՆԱԼԻ (1):
ԱՆԻՄԱՑԱԲԱՐ, մ. Անզգայաբար, յանիմաստս:
ԱՆԻՄԱՑԱԿԱՆ, տե՛ս ԱՆԻՄԱՑ:
ԱՆԻՄԱՑՈՒԹԻՒՆ, գ. Անհասութիւն (անիմանալի՝ անհասանելի լինելը):
ԱՆԻՆՉ, ա. 1. Չքաւոր, աղքատ: 2. գ. Ոչնչութիւն, ոչինչ (ոչ մի ինչ):
ԱՆԻՇԽԱՆ, ա. 1. Ինքնիշխան, ինքնատէր, անկախ: 2. Անառաջնորդ, անտերունչ: 3. Անզօր (ոչ ինքնիշխան):
ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ, գ. Անտերնչութիւն:
ԱՆԻՐԱԶԵԿ, ա. Անտեղեակ:
ԱՆԻՐԱՆ, ա. Անմարմին, անկերպարան, անձև:
ԱՆԻՐԱՒ, ա. Անարդար, անօրէն:
- ՅԱՆԻՐԱՒԻ, տե՛ս ԱՆԻՐԱՒԱԲԱՐ:
ԱՆԻՐԱՒԱԲԱՐ, մ. Անիրաւապէս, անիրաւութեամբ, յանիրաւի:

ԱՆԻՐԱՒԱՆԱԼ, չբ. Անիրաւել (անիրաւ վարուել):
ԱՆԻՐԱՒԱՆՔ, տե՛ս ԱՆԻՐԱՒՈՒԹԻՒՆ:
ԱՆԻՐԱՒԱՊԷՍ, տե՛ս ԱՆԻՐԱՒԱԲԱՐ:
ԱՆԻՐԱՒԵԼ (իմ), տե՛ս ԱՆԻՐԱՒԱՆԱԼ:
ԱՆԻՐԱՒՈՒԹԻՒՆ, գ. Անօրէնութիւն, անիրաւանք:
– ԱՆԻՐԱՒՈՒԹԵԱՄԲ, տե՛ս ԱՆԻՐԱՒԱԲԱՐ:
ԱՆԻՒ, գ. Գեղգեղ, կունդն, ճախարակ:
ԱՆԼԱՅՆ, ԱՆԼԱՅՆԱԿԱՆ, ա. Նեղ, անձուկ:
ԱՆԼԱՒ, ա. Վատ (ոչ լաւ):
ԱՆԼԻՆԵԼԻ, ա. 1. Անհնար, անհնարին: 2. Անեղ, անծին, ինքնագոյ:
ԱՆԼԻՆԵԼՈՒԹԻՒՆ, գ. Անգոյութիւն, չգոյութիւն, անեղութիւն:
ԱՆԼԻՈՒԹԻՒՆ, գ. Թերութիւն, անկատարութիւն, թերակատարութիւն (լրիւ չլինելը):
ԱՆԼԻՐ, ա. 1. Անլցուցանելի: 2. փխբ. Անյագ (չկշտացող):
ԱՆԼԼՈՒԿ, ա. մ. Անչարչար (առանց լլկուելու՝ չարչարուելու):
ԱՆԼՈՅԾ, ա. 1. Անխախտ, անեղծ, ամուր, հաստատուն, մշտնջենաւոր: 2. Անմեկնելի (որ չի կարելի մեկնել՝ բացատրել):
ԱՆԼՈՅՍ, ա. 1. Անլուսաւոր, աննշոյլ, խաւար: 2. Անկնունք (չմկրտուած):
ԱՆԼՈՒ, ա. Անլսող, անլուր, անհլու, անհնազանդ:
ԱՆԼՈՒԱՅ, ա. Անլուաց, անմաքուր:
ԱՆԼՈՒԱՑ, տե՛ս ԱՆԼՈՒԱՅ:
ԱՆԼՈՒԾԱՆԵԼԻ, տե՛ս ԱՆԼՈՅԾ:
ԱՆԼՈՒՌ, ա. Անլռելի (չլռող):
ԱՆԼՈՒՍԱՒՈՐ, տե՛ս ԱՆԼՈՅՍ:
ԱՆԼՈՒՐ, ա. 1. Խուլ (չլսող): 2. տե՛ս ԱՆԼՈՒ: 3. Անլսելի, անիմանալի: 4. Զլուեալ, անպատմելի, անպատում:
ԱՆԼՌԱԲԱՐ, մ. Անլռելի, անդադար, անընդհատ:
ԱՆԼՌԵԼԻ, ա. 1. տե՛ս ԱՆԼՈՒՌ: 2. մ. տե՛ս ԱՆԼՌԱԲԱՐ:
ԱՆԼՍԵԼԻ, ա. 1. տե՛ս ԱՆԼՈՒՐ (3): 2. տե՛ս ԱՆԼՈՒ:
ԱՆԼՍՈՂ, տե՛ս ԱՆԼՈՒ:
ԱՆԼՍՈՂՈՒԹԻՒՆ, գ. Անհնազանդութիւն (անլսող լինելը):
ԱՆԼՑՈՒՑԱՆԵԼԻ, տե՛ս ԱՆԼԻՐ (1):
ԱՆԽԱԲ, ա. 1. Անխաբելի, անպատրելի, անպատիր: 2. Վստահ, յապահով, անքոյթ: 3. Ճշմարիտ, անաչառ:
ԱՆԽԱԲԵԲԱՅ, ա. Անսուտ (չխաբող):
ԱՆԽԱԲԵԼԻ, ա. 1. տե՛ս ԱՆԽԱԲ: 2. Աննենգ, անխարդախ: 3. Հաւաստի, անկասկածելի:
ԱՆԽԱԽՈՒՏ, ԱՆԽԱԽՏԱԿԱՆ, ԱՆԽԱԽՏԵԼԻ, ա. Անքակտելի, հաստատուն, անդրդուելի, ամուր:
ԱՆԽԱՂԱՂԱՍԷՐ, ա. Խռովասէր, անհանդարտ (ոչ խաղաղասէր):
ԱՆԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, գ. Խառնակութիւն, խռովութիւն:
ԱՆԽԱՂԱՑ, ա. Անշարժ, անփոփոխ (տեղից չշարժուող):
ԱՆԽԱՄՐ, ԱՆԽԱՄՐԵԼԻ, տե՛ս ԱՆԹԱՌԱՄ (1):
ԱՆԽԱՅԵԼ, չբ. 1. Խնայել, գթալ, խղճալ: 2. Զգուշանալ:
ԱՆԽԱՅԵՑՈՒՑԱՆԵԼ, պբ. Զգուշացուցանել (զերծ պահել):
ԱՆԽԱՅՈՒԹԻՒՆ, գ. Զգուշութիւն (զգուշանալը):
ԱՆԽԱՅՏԱՌԱԿԵԼԻ, ա. Պարզերես (չխայտառակուած):
ԱՆԽԱՆԳԱՐ, ա. Անեղծ (չխանգարուած):
ԱՆԽԱՌՆ, ա. 1. Անխառնակ, անխառնուած, յստակ, զուտ, մաքուր: 2. Անխառնելի, անշփոթ: 3. Անժուժկալ (ոչ չափաւոր):
ԱՆԽԱՌՆԱԲԱՐ, մ. Անշփոթաբար:
ԱՆԽԱՌՆԱԿ, տե՛ս ԱՆԽԱՌՆ (1, 3):
ԱՆԽԱՌՆԵԼԻ, տե՛ս ԱՆԽԱՌՆ (1, 2):
ԱՆԽԱՌՆՈՒԱԾ, տե՛ս ԱՆԽԱՌՆ (1):

ԱՆԽԱՌՆՈՒԹԻՒՆ, գ. 1. Մաքրութիւն (անխառն՝ մաքուր՝ զուտ լինելը): 2. Միայնութիւն, առանձնականութիւն: 3. Անժուժկալութիւն:
ԱՆԽԱՐԴԱԽ, ա. մ. 1. Աննենգ, անկեղծ, բարեմիտ: 2. Մաքուր, անարատ:
ԱՆԽԱՐԽԱՐ, ա. Անխախուտ, հաստատուն, ամուր (ոչ խարխուլ):
ԱՆԽԱՐՇ, ա. Հում (չխաշած):
ԱՆԽԱՒԱՐ, ա. Լուսաւոր:
ԱՆԽԱՓԱՆ, ա. մ. 1. Անարգել, անխափանական: 2. Անյապաղ, իսկոյն, փութով:
ԱՆԽԱՓԱՆԱԿԱՆ, տե՛ս ԱՆԽԱՓԱՆ (1):
ԱՆԽԵԼՈՒԹԻՒՆ, գ. Յիմարութիւն (անխելք լինելը):
ԱՆԽԵՌ, ա. Անխռով, հանդարտ:
ԱՆԽԵՌՈՒԹԻՒՆ, գ. Հանդարտութիւն (անխեռ՝ խելօք լինելը):
ԱՆԽԶԵԼԻ, ա. 1. Անխուզ: 2. Անբաժանելի, անքակտելի, անխախտելի, հաստատուն: 3. մ. Հաստատապէս, հաստատ, անվրէպ, անսխալ:
ԱՆԽԶՈՒԹԻՒՆ, գ. Անառակութիւն, վաւաշոտութիւն (անխուզ՝ վաւաշոտ լինելը):
ԱՆԽԷԹ, ա. մ. 1. Անկասկած (չկասկածող, վստահող), միամիտ, պարզ: 2. Անկասկած, յապահով, համարձակ:
ԱՆԽԻՂՃ, ա. 1. Անպարսաւելի, անարատ (խիղճը մաքուր): 2. Անթերի, կատարեալ, անտխեղծ: 3. Անգութ (խիղճ՝ խղճմտանք չունեցող): 4. մ. Անխղճաբար (առանց խղճի խայթի):
ԱՆԽԼԱՆԱԼ, տե՛ս ԶԱՆԽԼԱՆԱԼ:
ԱՆԽԼԻՐՏ, ա. 1. Անխլրտելի (չշարժուող): 2. փխբ. Անմշակելի, կուսական (հող):
ԱՆԽԼՐՏԵԼԻ, տե՛ս ԱՆԽԼԻՐՏ (1):
ԱՆԽՂՃԱԲԱՐ, մ. Անգթաբար:
ԱՆԽՂՃՄՏՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԳԹՈՒԹԻՒՆ:
ԱՆԽՄՈՐ, ա. Բաղարջ (չխմորուած):
ԱՆԽՆԱՄ, ա. 1. Անհոգող (խնամք չունեցող), անտած: 2. Անողորմ, անխնայ: 3. մ. Անպէտս (առանց խնամքի):
ԱՆԽՆԱՄԱԲԱՐ, տե՛ս ԱՆԽՆԱՅԱԲԱՐ:
ԱՆԽՆԱՄԱԿԱՆ, տե՛ս ԱՆԽՆԱՄ:
ԱՆԽՆԱՄԱՐԿԵԼԻ, ա. Անբուժելի (չըդարմանուող):
ԱՆԽՆԱՄՈՒԹԻՒՆ, գ. Անտածութիւն (անխնամ լինելը՝ թողնելը):
ԱՆԽՆԱՅ, ա. 1. Անողորմ, անխիղճ: 2. Լիուլի, առատ: 3. Անխնամ, անտած: 4. մ. տե՛ս ԱՆԽՆԱՅԱԲԱՐ:
- ՅԱՆԽՆԱՅ, տե՛ս ԱՆԽՆԱՅԱԲԱՐ:
ԱՆԽՆԱՅԱԲԱՐ, մ. Անխնամաբար (անխնայ կերպով):
ԱՆԽՆԱՅՈՒԹԻՒՆ, գ. Անգթութիւն, անողորմութիւն:
ԱՆԽՈՀ, ա. Անմտառու (չխորհող):
ԱՆԽՈՀԱԿԱՆԱՊԷՍ, մ. Անխորհրդաբար (ոչ խոհական կերպով):
ԱՆԽՈՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ:
ԱՆԽՈՀԵՄ, ա. Անողջախոհ, անխորհուրդ, անմիտ (ոչ խոհեմ):
ԱՆԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ, ԱՆԽՈՀՈՒԹԻՒՆ, գ. Անխորհրդականութիւն, անխորհրդութիւն, անմտութիւն, անխելութիւն:
ԱՆԽՈՅԶ, ա. 1. Անխուզ, անխուզելի, անքնին: 2. Անխզելի, անխուզ:
ԱՆԽՈՆԱՐՀ, ա. Անգայ, անխոնարհելի, անընկճելի:
ԱՆԽՈՆԱՐՀԵԼԻ, տե՛ս ԱՆԽՈՆԱՐՀ:
ԱՆԽՈՆԱՐՀԵՑՈՒՑԱՆԵԼԻ, ա. Անկորացուցանելի:
ԱՆԽՈՆԱՒ, ա. Անթաց, անտամուկ, չոր:
ԱՆԽՈՆՋ, ա. Անվաստակ, անաշխատ (չյոգնող), անձանձիր, մշտաջան, ճգնախոնջ:
ԱՆԽՈՇՏԱՆԿ, ա. Անխոշտանկելի, անչարչարանք, անչարչարելի, փխբ. անպարսաւ, անմեղադրելի:

*ԱՆԽՈՇՏԱՆԿԵԼԻ, տե՛ս ԱՆԽՈՇՏԱՆԿ:*
*ԱՆԽՈՍՏՈՎԱՆ, ա. մ. 1. (եկեղց.) Անխոստովանող: 2. Անզղջաբար (առանց զղջալու):*
*ԱՆԽՈՍՏՈՎԱՆՈՂ, ա. 1. տե՛ս ԱՆԽՈՍՏՈՎԱՆ (1): 2. Անհաւատ:*
*ԱՆԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ, գ. Անզղջութիւն, անապաշխարութիւն:*
*ԱՆԽՈՏԱՆ, ա. 1. Պիտանի (ոչ անպէտք): 2. փխբ. Ընտիր, պատուական: 3. փխբ. Անխարդախ, աննենգ, ազնիւ:*
*ԱՆԽՈՏՈՐ, ա. 1. Անշեղ, ուղիղ: 2. մ. Անշեղաբար, ուղղակի:*
*ԱՆԽՈՏՈՐԱԲԱՐ, ԱՆԽՈՏՈՐԱՊԷՍ, տե՛ս ԱՆԽՈՏՈՐ (2):*
*ԱՆԽՈՏՈՐԵԼԻ, տե՛ս ԱՆԽՈՏՈՐ:*
*ԱՆԽՈՏՈՐՆԱԲԱՐ, տե՛ս ԱՆԽՈՏՈՐ (2):*
*ԱՆԽՈՏՈՐՆԱԿ, տե՛ս ԱՆԽՈՏՈՐ:*
*ԱՆԽՈՏՈՐՆՈՒԹԻՒՆ, գ. Անշեղութիւն (անշեղ ուղղութիւն):*
*ԱՆԽՈՐԱՄԱՆԿ, ա. Աննենգ, անկեղծ, անխարդախ, միամիտ:*
*ԱՆԽՈՐՀԵԼԻ, ա. Անխորհուրդ (լաւ չմտածուած):*
*ԱՆԽՈՐՀՈՒՐԴ, ա. 1. Անխոհեմ: 2. Անիմաստ, անմիտ: 3. Անխորհելի, անիմանալի: 4. մ. տե՛ս ԱՆԽՈՐՀՐԴԱԲԱՐ:*
*ԱՆԽՈՐՀՐԴԱԲԱՐ, մ. Անխորհուրդ, անքննաբար, անմտաբար (առանց խորհելու):*
*ԱՆԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ, գ. Անխորհրդութիւն (անխորհուրդ՝ չմտածուած լինելը):*
*ԱՆԽՈՐՀՐԴԱԿԱՆ, ա. Անմիտ, անտեղի (խորհուրդ չունեցող):*
*ԱՆԽՈՐՀՐԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԽՈՐՀՐԴՈՒԹԻՒՆ:*
*ԱՆԽՈՐՀՐԴԱՎԱՐԺ, ա. Անհմուտ:*
*ԱՆԽՈՐՀՐԴՈՒԹԻՒՆ, գ. Անխորհրդականութիւն, անխոհեմութիւն:*
*ԱՆԽՈՐՇ, ա. մ. Անխորշելի, անպատկառ:*
*ԱՆԽՈՐՇԱԲԱՐ, մ. Անպատկառաբար:*
*ԱՆԽՈՐՇԵԼԻ, տե՛ս ԱՆԽՈՐՇ:*
*ԱՆԽՈՐՏԱԿԵԼԻ, ա. Անփշրելի:*
*ԱՆԽՈՑ, ա. մ. Անկեղ, անվէր:*
*ԱՆԽՈՑՈՏԵԼԻ, ա. մ. Անվիրաւորելի:*
*ԱՆԽՈՒԶ[1], ա. Անխուզելի, անյոյզ, անհետազօտելի, անքննելի, անքնին:*
*ԱՆԽՈՒԶ[2], ա. 1. Անխզելի: 2. Ցանկասէր, վաւաշոտ, անառակ:*
*ԱՆԽՈՒԶԱԲԱՐ, մ. 1. Անքննաբար: 2. Անխտիր:*
*ԱՆԽՈՒԶԵԼԻ, տե՛ս ԱՆԽՈՒԶ[1]:*
*ԱՆԽՈՒԼ, ա. Ամայի, անբնակ:*
*- ՅԱՆԽՈՒԼՍ, մ. Պատահմամբ (անսպասելի կերպով):*
*ԱՆԽՈՒՃԱՊ, տե՛ս ԱՆԽՌՈՎ:*
*ԱՆԽՈՒՄ, ա. Անարբ (չխմող՝ ոգելից ըմպելիք):*
*ԱՆԽՌՈՎ, ա. 1. Անխուճապ, անշփոթ, խաղաղ, անդորր, հանդարտ: 2. մ. Անխռովաբար, հանդարտօրէն:*
*ԱՆԽՌՈՎԱԲԱՐ, տե՛ս ԱՆԽՌՈՎ (2):*
*ԱՆԽՌՈՎՈՒԹԻՒՆ, գ. Խաղաղութիւն, հանդարտութիւն, անդորրութիւն:*
*ԱՆԽՏԻՐ, ա. 1. Անաչառ (խտրութիւն չանող): 2. Զգուշողական: 3. Զանազան, պէսպէս, տարբեր: 4. մ. տե՛ս ԱՆԽՏԻՐՍ:*
*- ԱՆԽՏԻՐ ԼԻՆԵԼ. Զգուշանալ:*
*ԱՆԽՏԻՐՍ, ԱՆԽՏՐԱԲԱՐ, ԱՆԽՏՐԱՊԷՍ, մ. Անզանազանաբար (անխտիր կերպով):*
*ԱՆԽՏՐՈՑ, ա. մ. Անանջրպետ, անարգել, անխափան:*
*ԱՆԽՏՐՈՒԹԻՒՆ, գ. Անզանազանութիւն:*
*ԱՆԽՐԱՏ, ա. Անուղղելի, անհրահանգ, անդաստիարակ, անկիրթ, անսաստ:*
*ԱՆԽՐԱՏԱԲԱՐ, մ. Անխրատապէս, տըխմարաբար, անմտաբար:*
*ԱՆԽՐԱՏԱԿԱՆ, տե՛ս ԱՆԽՐԱՏ:*
*ԱՆԽՐԱՏԱՊԷՍ, տե՛ս ԱՆԽՐԱՏԱԲԱՐ:*
*ԱՆԽՕԹԱՑԵԱԼ, տե՛ս ԱՌՈՂՋ:*
*ԱՆԽՕՍ, ա. 1. Անխօսուն, համր, անբան: 2. Լուռ, լռիկ, լռակաց: 3. Անասելի, անպատմելի: 4. Կոյս (չնչանուած): 5. մ. Լռելեայն (լռութեամբ):*

ԱՆԽՕՍԵԼԻ, տե՛ս ԱՆԽՕՍ (3):

ԱՆԽՕՍՈՒԹԻՒՆ, գ. Համրութիւն, անբանութիւն (անխօս լինելը):

ԱՆԽՕՍՈՒՆ, տե՛ս ԱՆԽՕՍ (1):

ԱՆԾԱԳԵԼԻ, ա. Անլոյս, մութ:

ԱՆԾԱԽ, ա. Անսպառ, աննուազ, անպակաս:

ԱՆԾԱԽԱԲԱՐ, մ. Անծախապէս, անսպառաբար, աննուազաբար:

ԱՆԾԱԽԱԿԱՆ, տե՛ս ԱՆԾԱԽ:

ԱՆԾԱԽԱՊԷՍ, տե՛ս ԱՆԾԱԽԱԲԱՐ:

ԱՆԾԱԽԵԼԻ, տե՛ս ԱՆԾԱԽ:

ԱՆԾԱԽՈՒԹԻՒՆ, գ. Անսպառութիւն, աննուազութիւն, անհատութիւն:

- ԱՆԾԱԽՈՒԹԵԱՄԲ, տե՛ս ԱՆԾԱԽԱԲԱՐ:

ԱՆԾԱԾԿԱԲԱՐ, մ. Անծածկապէս, անթաքնաբար, յայտնապէս:

ԱՆԾԱԾԿԱՊԷՍ, տե՛ս ԱՆԾԱԾԿԱԲԱՐ:

ԱՆԾԱԾԿԵԼԻ, տե՛ս ԱՆԾԱԾՈՒԿ:

ԱՆԾԱԾԿՈՅԹ, ա. Մերկ, բաց (ծածկոյթ չունեցող):

ԱՆԾԱԾՈՒԿ, ա. 1. Ակներև (ոչ ծածուկ): 2. մ. տե՛ս ԱՆԾԱԾԿԱԲԱՐ:

ԱՆԾԱՄ, ա. Անկաս (չծամուող):

ԱՆԾԱՅՐ, ԱՆԾԱՅՐԵՆԻ, ա. Անեզր, անսահման:

ԱՆԾԱՆ, ա. Անծանօթ, անյայտ, անճանաչելի, անիմանալի:

ԱՆԾԱՆԱԿ, ա. Անխայտառակելի, անարատ:

ԱՆԾԱՆԱԿՈՒԹԻՒՆ, գ. Անարատութիւն:

ԱՆԾԱՆՐ, ա. Թեթև (ոչ ծանր):

ԱՆԾԱՆՐԱՊԷՍ, մ. Թեթևաբար, թեթևակի:

ԱՆԾԱՆՕԹ, ա. 1. Անտեղեակ, անգէտ: 2. Օտար, անյայտ: 3. Անճանաչ (չճանաչուած): 4. Անիմանալի, անհաս:

ԱՆԾԱՆՕԹԱԲԱՐ, մ. Անծանօթապէս (իբրև անծանօթ՝ օտար):

ԱՆԾԱՆՕԹԱՊԷՍ, տե՛ս ԱՆԾԱՆՕԹԱԲԱՐ:

ԱՆԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ, գ. 1. Անտեղեկութիւն, անգիտութիւն: 2. Անյայտնութիւն (չճանաչուած՝ անյայտ լինելը):

ԱՆԾԱՌԱՅ, ա. 1. Անսպասաւոր: 2. Ազատ (ոչ ծառայ):

ԱՆԾԱՐԱՒ, ԱՆԾԱՐԱՒԵԼԻ, ա. Զովացուցիչ (չծարաւեցնող):

ԱՆԾԵՐ, ԱՆԾԵՐԱԿԱՆ, տե՛ս ԱՆԾԵՐԱՆԱԼԻ:

ԱՆԾԵՐԱՆԱԼԻ, ա. 1. Անծերունի (չծերացող): 2. փխբ. Յաւէրժական, մշտնջենաւոր, յաւիտենական, անփոփոխ, անեղծ, անանց:

ԱՆԾԵՐՈՒՆԻ, տե՛ս ԱՆԾԵՐԱՆԱԼԻ:

ԱՆԾԻՆ, ա. 1. Անծնունդ, ամուլ: 2. նման. Անբեր, անպտուղ, անարդիւն: 3. Ինքնագոյ, անստեղծ, անեղ: 4. Վիժած (ժամանակին կամ կենդանի չծնուած):

ԱՆԾՄԱԿ, ա. Անստուեր, անաղօտ (ոչ մթին):

ԱՆԾՆԵԼՈՒԹԻՒՆ, գ. Անեղութիւն:

ԱՆԾՆՆԴԱԿԱՆ, տե՛ս ԱՆԾԻՆ (1, 2):

ԱՆԾՆՆԴՈՒԹԻՒՆ, ԱՆԾՆՈՒԹԻՒՆ, գ. Ամլութիւն:

ԱՆԾՆՈՒՆԴ, տե՛ս ԱՆԾԻՆ (1):

ԱՆԾՈՅԼ, ա. Փութակամ, գործունեայ, ջանասէր, ժիր:

ԱՆԾՈՒԼՈՒԹԻՒՆ, գ. Ջանասիրութիւն, ժրութիւն:

ԱՆԾՈՒՓ, տե՛ս ԱՆԱԼԷԿՈԾ:

ԱՆԿ[1], ա. Պատշաճաւոր, պատշաճ, վայելուչ, յարմար:

- ԱՆԿ Է, մբ. Պատշաճ է, վայել է, ի դէպ է:

ԱՆԿ[2], տե՛ս ԱՆԿԱԾ (1):

ԱՆԿԱԶԴՈՒՐԵԼԻ, տե՛ս ԱՆԲԺՇԿԱԿԱՆ:

ԱՆԿԱԶՄ, ա. 1. Անպատրաստ (ոչ պատրաստ): 2. Անձև (չձևաւորուած):

ԱՆԿԱԶՄՈՒԹԻՒՆ, գ. Անպատրաստութիւն:

ԱՆԿԱԼԼԻ, ա. Անըմբռնելի (չըմբռնուող), ազատ:
ԱՆԿԱԾ, ա. 1. Նուաստ, յետին, թշուառ: 2. գ. Կողոպուտ, աւար: 3. Գէշ, դի: 4. Ընդելուզուած, անկուած (ասեղնագործած իր): 5. Ոստայն:
ԱՆԿԱԾՈՒԹԻՒՆ, գ. Նուաստութիւն (արհամարհուած դրութիւն):
ԱՆԿԱԿՂԱՆԱԼԻ, ա. Անողոք, խիստ:
ԱՆԿԱՄԱԿՈՒԹԻՒՆ, գ. 1. Դժկամակութիւն, անկամութիւն, չկամութիւն: 2. Անգործութիւն, պարապութիւն, չկեցութիւն:
ԱՆԿԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. Անհաւանութիւն, հակառակութիւն (կամակից չլինելը):
ԱՆԿԱՄԱՒՈՐ, տե՛ս ԱԿԱՄԱՅ (1):
ԱՆԿԱՄՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԿԱՄԱԿՈՒԹԻՒՆ:
ԱՆԿԱՄՔ, ա. Թուլամորթ:
- ՅԱՆԿԱՄՍ, մ. Ակամայ:
ԱՆԿԱՅ, ԱՆԿԱՅԱԿԱՆ, ա. Չկայ, շարժուն (կանգ չառնող), փխբ. անհաստատ, անկայուն:
ԱՆԿԱՅՈՒՆ, ա. 1. Անկայ, չկայ, անհաստատուն, անտեւական, փոփոխական: 2. փխբ. Անցաւոր, չմնալի (ոչ մնայուն):
ԱՆԿԱՆ, գ. Սանդ (փոքրիկ):
ԱՆԿԱՆԱԲՈԹ, տե՛ս ԲԼԹԱԿ:
ԱՆԿԱՆԳՆԱԿԱՆ, տե՛ս ԱՆԿԱՆԳՆԵԼԻ:
ԱՆԿԱՆԳՆԵԼԻ, ա. Անկանգնական:
ԱՆԿԱՆԵԼ[1], նբ. Հիւսել:
ԱՆԿԱՆԵԼ[2] (իմ), չբ. 1. Ընկանել: 2. Վիճակել (բաժին ընկնել): 3. Ապաւինել, ապաստանել: 4. Ենթարկել: 5. Կախեալ կալ, ցածնուլ: 6. Մեռանել: 7. Թուլանալ, պակասել, նուազել, դադարել: 8. Դեգերել, պարապել, զբաղնուլ: 9. Յարձակել, ի վերայ հասանել: 10. Պատել, ծածկել: 11. Մեղանչել (մեղք՝ յանցանք գործել): 12. Մերձաւորել (օտար կնոջ հետ): 13. Բախել, ընդհարկանել, հակառակել, կռուել:
- ԱՆԿԱՆԵԼ Ի ՃԱՆԱՊԱՐՀ՝ ՅՈՒՂԻ՝ Ի ՋՈՒ. Ուղեւորել:
- ԱՆԿԱՆԵԼ Ի ՄԻՏՍ. Յիշել:
- ԱՆԿԱՆԵԼ Ի ՄՏԱՑ. Խելագարել, յիմարանալ:
- ԱՆԿԱՆԵԼ Ի ՍԻՐՏՍ, տե՛ս ԱՆԿԱՆԵԼ Ի ՄԻՏՍ:
ԱՆԿԱՆՈՆ, ա. Անկարգ, անիրաւ, անօրէն:
ԱՆԿԱՇԱՌ, տե՛ս ԱՆԿԱՇԱՌԱՌՈՒ:
ԱՆԿԱՇԱՌԱՌՈՒ, ա. Անկաշառ, փխբ. անաչառ, արդար:
ԱՆԿԱՊ, ա. Անսանձ, անժուժկալ:
ԱՆԿԱՊՈՒՏ, ԱՆԿԱՊՏԵԼԻ, ա. 1. Անկողոպտելի: 2. Անկորուստ, անեղծ: 3. մ. Անվնաս, յապահով, անվտանգ:
ԱՆԿԱՌՈՒՑԱԿԱՆ, տե՛ս ԱՆԿԱՌՉԵԼԻ:
ԱՆԿԱՌՉԵԼԻ, ա. Անկառուցական (չըկառչող, դէմ չառնող):
ԱՆԿԱՍ, տե՛ս ԱՆԾԱՄ:
ԱՆԿԱՍԿԱԾ, ա. 1. Անտարակոյս, անկեղակարծ, աներկբայ, աներկմիտ: 2. Անհոգ: 3. Յապահով, անվտանգ: 4. մ. Անկասկածաբար, յանկարծս:
- ՅԱՆԿԱՍԿԱԾԻ, ՅԱՆԿԱՍԿԱԾՍ, տե՛ս ԱՆԿԱՍԿԱԾ (4):
ԱՆԿԱՍԿԱԾԱԲԱՐ, տե՛ս ԱՆԿԱՍԿԱԾ (4):
ԱՆԿԱՍԿԱԾԱՒՈՐ, ԱՆԿԱՍԿԱԾԵԼԻ, տե՛ս ԱՆԿԱՍԿԱԾ:
ԱՆԿԱՍԿԱԾՈՒԹԻՒՆ, գ. Յապահովութիւն (անկասկած՝ յապահով լինելը):
ԱՆԿԱՏԱՐ, ա. 1. Թերի, պակասաւոր, թերակատար, կիսատ: 2. Անկատարելի: 3. Անաւարտ:
ԱՆԿԱՏԱՐԵԼԱԲԱՐ, մ. Անկատարելապէս (անկատար՝ թերի կերպով):
ԱՆԿԱՏԱՐԵԼԱՊԷՍ, տե՛ս ԱՆԿԱՏԱՐԵԼԱԲԱՐ:
ԱՆԿԱՏԱՐԵԼԻ, տե՛ս ԱՆԿԱՏԱՐ (2):
ԱՆԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆ, ԱՆԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ, գ. Թերութիւն (անկատար՝ թերի լինելը):

ԱՆԿԱՐ, ա. 1. Անույժ, անկարող, անզոր, տկար: 2. Անկարելի, անհնարին:

– ԱՆԿԱՐ Է, ԱՆԿԱՐԱՑՆ Է, ՅԱՆԿԱՐԱՑՆ Է, մբ. Անկարելի է, անհնարին է:

ԱՆԿԱՐԱԾԱԾԿԵԼԻ, ա. Անծածկելի:

ԱՆԿԱՐԱՆԱԼ, չբ. Անկարողանալ (անկարող դառնալ):

ԱՆԿԱՐԳ, ա. 1. Անպատշաճ, անտեղի, անիրաւ: 2. Խառնափնդոր, խառնակ: 3. Անսովոր (բնական կարգից դուրս): 4. մ. տե՛ս ԱՆԿԱՐԳԱԲԱՐ:

ԱՆԿԱՐԳԱԲԱՐ, մ. Անկարգապէս, խառնիխուռն:

ԱՆԿԱՐԳԱՊԷՍ, տե՛ս ԱՆԿԱՐԳԱԲԱՐ:

ԱՆԿԱՐԳԱՒՈՐ, տե՛ս ԱՆԿԱՐԳ:

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆ, գ. 1. Խառնակութիւն: 2. Անտեղութիւն, անպատշաճութիւն:

ԱՆԿԱՐԵԼԻ, ա. 1. Անհնարին, անհնարաւոր: 2. Անկարող, անզոր:

– ԱՆԿԱՐԵԼԻ Է, մբ. Անհնարին է:

ԱՆԿԱՐԵԿԱՆ, ա. Անկարիք, անկիր, անկիրընդունակ (կիրք չունեցող՝ չկրող), անախտ:

ԱՆԿԱՐԵԿԻՐ, ԱՆԿԱՐԵԿԻՑ, ա. Անցաւակից, անվշտակից, անգութ:

ԱՆԿԱՐԵԿՑՈՒԹԻՒՆ, գ. Անգթութիւն (չկարեկցելը):

ԱՆԿԱՐԵՒՈՐ, ա. Աւելորդ (ոչ կարեւոր):

ԱՆԿԱՐԻՔ, տե՛ս ԱՆԿԱՐԵԿԱՆ:

ԱՆԿԱՐԾ, ա. 1. Անկարծական, անկարծելի, անակնկալ: 2. Անզգոյշ (չնախապատրաստուած): 3. տե՛ս ՅԱՆԿԱՐԾ:

– ՅԱՆԿԱՐԾՍ, մ. տե՛ս ԱՆԿԱՍԿԱԾ (4):

ԱՆԿԱՐԾԱԿԱՆ, տե՛ս ԱՆԿԱՐԾ (1):

ԱՆԿԱՐԾԱՀԱՍ, տե՛ս ՅԱՆԿԱՐԾԱՀԱՍ:

ԱՆԿԱՐԾԵԼԻ, ա. 1. տե՛ս ԱՆԿԱՐԾ (1): 2. Նորահրաշ, հրաշափառ: 3. Անկասկածելի, անկասկած:

ԱՆԿԱՐԾԻՍ, ա. մ. Անկասկած, աներկբայ:

ԱՆԿԱՐԾՈՒԹԻՒՆ, գ. Անկասկածութիւն:

ԱՆԿԱՐԿԱՏԵԼԻ, ա. Աննորոգելի, պատառոտուն:

ԱՆԿԱՐՃ, գ. Ծոց, գիրկ:

ԱՆԿԱՐՈՂ, ա. 1. Անձեռնհաս (ոչ կարող), անզօր: 2. Ջքաւոր:

ԱՆԿԱՐՈՂԱՆԱԼ, տե՛ս ԱՆԿԱՐԱՆԱԼ:

ԱՆԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԿԱՐՈՒԹԻՒՆ:

ԱՆԿԱՐՈՒԹԻՒՆ, գ. 1. Անկարողութիւն, անզօրութիւն: 2. Անհնարութիւն:

ԱՆԿԱՐՕՏ, ա. 1. Անանքատ, աննիազ (որեւէ բանի կարիք չունեցող): 2. Անպակաս, անսպառ, առատ, լիուլի: 3. մ. Անկարօտաբար, առատապէս, լիապէս:

ԱՆԿԱՐՕՏԱԲԱՐ, տե՛ս ԱՆԿԱՐՕՏ (3):

ԱՆԿԱՐՕՏԱԿԱՆ, տե՛ս ԱՆԿԱՐՕՏ:

ԱՆԿԱՐՕՏՈՒԹԻՒՆ, գ. Լիութիւն, անպակասութիւն:

ԱՆԿԱՒՈՐ, ա. Պատշաճ, արժանի:

ԱՆԿԵԱՆՔ, ԱՆԿԵԱՑ, ա. Անկենցաղ (կեանք չվայելող), ողորմելի, թշուառ:

ԱՆԿԵԼԱՆՈՑ, գ. Ծերանոց:

ԱՆԿԵԼՈՒԹԻՒՆ, գ. Անկումն, կործանումն:

ԱՆԿԵՂ, տե՛ս ԱՆԽՈՑ:

ԱՆԿԵՂԱԿԱՐԾ, ԱՆԿԵՂԱԿԱՐԾԵԼԻ, ա. մ. Անկասկած, աներկբայ, հաւաստի, ստոյգ:

ԱՆԿԵՂԾ, ԱՆԿԵՂԾԱԿԱՆ, ԱՆԿԵՂԾԱՒՈՐ, ա. Անխարդախ, պարզ, ճշմարիտ, իսկական:

ԱՆԿԵՂԾԻԿ, տե՛ս ԱՆԿԵՂԾ:

ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆ, գ. Պարզութիւն (անկեղծ լինելը):

ԱՆԿԵՆԴԱՆ, ա. Անշունչ, անզգայ, չկենդանի, անկենդանի (ոչ կենդանի):

ԱՆԿԵՆԴԱՆԱՒՈՐ, ա. Մեռելական:

ԱՆԿԵՆԴԱՆԻ, ա. 1. տե՛ս ԱՆԿԵՆԴԱՆ: 2. Անմարդ, անբնակ:

ԱՆԿԵՆՑԱՂ, տե՛ս ԱՆԿԵԱՆՔ:

ԱՆԿԵՐ, ա. մ. Անկերակուր:
ԱՆԿԵՐԱԿՈՒՐ, տե՛ս ԱՆԿԵՐ:
ԱՆԿԵՐԱԿՐԵԼԻ, ա. Անուտելի (չուտուող):
ԱՆԿԵՐՊ, ա. 1. Անկերպարան, անկերպաւոր, անձև, տձև: 2. Անմարմին, անմարմնեղէն:
ԱՆԿԵՐՊԱՐԱՆ, տե՛ս ԱՆԿԵՐՊ (1):
ԱՆԿԵՐՊԱՐԱՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՆԿԵՐՊՈՒԹԻՒՆ:
ԱՆԿԵՐՊԱՒՈՐ, տե՛ս ԱՆԿԵՐՊ (1):
ԱՆԿԵՐՊՈՒԹԻՒՆ, գ. Անկերպարանութիւն, անձևութիւն, տձևութիւն:
ԱՆԿԷԶ, ա. մ. Անկիզելի, անայրելի, անկիզաբար:
ԱՆԿԷՏ, ա. Անսահման, անվախճան, անսկիզբն:
ԱՆԿԻԶԱԲԱՐ, տե՛ս ԱՆԿԷԶ:
ԱՆԿԻԶԱԿԱՆ, ԱՆԿԻԶԱՆՈՂ, ա. Անայրեցող (չկիզող, չայրող):
ԱՆԿԻԶԵԼԻ, տե՛ս ԱՆԿԷԶ:
ԱՆԿԻՆ, տե՛ս ԱՄՈՒՐԻ:
ԱՆԿԻՉ, ա. գ. Ոստայնանկ, ոստայնագործ:
ԱՆԿԻՐ, ա. 1. տե՛ս ԱՆԿԱՐԵԿԱՆ: 2. Անկրելի, անտանելի (որ չի կարելի կրել՝ տանել):
ԱՆԿԻՐԸՆԴՈՒՆԱԿ, տե՛ս ԱՆԿԱՐԵԿԱՆ:
ԱՆԿԻՐԹ, ա. 1. Անդաստիարակ, անհրահանգ: 2. Անվարժ, անհմուտ, անփորձ, անուսումն: 3. Անսովոր, օտար, անբնական:
ԱՆԿԻՐՈՍ, գ. Խարիսխ (նաւի):
ԱՆԿԻՒՆ ՀԱՏԱՆԵԼ, տե՛ս ԱԿԱՆ ՀԱՏԱՆԵԼ:
ԱՆԿԻՒՆԱԳԻԾ, տե՛ս ՏՐԱՄԱԳԻԾ:
ԱՆԿԻՒՆԱՏԵՍԱԿ, տե՛ս ԱՆԿԻՒՆԱՒՈՐ:
ԱՆԿԻՒՆԱՒՈՐ, ա. Անկիւնատեսակ:
ԱՐԿՂԱԳՈՐԾ, ա. Արկղակերտ (արկղի նման շինուած):
ԱՐԿՂԱԿԵՐՏ, տե՛ս ԱՐԿՂԱԳՈՐԾ:
ԱՐԿՂԻԿ, գ. Տուփ, տապանակ, գզրոցիկ, սապատակ:
ԱՐԿՈՒԱԾ, գ. 1. Արկ (ձգուած՝ նետուած իր): 2. Արկած, փորձանք, պատահար, առարկուած 3. Ծածկոյթ, ծածկոց, պատրուակ:
ԱՐԿՈՒՄՆ, գ. Ձգումն, արկուած:

ԱՐՀԱԿԱՆ, ա. Զարհուրական, զարհուրելի, ահագին:
ԱՐՀԱՄԱՐՀ, ա. Արհամարհելի, նշկահելի, արհամարհեալ, քամահական, անպիտան, անարգ, նուաստ:
ԱՐՀԱՄԱՐՀԱԲԱՐ, մ. Քամահաբար, անգոսնաբար, անարգաբար:
ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔ, գ. Արհամարհութիւն, քամահանք, անարգութիւն, անարգանք, առոտնհարութիւն:
ԱՐՀԱՄԱՐՀԵԱԼ, տե՛ս ԱՐՀԱՄԱՐՀ:
ԱՐՀԱՄԱՐՀԵԼ, նբ. 1. Քամահել, նըշկահել, քամահանս առնել, առ ոչինչ համարել, խոտել, անգոսնել, անարգել, պարսաւել: 2. Անտես առնել, ապախտ առնել, ստունգանել:
ԱՐՀԱՄԱՐՀԵԼԻ, տե՛ս ԱՐՀԱՄԱՐՀ:
ԱՐՀԱՄԱՐՀԵԼԻՈՒԹԻՒՆ, գ. Արհամարհանք, խոտումն:
ԱՐՀԱՄԱՐՀԻՉ, ա. Քամահիչ, արհամարհոտ, առոտնհարու:
ԱՐՀԱՄԱՐՀՈՏ, ա. Արհամարհիչ, անարգու, ապախտարար, անսաստ:
ԱՐՀԱՄԱՐՀՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔ:
ԱՐՀԱԻՐՔ, գ. Սոսկումն, զարհուրանք:
ԱՐՀԵՍՏ, ԱՐՏԵՍՏՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՐՈՒԵՍՏ:
ԱՐՀԵՍՏԱԿԱՆ, տե՛ս ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ:
ԱՐՀԵՍՏԻԿ, տե՛ս ԱՐՈՒԵՍՏԻԿ:
ԱՐՁԱԿ, ա. 1. Ազատ: 2. Բաց, անփակ, անկնիք: 3. Ընդարձակ, լայն:
- ԱՐՁԱԿ, ՅԱՐՁԱԿԻ, ՅԱՐՁԱԿՍ, մ. Ազատ, անարգել, անխափան:
- ԱՐՁԱԿ ԱՐՁԱԿ, մ. Համարձակ, ազատաբար:
- ԱՐՁԱԿ ԼԻՆԵԼ. Ընձիւղել (ճիւղ արձակել):
ԱՐՁԱԿԱԲԱՐ, մ. Ազատ, անխափան, ազատաբար, արձակապէս, ընդարձակապէս, պարզաբար:
ԱՐՁԱԿԱՀԵՐ, տե՛ս ՀԵՐԱՐՁԱԿ:

ԱՐՁԱԿԱՆԻՍՏ, ա. Լայնանիստ:
ԱՐՁԱԿԱՆՈՑ, տե՛ս ՁԻԱՐՁԱԿԱՐԱՆ:
ԱՐՁԱԿԱՊԷՍ, տե՛ս ԱՐՁԱԿԱԲԱՐ:
ԱՐՁԱԿԱՍՈՒՆ, տե՛ս ԸՆԴԱՐՁԱԿԱՍՈՒՆ:
ԱՐՁԱԿԱՎԱՅՐ, գ. Արուարձան, բացատ:
ԱՐՁԱԿԱՐԱՆ, գ. Ձիարձակարան, ասպարէզ, կրկէս:
ԱՐՁԱԿԱՔԱՂԱՔ, ա. Անպարիսպ (քաղաք):
ԱՐՁԱԿԵԼ, նբ. 1. Ազատ առնել, լուծանել, քակել: 2. Թողուլ, թողացուցանել, թոյլ տալ: 3. Առաքել, յղել, յուղարկել: 4. Արկանել, ձգել: 5. Տարածանել, տարածել, ծաւալել, սփռել, յորդել: 6. Ամբառնալ:
ԱՐՁԱԿԵՐԱՍԱՆ, ԱՐՁԱԿԵՐԱՍԱՆԱԿ, ա. մ. Ընդարձակերասանակ, աներասան, աներասանակ, անսանձ:
ԱՐՁԱԿՈՒԹԻՒՆ, գ. 1. Ազատութիւն: 2. Ընդարձակութիւն, լայնութիւն:
ԱՐՁԱԿՈՒԼ, տե՛ս ԱՐՁԱԿԵԼ:
ԱՐՁԱԿՈՒՄՆ, գ. Արձակուրդ (արձակելը):
ԱՐՁԱԿՈՒՐԴ, գ. 1. Արձակումն (արձակելը): 2. Թողութիւն, ազատութիւն:
- ԱՐՁԱԿՈՒՐԴ ԱՌՆԵԼ. Արձակել, ազատել (գերութիւնից):
ԱՐՁԱՆ, գ. 1. Կոթող, մահարձան: 2. Քար, վէմ: 3. Արձանագիր: 4. Արձանագրութիւն: 5. Առնապատկեր: 6. Կուռք:
ԱՐՁԱՆԱԳԻՐ, գ. 1. Արձան (գրով): 2. Արձանագրութիւն. մակագրութիւն:
ԱՐՁԱՆԱԳՈՐԾ, ա. Քարակերտ, վիմակերտ:
ԱՐՁԱՆԱԳՐԵԼ, նբ. Փորագրել, դրոշմել, արձանակել, ի գիր արկանել՝ հանել, ի գրի հարկանել, ընդ գրով արկանել:
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ, գ. Արձանագիր. մակագրութիւն:
ԱՐՁԱՆԱԿԱՌ, տե՛ս ԱՐՁԱՆԱԿԱՌՈՅՑ:

ԱՐՁԱՆԱԿԱՌՈՅՑ, ա. Արձանակառ, հաստակառոյց:

ԱՐՁԱՆԱԿԵԼ, տե՛ս ԱՐՁԱՆԱԳՐԵԼ:

ԱՐՁԱՆԱՆԱԼ, չբ. 1. Կալ: 2. փխբ. Ամրանալ, հաստատանալ, յարատեւել (հաստատ՝ անփոփոխ մնալ): 3. Քարանալ (քար կտրել):

ԱՐՁԱՆԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ, գ. Կռապաշտութիւն:

ԱՐՁԱՆԱՑՈՒՑԱՆԵԼ, պբ. 1. Հաստատել, առկայել, կառուցանել, զետեղել, դնել, ամրացուցանել, յանդիման կացուցանել: 2. Կասեցուցանել, արգելուլ, յաղթահարել, նահանջել, դադարեցուցանել: 3. Նշաւակել, ձաղել: 4. Արձանակել, արձանագրել, մատենագրել: 5. Քարացուցանել (արձան դարձնել):

ԱՐՁԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ամրութիւն:

ԱՐՁՈՂ, ԱՐՁՈՅԼ, գ. Ուռկան, ցանց:

ԱՐՄ, տե՛ս ԱՐՄՆ:

ԱՐՄԱԽԱՐԻՍԽ, ա. Հաստարմատ:

ԱՐՄԱՆԱԳՈՐԾ, տե՛ս ԶԱՐՄԱՆԱԳՈՐԾ:

ԱՐՄԱՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ, տե՛ս ԶԱՐՄԱՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ:

ԱՐՄԱՆԱԼ, տե՛ս ԶԱՐՄԱՆԱԼ:

ԱՐՄԱՆԱԼԻ, ԱՐՄԱՆԱԿԱՆ, տե՛ս ԶԱՐՄԱՆԱԼԻ:

ԱՐՄԱՏ, գ. 1. Տակ, կարճին, ունջ: 2. փխբ. Ցեղ, ազգ, զարմ, տոհմ: 3. փխբ. Սկզբնապատճառ, առիթ: 4. Խորք, հիմն, հետք (որեւէ բանի ստորին մասը՝ ծայրը):

ԱՐՄԱՏԱԽԻԼ ԱՌՆԵԼ. Արմատախլել, խլել:

ԱՐՄԱՏԱԽԼԵԼ, տե՛ս ԱՐՄԱՏԱԽԻԼ ԱՌՆԵԼ:

ԱՐՄԱՏԱԿԵՐ, ա. Խոտաճարակ, ընդակեր:

ԱՐՄԱՏԱՆԱԼ, չբ. Արմատել, արմնել:

ԱՐՄԱՏԱՔԻ, ԱՐՄԱՏԱՔԻՆ, մ. 1. Ընջովին, ի բնէ: 2. Իսպառ, բոլորովին:

ԱՐՄԱՏԵԼ, տե՛ս ԱՐՄԱՏԱՆԱԼ:

ԱՐՄԱՏԻՔ, տե՛ս ԱՐՄԱՏ:

ԱՐՄԱՑՈՒՄՆ, տե՛ս ԶԱՐՄԱՑՈՒՄՆ:

ԱՐՄԱՒ, գ. 1. Արմաւենի: 2. Բազուկ (արմաւի ողկոյզ): 3. (կենդբ.) Փիւնիկ:

ԱՐՄԱՒԵՆԻ, գ. Արմաւ:

- ԱՐՄԱՒԵՆԵԱՑ ՏՕՆ կամ ՕՐ. (եկեղց.) Ծաղկազարդ:

ԱՐՄՆ, գ. Արմ (ծառաբնի արմատամերձ մասը):

ԱՐՄՆԵԼ, տե՛ս ԱՐՄԱՏԱՆԱԼ:

ԱՐՇԱԼՈՒՇՔ, ԱՐՇԱԼՈՒՐՇՔ, ԱՐՇԱԼՈՒՐՋՔ, գ. Արեւագալ:

ԱՐՇԱՒԱԿԻ, մ. Արշաւանի:

ԱՐՇԱՒԱՆ, գ. 1. Ընթացք, դիմեցումն: 2. Յարձակումն, ասպատակ: 3. Վազք:

- ԱՐՇԱՒԱՆՍ ԴՆԵԼ, տե՛ս ԱՐՇԱՒԵԼ:

- ՁԻՈՑ ԱՐՇԱՒԱՆՔ, տե՛ս ԱՍՊԱՐԷՍ (2):

ԱՐՇԱՒԱՆԻ, տե՛ս ԱՐՇԱՒԱԿԻ:

ԱՐՇԱՒԱՍՈՅՐ, ա. Քաջարշաւ, քաջընթաց, արագընթաց:

ԱՐՇԱՒԵԼ, չբ. 1. Ընթանալ, արշաւանս դնել, զետուազեղ առնուլ: 2. Յարձակել, դիմել, խաղալ, ասպատակել: 3. տե՛ս ԱՐՇԱՒԵՑՈՒՑԱՆԵԼ:

ԱՐՇԱՒԵՑՈՒՑԱՆԵԼ, պբ. Ընթացուցանել:

ԱՐՈՒ, ա. Որձ, հաւանի:

ԱՐՈՒԱԳԷՏ, ա. Արուամոլ, առնամոլի, արուագէտ:

ԱՐՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ, գ. Արուամոլութիւն, առնամոլութիւն, արուապղծութիւն:

ԱՐՈՒԱԿԱՆ, ա. Արական:

ԱՐՈՒԱՄՈԼ, տե՛ս ԱՐՈՒԱԳԷՏ:

ԱՐՈՒԱՄՈԼՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՐՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ:

ԱՐՈՒԱՑԻԿ, տե՛ս ԱՐԱԲԱՑԻ:

ԱՐՈՒԱՆԱԼ, չբ. Արւանալ, արխանալ (արու կամ արի դառնալ):

ԱՐՈՒԱՊՂԾՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՐՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ:

ԱՐՈՒԱՍԷՐ, տե՛ս ԱՐՈՒԱԳԷՏ:

ԱՐՈՒԱՏԵՍԱԿ, ա. Արի (արուի նման):

ԱՐՈՒԱՐՁԱԿԱՆ, ա. Սահմանակից, արուարձանեայ:

ԱՐՈՒԱՐՁԱՅԻՆ, տե՛ս ԱՐՈՒԱՐՁԱՆԵԱՑ (2):

ԱՐՈՒԱՐՁԱՆ, գ. 1. տե՛ս ԱՐՁԱԿԱՎԱՅՐ: 2. Ձեռաստեղծ (կուռքի արձան):

ԱՐՈՒԱՐՁԱՆԵԱՑ, ա. գ. 1. տե՛ս ԱՐՈՒԱՐՁԱԿԱՆ: 2. Արուարձային (արուարձանում բնակուող):

- ԱՐՈՒԱՐՁԱՆԵԱՑՔ, գ. յոգն. Արձակավայրք:

ԱՐՈՒԳ, ա. 1. Նիհար, վտիտ, տկար: 2. Զոր, ազազուն, անպտուղ:

ԱՐՈՒԵՍՏ, գ. 1. Արհեստ, ճարտարութիւն, հմտութիւն: 2. Խաբ, խաբկանք, պատրանք, կեղծիք: 3. Հրաշք, սքանչելիք: 4. Հրէշ, ճիւաղ:

ԱՐՈՒԵՍՏԱԲԱՆ, ա. Ճարտարախօս (ճարտար կամ պատրանքով խօսող):

ԱՐՈՒԵՍՏԱԲԱՆԵԼ, նբ. չբ. Ճարտարախօսել (ճարտար կամ պատրանքով խօսել):

ԱՐՈՒԵՍՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ճարտարախօսութիւն:

ԱՐՈՒԵՍՏԱԲԱՐ, մ. Արուեստապէս, արուեստաւորապէս, ճարտարաբար, հնարաբար, հնարապէս:

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ, ա. գ. 1. Ճարտարապետ, արուեստաւոր: 2. Երկրպագու (որևէ բանի յետևից ընկած):

ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՐՈՒԵՍՏԳԻՏՈՒԹԻՒՆ:

ԱՐՈՒԵՍՏԱԳՈՐԾԵԼ, նբ. 1. Ճարտարել, արուեստել, արուեստաւորել, արուեստակերտել: 2. Մեքենայել (չարիք նիւթել): 3. Հրաշագործել:

ԱՐՈՒԵՍՏԱԽԱՌՆ, ա. Ճարտար, հիանալի, զարմանալի:

ԱՐՈՒԵՍՏԱԽՕՍ, ա. գ. Քերթող, քերական:

ԱՐՈՒԵՍՏԱԽՕՍԵԼ, չբ. Ճարտարաբանել, ճարտարախօսել:

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ա. գ. 1. Արհեստական (արուեստին՝ արուեստաւորին յատուկ): 2. Ճարտար (վարպետօրէն կատարուած): 3. Արուեստաւոր, արուեստագէտ: 4. Առաջինի, բարեպաշտ: 5. Զարարուեստ, չարահնար: 6. Երաժշտական: 7. Երաժիշտ: 8. Երաժշտականութիւն:

- ՁԱՅՆ ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆԱՑ. (երժշտ.) Ներդաշնակութիւն:

ԱՐՈՒԵՍՏԱԿԵԼ, տե՛ս ԱՐՈՒԵՍՏԱԳՈՐԾԵԼ:

ԱՐՈՒԵՍՏԱԿԵՐՏԵԼ, տե՛ս ԱՐՈՒԵՍՏԱԳՈՐԾԵԼ (1):

ԱՐՈՒԵՍՏԱԿԻՑ, ա. Համարուեստ (նոյն արհեստն ունեցող):

ԱՐՈՒԵՍՏԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. Գործակցութիւն:

ԱՐՈՒԵՍՏԱՅԱՐՄԱՐ, ա. Գեղեցկայարմար:

ԱՐՈՒԵՍՏԱՆՈՑ, գ. Արուեստարան, գործարան, գործանոց, խանութ:

ԱՐՈՒԵՍՏԱՊԵՏ, գ. Ճարտարապետ (գլխաւոր արուեստագէտ՝ արուեստաւոր):

ԱՐՈՒԵՍՏԱՊԷՍ, տե՛ս ԱՐՈՒԵՍՏԱԲԱՐ:

ԱՐՈՒԵՍՏԱՍԷՐ, ա. Ուսումնասէր (արհեստի և ուսման նկատմամբ սէր ունեցող):

ԱՐՈՒԵՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. Ճարտարութիւն, արուեստաւորութիւն:

ԱՐՈՒԵՍՏԱՐԱՆ, տե՛ս ԱՐՈՒԵՍՏԱՆՈՑ:

ԱՐՈՒԵՍՏԱՒՈՐ, գ. ա. 1. Արուեստագէտ, արուեստական: 2. Ճարտարական, ճարտար: 3. Առաջինի: 4. Հմուտ:

ԱՐՈՒԵՍՏԱՒՈՐԱՊԷՍ, տե՛ս ԱՐՈՒԵՍՏԱԲԱՐ:

ԱՐՈՒԵՍՏԱՒՈՐԵԼ, նբ. 1. տե՛ս ԱՐՈՒԵՍՏԱԳՈՐԾԵԼ: 2. Հնարել, ջանալ:

ԱՐՈՒԵՍՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ, գ. 1. Արուեստ, արհեստ: 2. Ճարտարութիւն: 3. Արուեստասիրութիւն: 4. Զարարուեստութիւն, մեքենաւորութիւն, նենգութիւն:

ԱՐՈՒԵՍՏԳԻՏՈՒԹԻՒՆ, գ. Ճարտարութիւն, հմտութիւն, հնարագիտութիւն:

ԱՐՈՒԵՍՏԵԼ, տե՛ս ԱՐՈՒԵՍՏԱԳՈՐԾԵԼ (1):

ԱՐՈՒԵՍՏԻԿ, գ. Արհեստիկ (թեթեւ արհեստ):

ԱՐՈՒԵՍՏՈՂԱԿԱՆ, տե՛ս ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ:

ԱՐՈՒԷԳ, գ. Որձևէգ:

ԱՐՈՒԹԻՒՆ կամ ԱՐԻՈՒԹԻՒՆ, գ. 1. Արիութիւն, խիզախութիւն, քաջութիւն, կորովութիւն: 2. Այրութիւն, երիտասարդութիւն: 3. Առնի անդամ: 4. (կենսբ.) Սերմն, սերմնահեղութիւն, գիջութիւն:

ԱՐՈՒՍԵԱԿ, գ. 1. (աստղգ.) Գիշերավար, Լուսաբեր: 2. փխբ. Սատանայ: 3. Արեգակն, արև:

ԱՐՈՒՍԵԿԱՁԵՒ, ա. Լուսապայծառ:

ԱՐՈՒՔ, տե՛ս ԱՐՈՒԳ:

ԱՐՋԱՅԻՆ, ա. Հիւսիսային:

ԱՐՋԱՌ, գ. 1. Ջուարակ: 2. Դուար, պաճար:

ԱՐՋԱՌԱՋԻԼ, գ. Ջալոտ, ջիլ:

ԱՐՋՆԱԳՈՅՆ, ա. Սևագոյն, սևաթոյր, արջնաթոյր, մթնագոյն, թխագոյն:

ԱՐՋՆԱԶԳԵՍՏ, տե՛ս ՍԵՒԱԶԳԵՍՏ:

ԱՐՋՆԱԹՈՅՐ, տե՛ս ԱՐՋՆԱԳՈՅՆ:

ԱՐՋՆԱՏԵՍ, ա. Սևագոյն, թխագոյն:

ԱՐՏ, գ. Երկիր, գետին, հող, անդ, հարաւունք:

ԱՐՏԱԲԱՆԱԼ, նբ. Ցելուլ (դէպի դուրս բացել):

ԱՐՏԱԲԵՐԱԿԱՆ, ա. Յառաջ(ա)բերական, արտադրական (արտասանական):

ԱՐՏԱԲԵՐԵԼ, նբ. 1. Յառաջաբերել, վերածել, ընծայել, արտադրել, տալ: 2. Ընդարձակել, տարածանել, տարածել: 3. Արտասանել, արտաձայնել, հնչել:

ԱՐՏԱԲԵՐՈՒԹԻՒՆ, գ. 1. Յառաջաբերութիւն, արտասանութիւն, արտաբերումն: 2. (յունաբանութեամբ) Յուղարկաւորութիւն:

ԱՐՏԱԲԵՐՈՒՄՆ, տե՛ս ԱՐՏԱԲԵՐՈՒԹԻՒՆ (1):

ԱՐՏԱԲՆԱԿ, ա. Գաղթական:

ԱՐՏԱԲՆԱԿՈՒԹԻՒՆ, գ. Տարաբնակութիւն:

ԱՐՏԱԲՈՅՍ, գ. Ընձիւղ, բողբոջ, փխբ. (մտքի) ծնունդ:

ԱՐՏԱԲՈՒՆԵԼ (իմ), չբ. Բղխել (բոյսի նման իր բնից դուրս ելնել):

ԱՐՏԱԳԾԵԼ, նբ. Գծագրել, փորագրել:

ԱՐՏԱԳՆԱՅԱԿԱՆ, ա. Յառաջբերական, ծաւալական:

ԱՐՏԱԳՈՋԵԼ, նբ. չբ. Աղաղակել, վերագոչել:

ԱՐՏԱԳՈՐԾԵԼ, նբ. Առնել, ներգործել, յայտ առնել, կացուցանել:

ԱՐՏԱԴԱՏԵԼ, նբ. Բացորոշել, դիտել, զննել:

ԱՐՏԱԴԱՏՈՒԹԻՒՆ, գ. Զեղումն (դուրս զեղուելը):

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ, տե՛ս ԱՐՏԱԲԵՐԱԿԱՆ:

ԱՐՏԱԴՐԵԼ, նբ. 1. Բացադրել, բացատրել, բացայայտել, մեկնել, արտայայտել, յայտ առնել: 2. Առաջի առնել՝ դնել, մատուցանել, տալ: 3. Թարգմանել: 4. Ծնանել, առնել: 5. Ընկենուլ (դուրս ձգել):

ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆ, գ. Բացատրութիւն, մեկնութիւն, արտաճառութիւն, յայտարարութիւն:

ԱՐՏԱԶԱՆՑԵԼ, չբ. Զանցանել:

ԱՐՏԱԶԱՏԵԼ, նբ. Բացորոշել, զատանել, բաժանել, անջատել:

ԱՐՏԱԹԱՓԵԼ (իմ), չբ. Ժայթքել (կայծի մասին):

ԱՐՏԱԹՈՐԵԼ (իմ), չբ. Արտահոսել, արտասորել:

ԱՐՏԱԹՈՐՈՒԹԻՒՆ, գ. Արտաթորումն, բացահոսումն, զառ ի վայր խոխոջանք:

ԱՐՏԱԹՈՐՈՒՄՆ, տե՛ս ԱՐՏԱԹՈՐՈՒԹԻՒՆ:

ԱՐՏԱԼԱԾ, տե՛ս ԱՐՏԱՀԱԼԱԾ:
ԱՐՏԱԼԱԾԱԿԱՆ, տե՛ս ՀԱԼԱԾԱԿԱՆ:
ԱՐՏԱԼԱԾԵԼ, տե՛ս ԱՐՏԱՀԱԼԱԾԵԼ:
ԱՐՏԱԼԱԾԻԿ, տե՛ս ԱՐՏԱՀԱԼԱԾ:
ԱՐՏԱԼԱԾԻՉ, ա. Հալածիչ, տարագրիչ:
ԱՐՏԱԼԱԾՈՒԹԻՒՆ, ԱՐՏԱԼԱԾՈՒՄՆ, գ. Հալածումիւն, հալածումն, վտարանդութիւն, տարագրութիւն:
ԱՐՏԱԽԵԼՔ, ա. Խելայեղ:
ԱՐՏԱԽՈՅՐ կամ ԱՐՏԱԽՈՒՐ, տե՛ս ԱՐՏԱԽՈՒՐԱԿ (1):
ԱՐՏԱԽՈՒԶԵԼ, նբ. Հետազօտել:
ԱՐՏԱԽՈՒՐԱԿ, գ. 1. Խոյր, ապարօշ, թագ: 2. Ծածկոց, ծածկոյթ:
ԱՐՏԱԽՈՒՐԵԼ, նբ. Պսակել, թագազարդել:
ԱՐՏԱԾԱՂԿԵԼ (իմ), չբ. Բողբոջել, սաղարթանալ:
ԱՐՏԱԿԱԼ, չբ. Արտակայել, ի բաց կալ, հեռանալ, զատանել, հրաժարել:
ԱՐՏԱԿԱՅԵԼ (իմ), տե՛ս ԱՐՏԱԿԱԼ:
ԱՐՏԱԿԱՅՈՒԹԻՒՆ, գ. Հեռաւորութիւն, միջոց:
ԱՐՏԱԿԱՐԳԵԼ, նբ. Զատուցանել, որոշել:
ԱՐՏԱԿԱՑՈՒԹԻՒՆ, գ. 1. Ապշութիւն, հիացումն: 2. Խելագարութիւն:
ԱՐՏԱԿԱՑՈՒՑԱՆԵԼ, պբ. Հեռացուցանել, ի բաց կացուցանել:
ԱՐՏԱԿԷՏ, գ. Կարթ:
ԱՐՏԱԿԻՏԵԼ, նբ. 1. Զարդարել: 2. Կարթել (կարթով բռնել՝ որսալ):
ԱՐՏԱՀԱԼԱԾ, ա. Արտալած, արտալածական, հալածական:
- ԱՐՏԱՀԱԼԱԾ ԱՌՆԵԼ, տե՛ս ԱՐՏԱՀԱԼԱԾԵԼ:
ԱՐՏԱՀԱԼԱԾԵԼ, նբ. Արտահալած առնել, հալածական առնել՝ արկանել, հալածել, հեռացուցանել, բացահալածել, վանել:
ԱՐՏԱՀԱՆԵԼ, նբ. Սպանանել:
ԱՐՏԱՀԱՆՈՒԹԻՒՆ, ԱՐՏԱՀԱՆՈՒՄՆ, գ. Մեռելութիւն, մահ:
ԱՐՏԱՀԱՐԵԼ, նբ. Յանդիմանել, կշտամբել:
ԱՐՏԱՀՈՍԵԼ, տե՛ս ԱՐՏԱԹՈՐԵԼ:
ԱՐՏԱՀՈՍՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՐՏԱԹՈՐՈՒԹԻՒՆ:
ԱՐՏԱՀՈՒՆՉ, տե՛ս ԱՐՏՀՈՒՆՉ:
ԱՐՏԱՁԱՅՆԵԼ, նբ. Արտաբերել, արտասանել, բարբառել:
ԱՐՏԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ, գ. Արտաբերութիւն, բարբառումն:
ԱՐՏԱՃԱՌԵԼ, նբ. Բարբառել, արտասանել, վիճաբանել (ճառի ձևով արտայայտել):
ԱՐՏԱՃԱՌՈՒԹԻՒՆ, ԱՐՏԱՃԱՌՈՒՄՆ, գ. 1. Ճառ, խօսք: 2. Վիճաբանութիւն, հակաճառութիւն:
ԱՐՏԱՄԵՐԺԵԼ, նբ. Տարամերժել, տարագրել:
ԱՐՏԱՄԵՐԺՈՒՄՆ, գ. Տարագրութիւն, զրկումն, բարձումն:
ԱՐՏԱՄԵՐԿԱՆԱԼ, չբ. Մերկանալ, զրրկել:
ԱՐՏԱՄԻՏԵԼ, չբ. Զարտուղել, խոտորել:
ԱՐՏԱՅԱՅՏ, ա. մ. Քաջայայտ, երևելի, յայտնի:
ԱՐՏԱՅԱՅՏԵԼ, նբ. Յայտնի առնել, ծանուցանել, զեկուցանել, իմաց առնել, ցուցանել, մեկնել, նշանակել:
- ԱՐՏԱՅԱՅՏԵԼ ԲՈՅՍՍ. Բուսուցանել:
ԱՐՏԱՆՈՒԱԳ, ա. Աննուագ, աներաժիշտ (ոչ երաժշտական, աններդաշնակ):
ԱՐՏԱՇԷԿ, տե՛ս ԱՏՐԱՇԷԿ:
ԱՐՏԱՇԻԿԱՆԱԼ, չբ. 1. Շիկնել (ատրաշէկ դառնալ): 2. փխբ. Ջերմանալ (ջերմ՝ ջերմագին դառնալ):
ԱՐՏԱՇՆՉԱԿԱՆ, ա. Մահառիթ:
ԱՐՏԱՇՆՉԱՆԱԼ, չբ. Անշնչանալ, մեռանել:
ԱՐՏԱՇՆՉԵԼ, 1. նբ. Շնչել, վերածխել: 2. Մեռանել (շունչը փչել):

*ԱՐՏԱՇՆՋՈՒԹԻՒՆ, գ. 1. Արտաշնչումն, արտաքսաշնչումն, վերածխութիւն, արտափչումն (արտաշնչելը): 2. Շոգի, գոլորշի (երկրի մակերեւոյթից բարձրացող): 3. Անշնչութիւն, մեռելութիւն:*

*ԱՐՏԱՇՆՋՈՒՄՆ, գ. 1. տե՛ս ԱՐՏԱՇԸՆՋՈՒԹԻՒՆ (1): 2. Ազդումն, դրդումն, խթան:*

*ԱՐՏԱՊԱՏՄԵԼ, նբ. Արտաճառել:*

*ԱՐՏԱՊԱՏՄՈՒԹԻՒՆ, գ. Արտաճառութիւն, մեկնութիւն:*

*ԱՐՏԱՊԱՐԶԵԼ, նբ. Մեկնել, պարզաբանել:*

*ԱՐՏԱՊՈՂՈՏԱՅ, ա. Արտուղի:*

*ԱՐՏԱՍԱՀՄԱՆ, ա. Անպայման, անչափ:*

*ԱՐՏԱՍԱՀՄԱՆԱՀԱԼԱԾ, ա. մ. Վտարանդի:*

*ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ԱՌՆԵԼ, տե՛ս ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԼ:*

*ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԼ, նբ. Արտասահման առնել, արտաքսել, տարագրել, աքսորել, վտարել:*

*ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒԹԻՒՆ, ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄՆ, գ. Աքսոր, վտարանդութիւն:*

*ԱՐՏԱՍԱՆԵԼ, նբ. Արտասել, արտաճառել, պատմել, նկարագրել, մեկնել:*

*ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, գ. 1. Ասացուած, խօսք, ճառ, պատմութիւն: 2. Նկարագրութիւն, ստորագրութիւն (պատմական):*

*ԱՐՏԱՍԵԼ, տե՛ս ԱՐՏԱՍԱՆԵԼ:*

*ԱՐՏԱՍՈՐԵԼ, չբ. Արտաթորել, հոսել:*

*ԱՐՏԱՍՈՒ, տե՛ս ԱՐՏԱՍՈՒՔ:*

*ԱՐՏԱՍՈՒԱԹՈՐ, ա. Արտասուահոս, արտասուակաթ, արտօսրաբուղխ, արտօսրիջոյց:*

*ԱՐՏԱՍՈՒԱԼԻՑ, ա. Արտօսրալիր, արտօսրալից, արտասուայեղց:*

*ԱՐՏԱՍՈՒԱԿԱԹ, տե՛ս ԱՐՏԱՍՈՒԱԹՈՐ:*

*ԱՐՏԱՍՈՒԱԿԻՑ, ա. Արտասուակցորդ, արտօսրակից, ողբակից:*

*ԱՐՏԱՍՈՒԱԿՑՈՐԴ, տե՛ս ԱՐՏԱՍՈՒԱԿԻՑ:*

*ԱՐՏԱՍՈՒԱՀԱՌԱՉ, ա. Արտօսրահառաչ:*

*ԱՐՏԱՍՈՒԱՀՈՍ, տե՛ս ԱՐՏԱՍՈՒԱԹՈՐ:*

*ԱՐՏԱՍՈՒԱՅԵՂՑ, տե՛ս ԱՐՏԱՍՈՒԱԼԻՑ:*

*ԱՐՏԱՍՈՒԵԼ, նբ. չբ. 1. Լալ, արտասուս արկանել՝ հեղուլ, յարտասուս հարկանել, գլալ հարկանել: 2. Կոծել, ողբալ, սգալ, աւաղել:*

*ԱՐՏԱՍՈՒՔ, գ. Արտօսր:*

*- ԱՐՏԱՍՈՒՍ ԱՐԿԱՆԵԼ՝ ՀԵՂՈՒԼ, տե՛ս ԱՐՏԱՍՈՒԵԼ:*

*- ՅԱՐՏԱՍՈՒՍ ՀԱՐԿԱՆԵԼ (իմ), տե՛ս ԱՐՏԱՍՈՒԵԼ:*

*ԱՐՏԱՍՓՌԵԼ, նբ. Տարածանել, տարածել, ծաւալել (դուրս սփռել):*

*ԱՐՏԱՎԱԶԵԼ, չբ. Ընդոստնուլ, զանցանել, խուսափել (դուրս վազել):*

*ԱՐՏԱՎԱԶԻԿ, ա. Փախստական, խուսափու:*

*ԱՐՏԱՎԱՅՐՔ, գ. Արտավարք (արտերի վայրերը՝ տեղերը):*

*ԱՐՏԱՎԱՐ, ա. գ. 1. Հերկահար, հերկարար, երկրագործ, մշակ: 2. Արտ (վարած կամ վարելի), հերկ:*

*- ԱՐՏԱՎԱՐՔ, տե՛ս ԱՐՏԱՎԱՅՐՔ:*

*ԱՐՏԱՏԵՂԻ, ա. Անտեղի, անսովոր, անպատեհ, անհնարին:*

*ԱՐՏԱՏԻՊ, ա. գ. Արտատպաւոր (կնիքից ստացուած դրոշմը):*

*ԱՐՏԱՏՈՀՄ, ա. Օտար, անսովոր, այլանդակ (տոհմից դուրս):*

*ԱՐՏԱՏՊԱՒՈՐ, տե՛ս ԱՐՏԱՏԻՊ:*

*ԱՐՏԱՏՊԱՒՈՐԵԼ, նբ. Դրոշմել (թերթեւակի՝ երեսանց տպաւորել):*

*ԱՐՏԱՏՐՈՀԵԼ, նբ. Տրոհել, զատել, բաժանել, հեռացուցանել:*

*ԱՐՏԱՑՈՒՑԱՆԵԼ, նբ. Ցուցանել (արտաքս), արտափայլել:*

*ԱՐՏԱՒԱԶԴԱՀԱՒ, տե՛ս ՔԱԶԱՀԱՒ:*

ԱՐՏԱՓԱՅԼԵԼ, 1. նբ. Արտափայլեցուցանել, պայծառացուցանել, բացափայլել: 2. չբ. Փայլել, փայլատակել, բացափայլել, պայծառանալ, ճաճանչել, ծագել:

ԱՐՏԱՓԱՅԼԵՑՈՒՑԱՆԵԼ, տե՛ս ԱՐՏԱՓԱՅԼԵԼ (1):

ԱՐՏԱՓԱՅԼՈՒԹԻՒՆ, գ. Բացափայլութիւն, փայլումն (արտափայլելը):

ԱՐՏԱՓՉԵԼ, տե՛ս ԱՐՏԱՇՆՉԵԼ:

ԱՐՏԱՓՉՈՒՄՆ, տե՛ս ԱՐՏԱՇՆՉՈՒԹԻՒՆ (1):

ԱՐՏԱՔԱՂԵԼ, նբ. Քաղել (դուրս քաշել):

ԱՐՏԱՔԻՆ, ա. 1. Արտաքուստ (դրսի): 2. Բացական, բացակայ, հեռաւոր, հեռի: 3. Օտար:

- ԱՐՏԱՔԻՆՔ, գ. յոգն. Օտարք (օտարազգի կամ այլազգի հեթանոս մատենագիրներ, բանաստեղծներ և փիլիսոփաներ):

ԱՐՏԱՔՆԱԽՈՐՀՈՒՐԴ, ա. Օտարուսումն:

ԱՐՏԱՔՈՅ, նխդ. մ. (որպէս նախադրութիւն գործածւում է նաև ՔԱՆ-ի հետ՝ ԱՐՏԱՔՈՅ ՔԱՆ), 1. Ի դուրս, արտաքս, արտաքուստ: 2. Ուրոյն, ի զատ, մեկուսի, օտար, հակառակ, անմասն, անբաժ, ազատ, առանց: 3. Հեռի:

- ԱՐՏԱՔՈՅ ԿՈՒՍԷ. Արտաքուստ:

ԱՐՏԱՔՈՒՍՏ, 1. մ. Ի դրուստ (դրսից): 2. ա. Արտաքին (դրսի): 3. Օտար, օտարամուտ:

ԱՐՏԱՔՍ, մ. Ի դուրս, արտաքոյ, յարտաքս:

- ԱՐՏԱՔՍ ԵԼԱՆԵԼՆ. Կղկղումն:

- ԱՐՏԱՔՍ ՔԱՆ, նխդ. Արտաքոյ քան:

- ՅԱՐՏԱՔՍ, տե՛ս ԱՐՏԱՔՍ:

ԱՐՏԱՔՍԱԲԵՐՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՐՏԱԲԵՐՈՒԹԻՒՆ:

ԱՐՏԱՔՍԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՐՏԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ:

ԱՐՏԱՔՍԱՆԱԼ, չբ. (կրօն.) Ի բաց ելանել:

ԱՐՏԱՔՍԱՇՆՉՈՒՄՆ, տե՛ս ԱՐՏԱՇԸՆՉՈՒԹԻՒՆ (1):

ԱՐՏԱՔՍԱՌԱՔԱԲԱՐ, մ. (կրօն.) Ելողաբար:

ԱՐՏԱՔՍԱՌԱՔՈՒՄՆ, գ. (կրօն.) Բըղխումն:

ԱՐՏԱՔՍԵԼ, նբ. 1. Վտարել, հեռացուցանել: 2. Աքսորել, արտասահմանել: 3. Հանել, ազատել:

ԱՐՏԵԼՈՒԹԻՒՆ, գ. Արտուղութիւն, խոտորումն:

ԱՐՏԵՐԵՒԵԼ (իմ), չբ. Երևելի լինել:

ԱՐՏԵՐԵՒՈՒԹԱՆԱԼ, տե՛ս ԵՐԵՒՈՒԹԱՆԱԼ:

ԱՐՏԵՒԱՆ, գ. Դարաւանդ (լեռան գլուխ՝ գագաթ):

ԱՐՏԵՒԱՆՈՒՆՔ, գ. հաւաք. Կոպք (աչքի թարթիչները):

ԱՐՏԻԿ, գ. Ոչխար (վայրի):

ԱՐՏԻՒՏ, տե՛ս ԱՐՏՈՅՏ:

ԱՐՏՀՈՒՆՁ, գ. Արտահունձ (արտը հընձող):

ԱՐՏՈԳԵԼ, նբ. Վերակոչել, մականուանել:

ԱՐՏՈՅՏ, գ. (կենդբ.) Արտիտ:

ԱՐՏՈՐԱՅ, գ. Արտորեայ (արտեր):

ԱՐՏՈՐԵԱՅ, տե՛ս ԱՐՏՈՐԱՅ:

ԱՐՏՈՐՈՇԵԼ, նբ. Զանազանել (ջոկելով զատել՝ բաժանել):

ԱՐՏՈՒՂԻ, ա. Զարտուղի, խոտոր, թիւր, մոլար:

ԱՐՏՈՒՆՈՒԹԻՒՆ, գ. Նախապատուութիւն, առաւելութիւն, գերազանցութիւն:

ԱՐՏՈՒՍՏ, մ. ա. Արտաքուստ:

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՐՏՈՒՆՈՒԹԻՒՆ:

ԱՐՏՕՍՐ, գ. 1. տե՛ս ԱՐՏԱՍՈՒՔ: 2. Աւիշք (ծառերից հոսող հիւթ՝ հեղուկ):

- ԱՐՏՕՍՐ ԱՐԿԱՆԵԼ՝ ԹՈՐԵՑՈՒՑԱՆԵԼ՝ ԿԱԹԵՑՈՒՑԱՆԵԼ. Լալ, արտասուել:

ԱՐՏՕՍՐԱԲՈՒՂԽ, ա. Արտօսրաթոր, արտօսրածին, արտօսրահոս:

ԱՐՏՕՍՐԱԳՈՒԹ, ա. Արտօսրալից, արտօսրաբուղխ:
ԱՐՏՕՍՐԱԹՈՐ, տե՛ս ԱՐՏՕՍՐԱԲՈՒՂԽ:
ԱՐՏՕՍՐԱԼԻՐ, ԱՐՏՕՍՐԱԼԻՑ, տե՛ս ԱՐՏԱՍՈՒԱԼԻՑ:
ԱՐՏՕՍՐԱԾԻՆ, տե՛ս ԱՐՏՕՍՐԱԲՈՒՂԽ:
ԱՐՏՕՍՐԱԿԻՑ, տե՛ս ԱՐՏԱՍՈՒԱԿԻՑ:
ԱՐՏՕՍՐԱՀԱՌԱՋ, տե՛ս ԱՐՏԱՍՈՒԱՀԱՌԱՋ:
ԱՐՏՕՍՐԱՀԵՂ ԼԻՆԵԼ. Արտասուել, լալ:
ԱՐՏՕՍՐԱՀՈՍ, տե՛ս ԱՐՏՕՍՐԱԲՈՒՂԽ:
ԱՐՏՕՍՐԻՋՈՅՑ, տե՛ս ԱՐՏԱՍՈՒԱԹՈՐ:
ԱՐՏՕՐԷՆ, ա. Անբնական, անսովոր, այլանդակ:
ԱՐՓ, տե՛ս ԱՐՓԻ:
ԱՐՓԱՃԱՃԱՆՉ, տե՛ս ԱՐՓԻԱՃԱՃԱՆՉ:
ԱՐՓԱՅԱԳՆԱՑ ԼԻՆԵԼ. Արփեգնաց լինել, խոյանալ:
ԱՐՓԱՅԻՆ, ա. Եթերային, երկնային, լուսաւոր, հրեղէն:
ԱՐՓԱՒՈՐ, ա. Լուսաւոր, լուսեղէն:
ԱՐՓԱՓԱՅԼ, տե՛ս ԱՐՓԻԱՓԱՅԼ:
ԱՐՓԵԱՆ, տե՛ս ԱՐՓԻ:
ԱՐՓԵԳՆԱՑ ԼԻՆԵԼ, տե՛ս ԱՐՓԱՅԱԳՆԱՑ ԼԻՆԵԼ:
ԱՐՓԻ, գ. 1. Եթեր (հին պատկերացմամբ): 2. Արեգակն (իբրև լոյսի աղբիւր), լոյս: 3. ա. Արփային, լուսաւոր, լուսեղէն:
ԱՐՓԻԱԲԱՇԽ, ա. Լուսասփիւռ (լոյս բաշխող՝ սփռող):
ԱՐՓԻԱԲՆԱԿ, ա. Երկնաբնակ, լուսաբնակ:
ԱՐՓԻԱԳԵՂ, ա. Հրաշագեղ, լուսագեղ, չքնաղ:
ԱՐՓԻԱԶԱՐԴ, ա. Լուսազարդ, լուսեղէն:
ԱՐՓԻԱԶԳԵՍՏ, տե՛ս ԼՈՒՍԱԶԳԵՍՏ:
ԱՐՓԻԱԿԱՆ, ա. Երկնային, լուսեղէն, արեգակնային, արփային, ուղփեան:
ԱՐՓԻԱԿԵՐՊ, ա. Լուսատեսակ:
ԱՐՓԻԱԿԻԶՆ, ա. Լուսակիզն, լուսազարդ, հրացայտ:
ԱՐՓԻԱՀՐԱՇ, ա. Լուսաճաճանչ, մեծապայծառ (արփիի նման հրաշալի):
ԱՐՓԻԱՀՐԱՏ, ա. Լուսավառ:
ԱՐՓԻԱՃԱՃԱՆՉ, ա. Լուսաճաճանչ, լուսապայծառ:
ԱՐՓԻԱԱՃԵՄ, ա. Երկնաճեմ, լուսաճեմ:
ԱՐՓԻԱՆԿԱՐ, ա. Լուսանկար, լուսազարդ:
ԱՐՓԻԱՆՄԱՆ, ա. մ. Արեգակնանման, պայծառ:
ԱՐՓԻԱՒՈՐԵԼ (իմ), կ. չբ. Լուսազարդել, լուսաւորել:
ԱՐՓԻԱՓԱՅԼ, ա. մ. Արփափայլ, արեգակնափայլ, լուսափայլ, ամենապայծառ:
ԱՐՓԻԱՓԱՅԼԵԼ, չբ. Լուսափայլել, պայծառանալ:
ԱՐՓԻԱՓԱՅԼՈՒԹԻՒՆ, գ. Լուսափայլութիւն, գերապայծառութիւն:
ԱՐՔԱՅ, գ. Թագաւոր:
- ԱՐՔԱՅ ԵՐԿՆԱՒՈՐ. Աստուած:
- ԱՐՔԱՅ ԱՐՔԱՅԻՑ, ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱՅ, տե՛ս ՇԱՀԱՆՇԱՀ:
ԱՐՔԱՅԱԲԱՐ, մ. Թագաւորաբար, թագաւորապէս:
ԱՐՔԱՅԱԲՆԱԿ, տե՛ս ԹԱԳԱՒՈՐԱԲՆԱԿ:
ԱՐՔԱՅԱԶՆ, տե՛ս ԹԱԳԱՒՈՐԱԶՆ:
ԱՐՔԱՅԱԿԱՆ, ա. Թագաւորական, արքունական, արքունի, արքեան:
- ԱՐՔԱՅԱԿԱՆ ԿԱՂԻՆ. Ընկոյզ:
ԱՐՔԱՅԱԿԵՐՊ, ա. Թագաւորակերպ:
ԱՐՔԱՅԱՄԱՆՈՒԿ, տե՛ս ԱՐՔԱՅՈՐԴԻ:
ԱՐՔԱՅԱՆԻՍՏ, տե՛ս ԹԱԳԱՒՈՐԱՆԻՍՏ:
ԱՐՔԱՅԱՊԱՏԻՒ, տե՛ս ԹԱԳԱՒՈՐԱՑԱՐԱՐ:
ԱՐՔԱՅԱՏՈՒՐ, ա. Արքունատուր:
ԱՐՔԱՅԱՐԱՆ, գ. 1. Պալատն, արքունիք: 2. Թագաւորեալ քաղաք:

ԱՐՔԱՅԵՆԻ, ա. Արքայական, փխբ. ազնիւ, ընտիր, պատուական, յարգի:
ԱՐՔԱՅՈՐԴԻ, գ. 1. Արքայամանուկ: 2. (կրօն.) Քրիստոս (Աստծու որդին):
ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ, գ. 1. Թագաւորութիւն: 2. Դրախտ: 3. Արքայ:
ԱՐՔԱՅՈՒՀԻ, գ. Թագուհի:
ԱՐՔԱՅՕՐԷՆ, մ. ա. Արքայաբար, արքայական:
ԱՐՔԵԱՆ, ա. Արքայական:
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, գ. Արքեպիսկոպոսապետ, եպիսկոպոսապետ, պատրիարգ, Հայրապետ, դիտապետ:
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ, տե՛ս ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ:
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԻՒՆ, գ. Եպիսկոպոսապետութիւն, պատրիարգութիւն, Հայրապետութիւն, կաթողիկոսութիւն:
ԱՐՔԵՐԷՑ, գ. Աւագերէց, երիցապետ:
ԱՐՔԻԴԻԱԿՈՆ, տե՛ս ՍԱՐԿԱՒԱԳԱՊԵՏ:
ԱՐՔԻՄԱՆՏՐԻՏ, տե՛ս ԱԲԲԱՅ:
ԱՐՔՈՒՆԱԿԱՆ, ա. Արքունի, արքայական, Թագաւորական:
ԱՐՔՈՒՆԵԱՆ, տե՛ս ԱՐՔՈՒՆԻ:
ԱՐՔՈՒՆԻ, ա. Արքունեան, արքունական, արքայական, Թագաւորական:
ԱՐՔՈՒՆԻՔ, գ. Արքայարան, պալատն, դուռն արքունի:
- ԱՐՔՈՒՆՈՒՍՏ, մ. Յարքունուստ:
ԱՐՕՍԱՆԱԼ, տե՛ս ԿՈՐԴԱՆԱԼ:
ԱՐՕՏ, գ. 1. Ճարակ (անասունների կեր և արօտատեղ): 2. Ճարակումն (արածելը, ճարակելը):
ԱՐՕՏԱԿԱՆ, ա. Ճարակաւոր, խոտաճարակ:
ԱՐՕՏԱԿԻՑ, ա. Ճարակակից:
ԱՐՕՐ, գ. Մաճ (լայնաբար):
ԱՐՕՐԱԴԻՐ, ա. Արօրաձիգ, Հերկահար, Հերկարար:
- ԱՐՕՐԱԴԻՐ ԱՌՆԵԼ. Արօրաձիգ առնել, արօրադրել, արօրել:
ԱՐՕՐԱԴՐԵԼ, տե՛ս ԱՐՕՐԱԴԻՐ ԱՌՆԵԼ:
ԱՐՕՐԱԴՐՈՒԹԻՒՆ, գ. Հերկ, վար, Հերկագործութիւն:
ԱՐՕՐԱՁԻԳ, տե՛ս ԱՐՕՐԱԴԻՐ:
- ԱՐՕՐԱՁԻԳ ԱՌՆԵԼ, տե՛ս ԱՐՕՐԱԴԻՐ ԱՌՆԵԼ:
ԱՐՕՐԱՆԱԼ, տե՛ս ՀԱՐՕՐԱՆԱԼ:
ԱՐՕՐԵԼ, նբ. Արօրադիր առնել, արօրադրել, Հերկել, վարել:
ԱՒԱԳ, ա. գ. Մեծ, մեծագոյն, երէց, երիցագոյն, մեծապատիւ, երևելի, իշխան, պետ:
- ԱՒԱԳ ԱԶՔ, տե՛ս ԱԶՔ ՀՈԳԻՈՅ՝ ՄՏԱՑ:
ԱՒԱԳԱԳՈՐԾ, ա. Մեծագործ, Հոյակապ, գերապանծ:
ԱՒԱԳԱՄԵԾԱՐ, ա. Նախամեծար, նախապատիւ, գերապատիւ, վսեմական:
ԱՒԱԳԱՅՆԻ, տե՛ս ԱՒԱԳԱՆԻ:
ԱՒԱԳԱՆԱԼ, չբ. Մեծանալ, մեծարել:
ԱՒԱԳԱՆԻ, գ. Հաւաք. Աւագորեար, մեծամեծք:
ԱՒԱԳԱՇՈՒՔ, ա. Մեծաշուք, մեծապատիւ, մեծափառ:
ԱՒԱԳԵՐԷՑ, տե՛ս ԱՐՔԵՐԷՑ:
ԱՒԱԳՈՅԹ, գ. Աւագութիւն, երիցութիւն, ծերութիւն:
ԱՒԱԳՈՐԵԱՐ կամ ԱՒԱԳ ՈՐԵԱՐ, տե՛ս ԱՒԱԳԱՆԻ:
ԱՒԱԳՈՒԹԻՒՆ, գ. Երիցութիւն, մեծութիւն:
ԱՒԱԳՈՒՀԻ, գ. (եկեղց.) Աբբասուհի:
ԱՒԱԴԻԿ, մ. Ահա, ահաւադիկ:
ԱՒԱԶ, գ. Խիճ (մանր), լայնաբար՝ հող, փոշի:
ԱՒԱԶԱԽԻՐ, ա. Աւազուտ, երիզուտ:
ԱՒԱԶԱԿ, գ. ա. Յելուզակ, ելուզակ:
ԱՒԱԶԱԿԱԲԱՐ, մ. Յելուզակաբար, ելուզակօրէն, Հինաբար:
ԱՒԱԶԱԿԱԲԱՐՈՅ, ա. Ելուզակուտ, աւազակուտ:

ԱՒԱԶԱԿԱՆՈՑ, գ. Աւազակարան, աւազակուտ:
ԱՒԱԶԱԿԱՐԱՆ, տե՛ս ԱՒԱԶԱԿԱՆՈՑ:
ԱՒԱԶԱԿԵԼ, նբ. չբ. Յափշտակել:
ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆ, գ. Յափշտակութիւն, հուղկահարութիւն:
ԱՒԱԶԱԿՈՒՏ, տե՛ս 1. ԱՒԱԶԱԿԱՆՈՑ: 2. ԱՒԱԶԱԿԱԲԱՐՈՅ:
ԱՒԱԶԱՆ, գ. 1. Կոնք, տաշտ, լուացարան, ջրաշեղջ: 2. (եկեղց.) Մկրտարան (աւազան մկրտութեան):
ԱՒԱԶԱՆԱԶԱՐԴ, ա. (եկեղց.) Աւազանապաճոյճ (աւազանում մկրտուած):
ԱՒԱԶԱՆԱՊԱՃՈՅՃ, տե՛ս ԱՒԱԶԱՆԱԶԱՐԴ:
ԱՒԱԶԵՂԷՆ, ա. Աւազուտ:
ԱՒԱԶԻ, ԱՒԱԶԻՆ, տե՛ս ԱՒԱԶՈՒՏ:
ԱՒԱԶՈՒՏ, ա. Աւազի, աւազին (աւազով լի՝ առատ), կոպճուտ:
ԱՒԱՂ, 1. ձ. Եղո՜ւկ, վա՜յ, ա՜խ, ո՜խ: 2. գ. Աւաղումն, եղկութիւն, թշուառութիւն, կարեկցութիւն, վիշտ, ցաւ:
- ԱՒԱՂՍ ԱՐԿԱՆԵԼ, տե՛ս ԱՒԱՂԵԼ:
ԱՒԱՂԱԲԵՐ, տե՛ս ԱՒԱՂԱԲՈՅՍ:
ԱՒԱՂԱԲՈՅՍ, ա. Ողորմելի, անպիտան, աւաղաբեր, թշուառաբեր:
ԱՒԱՂԱԿԱՆ, ա. Ողբական, ցաւագին, վշտալի:
ԱՒԱՂԱՆՔ, գ. Աւաղումն, աշխար, ապաշաւ:
ԱՒԱՂԱՊԷՍ, մ. Թշուառապէս:
ԱՒԱՂԵԼ, նբ. չբ. Աւաղս արկանել, աւեղկել, վայել, ողբալ, կարեկից լինել, ապաշաւել:
ԱՒԱՂԻԿ, ԱՒԱՂՈՒԿ, ա. Եղկելի, ողորմելի, թշուառ:
ԱՒԱՂՈՒՄՆ, տե՛ս ԱՒԱՂԱՆՔ:
ԱՒԱՆ, գ. Գեղաքաղաք, գիւղաքաղաք, քաղաքագիւղ, շէն:
ԱՒԱՆԱԳԵՂ, տե՛ս ԱՒԱՆԱԳԵՕՂ:
ԱՒԱՆԱԳԵՕՂ, գ. Աւանագեղ (փոքր գիւղաքաղաք):
ԱՒԱՆԱՊԵՏ, տե՛ս ԽՈՒԱՊԵՏ:
ԱՒԱՆԴ, գ. Աւանդութիւն (ցպահանջ պահ տրուած դրամ կամ այլ իր): 2. Կտակ, պատուէր, խրատ, յանձնարարութիւն: 3. Տուրք, ընծայ, նուէր: 4. Սովորութիւն (աւանդական):
ԱՒԱՆԴԱԿԻՐ, տե՛ս ԱՒԱՆԴԱՊԱՀ:
ԱՒԱՆԴԱՄՈՒԱՑ, ա. Պատուիրազանց:
ԱՒԱՆԴԱՊԱՀ, ա. Աւանդակիր, օրինապահ:
ԱՒԱՆԴԱՏՈՒ, տե՛ս ԱՒԱՆԴԱՏՈՒՐ:
ԱՒԱՆԴԱՏՈՒՐ, գ. ա. Աւանդատու (պահելու համար աւանդ տուող):
ԱՒԱՆԴԵԼ[1], նբ. 1. Պատուիրել (իբրև պատուէր խրատ տալ): 2. Յանձնել, փոխանցել:
- ԱՒԱՆԴԵԼ ԶՈԳԻ. Վախճանել, մեռանել:
ԱՒԱՆԴԵԼ[2] (իմ), չբ. Մոլեգնել, ցնորել:
ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ, գ. 1. Աւանդ (աւանդելը, աւանդուածը): 2. Զրոյց (ժողովրդական անգիր վիպական ստեղծագործութիւն):
ԱՒԱՆԻԿ, մ. Ահա, ահաւանիկ:
ԱՒԱՋ, գ. 1. Ձայն, հնչիւն, մանաւանդ՝ մրմունջ, քաղցրաձայնութիւն: 2. Լեզու, խօսք:
ԱՒԱՍԻԿ, մ. Ահա, ահաւասիկ:
ԱՒԱՏԱԼ, տե՛ս ՀԱՒԱՏԱԼ:
ԱՒԱՐ, գ. 1. Առ, ապուռ, կապուտ, կողոպուտ: 2. Աւարառութիւն, աւարառումն:
- ԱՒԱՐ կամ ՅԱՒԱՐ կամ ՅԱՒԱՐԻ ԱԾԵԼ՝ ԱՌՆՈՒԼ՝ ՀԱՐԿԱՆԵԼ. Աւարել, կողոպտել, յափշտակել:
ԱՒԱՐԱԲԱՇԽ, ա. Աւարառու (աւարը բաժանող):
ԱՒԱՐԱՌՈՒ, ա. 1. Կողոպտիչ, յափշտակիչ: 2. Աւարաբաշխ:
ԱՒԱՐԱՌՈՒԹԻՒՆ, ԱՒԱՐԱՌՈՒՄՆ, գ. Աւարութիւն, աւարումն:
ԱՒԱՐԵԼ, ն. Աւար առնուլ, աւար հարկանել, յափշտակել, կողոպտել:

ԱԻԱՐՈՒԹԻՒՆ, ԱԻԱՐՈՒՄՆ, տե՛ս Ա-ԽԱՐԱՌՈՒԹԻՒՆ:
ԱԻԱՐՏ, գ. Վերջ, վախճան, ծայր, կատարած, յանգ:
ԱԻԱՐՏԱԳՈՐԾԵԼ, նբ. Կատարել, գլխաւորել, աւարտել:
ԱԻԱՐՏԱԿԷՏ, գ. (քեր.) Բնակէտ:
ԱԻԱՐՏԵԼ[1], նբ. Կատարել, յանգ Հանել, գլխաւորել, զկատարումն առնուլ:
ԱԻԱՐՏԵԼ[2] (իմ), չբ. Կատարելանալ, ծայրանալ, գերազանցել:
ԱԻԱՐՏՈՒՄՆ, գ. Կատարումն, աւարտ, վերջ, վախճան, յանգ, ծայր:
ԱԻԱՐՏՈՒՆ, ա. Յանգական, ամբողջական, կատարեալ:
ԱԻԱՔԵԼ, նբ. 1. Ապաքինել, փարատել, ցրել (ցաւը, հիւանդութիւնը): 2. Հաւաքել:
ԱԻԱՔԵՑՈՒՑԱՆԵԼ, տե՛ս ԱԻԱՔԵԼ (1):
ԱԻԵԱԼ, տե՛ս ԱԻՈՂԱԿԱՆ:
ԱԻԵԼ ԱԾԵԼ կամ ԱԾԵԼ ԱԻԵԼ. Մաքրել, սրբել:
ԱԻԵԼԱԲԱՆԵԼ, նբ. Զրաբանել (աւելորդ բաներ ասել՝ խօսել):
ԱԻԵԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. Առաւելաբանութիւն, զրաբանութիւն, զրախօսութիւն:
ԱԻԵԼԱԳՈՅՆ, ա. մ. Առաւելագոյն, առաւել, առաւել ևս, ևս քան զևս:
ԱԻԵԼԱԳՈՐԾ, ա. Աւելագործակ, աւելորդագործ, առաւելագործ, ումպէտ, վայրապար:
ԱԻԵԼԱԳՈՐԾԱԿ, տե՛ս ԱԻԵԼԱԳՈՐԾ:
ԱԻԵԼԱԴՐԵԼ, տե՛ս ԱՌԱԻԵԼԱԴՐԵԼ:
ԱԻԵԼԱԽՆԴԻՐ, ա. Զրախնդիր, հետաքրքիր, ընդվայրաքնին:
ԱԻԵԼԱԽՕՍ, ա. Զրախօս, ունայնաբան:
ԱԻԵԼԱԿԵՐՈՒԹԻՒՆ, գ. Շատկերութիւն, որկորամոլութիւն, որկրամոլութիւն:
ԱԻԵԼԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ, գ. Մականուն, աւելի անուն:
ԱԻԵԼԱՅԱՆՑ, տե՛ս ԱՌԱԻԵԼԱՁԱՆՑ:
ԱԻԵԼԱՍՏԱՑ, տե՛ս ԱԻԵԼԱՍՏԱՑՈՒ:
ԱԻԵԼԱՍՏԱՑՈՒ, ա. Աւելաստաց, աւելաստացուած, առաւելաստաց, ագահ:
ԱԻԵԼԱՍՏԱՑՈՒԱԾ, տե՛ս ԱԻԵԼԱՍՏԱՑՈՒ:
ԱԻԵԼԱՍՏԱՑՈՒԹԻՒՆ, գ. 1. Առաւելաստացութիւն, ագահութիւն, ընչաքաղցութիւն: 2. Աւելուածք, աւելուածութիւն:
ԱԻԵԼԻ, ա. մ. 1. տե՛ս ԱՌԱԻԵԼ: 2. Աւելորդ, վայրապար:
- ԱԻԵԼԻ ԱՆՈՒՆ, տե՛ս ԱԻԵԼԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ:
- ԱԻԵԼԻՔ կամ ԱԻԵԼԻ, գ. Աւելազանցութիւն (սահմանուածից աւելի մեծ քանակութիւն):
- ԱԻԵԼԻ ՔԱՆ, տե՛ս ԱՌԱԻԵԼ ՔԱՆ:
ԱԻԵԼՈՐԴ, ա. գ. 1. Անկարևոր, ումպէտ, ընդունայն, անդէպ: 2. Մնացորդ (աւելի մնացածը՝ եղածը): 3. Յաւելուած: 4. Անբաժ, անմասն: 5. Կոճատ (թիւ): 6. մ. Առաւել, առաւել ևս:
- ՅԱԻԵԼՈՐԴԱՅՆ, մ. Առաւել, առաւելապէս, ևս քան զևս:
ԱԻԵԼՈՐԴԱԲԱՐ, մ. 1. Վայրապար, իզուր, զուր: 2. Առատաբար, լի և լի:
ԱԻԵԼՈՐԴԱԳՈՐԾ, տե՛ս ԱԻԵԼԱԳՈՐԾ:
ԱԻԵԼՈՒԱԾՈՒԹԻՒՆ, ԱԻԵԼՈՒԱԾՔ, տե՛ս ԱԻԵԼԱՍՏԱՑՈՒԹԻՒՆ (2):
ԱԻԵՂԿԵԼ, տե՛ս ԱԻԱՂԵԼ:
ԱԻԵՏԱԲԱՆԵԼ, նբ. Աւետել, աւետաբանել:
ԱԻԵՏԱԲԵՐ, ա. Աւետաբերական, աւետամատոյց, աւետարանիչ, ուրախարար, բերկրական:
ԱԻԵՏԱԲԵՐԱԿԱՆ, տե՛ս ԱԻԵՏԱԲԵՐ:
ԱԻԵՏԱԳՐԵԼ, նբ. Աւետարանել:
ԱԻԵՏԱԼԻՑ, ա. Աւետաւոր, ուրախալից, ուրախաւէտ:
ԱԻԵՏԱՁԱՅՆԵԼ, նբ. Աւետել, աւետաւորել:
ԱԻԵՏԱՄԱՏՈՅՑ, տե՛ս ԱԻԵՏԱԲԵՐ:

ԱՒԵՏԱՊԱՐԳԵՒ, ա. Ուրախարար (աւետիք պարգեւող):
ԱՒԵՏԱՏՈՒ, ա. Աւետաբեր, աւետաւոր:
ԱՒԵՏԱՐԱՆԱԲԱՐ, մ. Աւետարանապէս, աւետարանակապէս (ըստ Աւետարանի):
ԱՒԵՏԱՐԱՆԱԳԻՐ, ա. գ. (կրօն.) Աւետարանիչ:
ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ, ա. Աւետաւորական, աւետաւոր, աւետաբեր:
ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆԱՊԷՍ, ԱՒԵՏԱՐԱՆԱՊԷՍ, տե՛ս ԱՒԵՏԱՐԱՆԱԲԱՐ:
ԱՒԵՏԱՐԱՆԵԼ, նբ. 1. Աւետել, աւետաւորել: 2. Հռչակել, յայտնի առնել, քարոզել, հրեչտակել:
ԱՒԵՏԱՐԱՆԻՉ, գ. ա. 1. Աւետարանագիր (Աւետարանը քարոզող): 2. Աւետաբեր:
ԱՒԵՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ, գ. Աւետարանումն (աւետարանելը):
ԱՒԵՏԱՐԱՆՈՒՄՆ, տե՛ս ԱՒԵՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ:
ԱՒԵՏԱՒՈՐ, ա. 1. Աւետաբեր, աւետատու, աւետաքարոզ: 2. Ուրախալիր, բերկրաբեր, բերկրելի:
ԱՒԵՏԱՒՈՐԱԿԱՆ, տե՛ս ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ:
ԱՒԵՏԱՒՈՐԵԼ, նբ. 1. Աւետել, աւետարանել: 2. Ուրախ առնել (աւետիքի լուրով):
ԱՒԵՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ, գ. 1. Աւետիք: 2. Աւետարանումն (աւետարանելը):
ԱՒԵՏԱՔԱՐՈԶ, ա. Աւետաւոր (աւետիքը հռչակող՝ աւետող):
ԱՒԵՏԵԼ, նբ. Աւետաւորել, աւետարանել:
ԱՒԵՏԻՔ, գ. 1. Աւետաւորութիւն (ուրախալի՝ բարի լուր): 2. Աւետչեայ:
ԱՒԵՏՉԵԱՅ, տե՛ս ԱՒԵՏԻՔ (2):
ԱՒԵՐ, ա. գ. 1. Աւերակ: 2. Աւերումն, աւերանք, կործանումն:
- ՅԱՒԵՐ ԴԱՌՆԱԼ. Յաւեր լինել, յաւեր մատնել (աւերուել):
- ՅԱՒԵՐ ԴԱՐՁՈՒՑԱՆԵԼ. Աւերել:
- ՅԱՒԵՐ ԼԻՆԵԼ, տե՛ս ՅԱՒԵՐ ԴԱՌՆԱԼ:
- ՅԱՒԵՐ ՄԱՏՆԵԼ (իմ), տե՛ս ՅԱՒԵՐ ԴԱՌՆԱԼ:
ԱՒԵՐԱԾ, գ. 1. Աւեր, աւերանք, կործանումն: 2. Շնացեալ, պոռնիկ (կին):
ԱՒԵՐԱԿ, տե՛ս ԱՒԵՐ:
ԱՒԵՐԱՆՔ, գ. Աւերումն:
ԱՒԵՐԵԼ, նբ. 1. Յաւեր դարձուցանել, քակել, քանդել, փլուցանել, կործանել, տապալել: 2. Յապականութիւն դարձուցանել, ապականել, եղծանել, անպիտանացուցանել:
ԱՒԵՐԻՉ, ա. Կործանիչ (աւերելու յատկութիւն ունեցող):
ԱՒԵՐՈՒԱԾ, ԱՒԵՐՈՒՄՆ, գ. Աւեր, աւերած, աւերանք (աւերելը, աւերուելը):
ԱՒԻՇ, ԱՒԻՇՔ, գ. Հիւթ, հոյզ:
ԱՒԻՒՆ, գ. Եռանդն, կիրք, հրայրք:
ԱՒՈԼՈՅ ԵԼԱՆԵԼ. Ընդոստնուլ, խրտչել, օձտել:
ԱՒՈՂԱԿԱՆ, ա. Աւեալ (աւիւնով բռնուած, ընդոստ խրտնող):
ԱՒՍԱՐԴ, գ. Պառաւ:
ԱՒՐ, տե՛ս ՕՐ:
ԱՓ, գ. Բուռն:
- ԱՓ ՅԱՓՈՅ, մ. Վեր ի վերոյ, յանպատրաստից:
- ԱՓՍ ՉԱՓԻ ՀԱՐԿԱՆԵԼ. Ծափ զծափի հարկանել, ծափել:
ԱՓԱՓԱՅ, գ. ա. Ապառաժ, առապար:
ԱՓԻԲԵՐԱՆ, մ. Լուռ, անպատասխանի:
- ԱՓԻԲԵՐԱՆ ԱՌՆԵԼ, տե՛ս ԱՓԻԲԵՐԱՆԵԼ:
- ԱՓԻԲԵՐԱՆ ԼԻՆԵԼ. Լռել, պապանձել, ի բերանս լինել (ձայն-ծպտուն չհանել):
ԱՓԻԲԵՐԱՆԵԼ, նբ. Ափիբերան առնել, ըմբերանել, բերանսել, լռեցուցանել, պապանձեցուցանել:
ԱՓՆ, 1. Գետափն, գետեզր, ծովեզր: 2. Եզր, ծագ, ծայր, ծնօտ, չուրթն:
ԱՓՇԵԼ (իմ), տե՛ս ԱՊՇԵԼ (իմ):
ԱՓՇԵՑՈՒՑԱՆԵԼ, տե՛ս ԱՊՇԵՑՈՒՑԱՆԵԼ:

ԱՓՇՈՒԹԻՒՆ, տե՛ս ԱՊՇՈՒԹԻՒՆ:
ԱՓՇՏԱԿՈՒԹԻՒՆ, տե՛ս ՅԱՓՇՏԱԿՈՒԹԻՒՆ:
ԱՓՍԵԱՑ, ԱՓՍԷ, գ. Պնակ, սկաւառակ, սկուտեղ, սկուտղ, խան:
ԱՓՓՈՎ, մ. Արդ, իրօք:
ԱՓՓՈՒՍՈՎԹ, ա. Հիւանդ:
- ՏՈՒՆ ԱՓՓՈՒՍՈՎԹ. Հիւանդանոց:
ԱՔ, գ. Ոտք:
ԱՔԱՂԱՂ, գ. Հաւ (որձ), խօսնակ, խօսօղ:
ԱՔԱՑԱՆՔ, գ. Աք, աքացիք, աքեացք:
ԱՔԱՑԵԼ, նբ. չբ. Աքցոտել, կցացել, կիցս ընկենուլ, ոտնհարել:
ԱՔԱՑԻՔ, ԱՔԵԱՑՔ, տե՛ս ԱՔԱՑԱՆՔ:
ԱՔՍՈՏԵԼ, չբ. Ընդոստնուլ, օձտել, աքացել:
ԱՔՍՈՐԱՆՔ, տե՛ս ԱՔՍՈՐՔ:
ԱՔՍՈՐԵԼ, նբ. Արտաքսել, արտասահմանել, տարագրել, վտարել:
ԱՔՍՈՐՔ, գ. Աքսորանք, մեՏաղք, արտասահմանութիւն, արտասահմանումն, տարագրութիւն:
ԱՔՑԱՆ, գ. Ունելիք:
ԱՔՑՈՏԵԼ, տե՛ս ԱՔԱՑԵԼ:

## Բ

ԲԱ[1], տե՛ս ԲԱՄ:
ԲԱ[2], մ. Արդարև, անշուշտ:
ԲԱ[3], ձ. տե՛ս ԲԱԲԷ:
ԲԱԲ, գ. Դուռն:
ԲԱԲԱԽԵԼ[1], նբ. 1. Բախբախել (իրար զարկել): 2. Բախել (դուռը):
ԲԱԲԱԽԵԼ[2] (իմ), չբ. Ընդհարկանել, բախել (իրար դիպչել):
ԲԱԲԱԽՈՒՄՆ, գ. Բախբախումն, ընդհարումն, բախումն, բախիւն:
ԲԱԲԱՆ, գ. Բաղխստր, քարընկէց, խոյ:
ԲԱԲԵԼԱԿԱՆ, տե՛ս ԲԱԲԵԼԱՑԻ:
ԲԱԲԵԼԱՑԻ, ա. գ. Բաբելական, բաբելովնացի:
ԲԱԲԵԼՈՎՆԱՑԻ, տե՛ս ԲԱԲԵԼԱՑԻ:
ԲԱԲԷ, ձ. Ո՛, ո՛վ, ա՛յ, բա՛ (զարմանքի բացականչութիւն):
ԲԱԲԷԱԿԱՆ, ա. Զարմանալի, հրաշալի (բաբէ ասելու արժանի):
ԲԱԳ, գ. Բաժ, բաժին, ժառանգութիւն:
ԲԱԳԻՆ, գ. 1. Զոհարան, զոհանոց: 2. Մեհեան, մեհենատաճար:
ԲԱԳՋԱՋԱԲԱՐ, մ. Միասնաբար, առհասարակ (հաւաքական կերպով):
ԲԱԳՋԱՋԱԿԱՆ կամ ԲԱԿՋԱՋԱԿԱՆ, ա. Հաւաքական, պարունական:
ԲԱԳՋԱՋԵԼ կամ ԲԱԿՋԱՋԵԼ, նբ. Հաւաքել, բովանդակել, բոլորել, միաւորել, պարփակել, պարագրել, ամփոփել:
ԲԱԳՆԱՊԵՏ, գ. Մեհենապետ, քրմապետ:
ԲԱԳՆԱՍԷՐ, ա. Կռամոլ, կռապաշտ:
ԲԱԳՈՐԴ, ա. Բաժանորդ, մասնակից, հաղորդ, հաղորդակից, կցորդ:
ԲԱԴԷՆ, գ. Շապիկ (կտաւէ կամ բեհեզէ):
ԲԱԴՐՈՆ, գ. 1. Բազմոց, տախտ: 2. Սնդուղք, աստիճան:
ԲԱԶԱՑ, տե՛ս ԲԱԶԷ:
ԲԱԶԷ, գ. (կենդբ.) Բազայ, գաւազ:
ԲԱԶԷԱԿԱԼ, գ. Բազէակիր, բազէկիր:
ԲԱԶԷԱԿԻՐ, ԲԱԶԷԿԻՐ, տե՛ս ԲԱԶԷԱԿԱԼ:
ԲԱԶԿԱԿԻՑ, ա. Օգնական, ձեռնտու, զօրավիգն:
ԲԱԶԿԱՆՈՑ, գ. Ապարանջան:
ԲԱԶԿԱՏԱՐԱԾ, ա. մ. Ձեռնատարած, Թևատարած, հանապազատարած:
ԲԱԶԿԱՐՁԱԿ, ա. Ստեղնաձիգ (լաւ ճիւղաւորուած, ճիւղաւէտ):
ԲԱԶԿԵԼ, նբ. 1. Ծայրատել: 2. Համառօտել:
ԲԱԶՄԱԲԱԺ, ԲԱԶՄԱԲԱԺԻՆ, ա. Բազմադիմի, բազմաբաշխ, բազմամասնեայ, բազմահերձ, բազմապատիկ, կերպս կերպըս:

ԲԱԶՄԱԲԱՂՁ, ԲԱԶՄԱԲԱՂՁԻԿ, ա. Բազմատենչալի, բազմափափագ, ցանկալի:

ԲԱԶՄԱԲԱՆ, ա. Առատաբան, ճոխաբան, պերճաբան, բազմասաց:

ԲԱԶՄԱԲԱՆԵԼ, չբ. Երկայնաբանել, երկարաբանել:

ԲԱԶՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ, գ. Երկայնաբանութիւն, շատաբանութիւն, շատախօսութիւն:

ԲԱԶՄԱԲԱՇԽ, ա. Բազմաբաժին, բազմամասնեայ, բազմատեսակ, բազմապատիկ, բազմօրինակ, պէսպէս:

ԲԱԶՄԱԲԱՐ, մ. ա. 1. Բազմաւորաբար, յոգնաբար, յոգնակի: 2. Բազմաւոր, յոգնական, բազմապատիկ:

ԲԱԶՄԱԲԱՐԲԱՌ, ա. Բազմալեզու, բազմաձայն:

ԲԱԶՄԱԲԵՂՈՒՆ, ա. 1. Բերրի, բազմապտուղ: 2. Բազմածին, բազմածնունդ: 3. Բազում, բազմապատիկ, բազմապիսի:

ԲԱԶՄԱԲԵՐ, ա. 1. տե՛ս ԲԱԶՄԱԲԵՂՈՒՆ: 2. մ. Առատապէս:

ԲԱԶՄԱԲԵՐԱՆԵԱՆ, ա. Բազմաստեղն (կանթեղ):

ԲԱԶՄԱԲԵՐՁ, ա. Բարձրաբերձ, վսեմ:

ԲԱԶՄԱԲԵՐՈՒԹԻՒՆ, գ. Արգասաւորութիւն:

ԲԱԶՄԱԲԻԾ, ա. Բազմամեղ:

ԲԱԶՄԱԲԻՒՐ, ա. Բազմաթիւ, բիւրաւոր, անհամար, անբաւ, անչափ, շատ:

ԲԱԶՄԱԲԻՒՐԱՒՈՐ, ա. Բազմաբիւր (բիւրաւոր զինուորներ ունեցող):

ԲԱԶՄԱԲՆԱԿ, ա. Մարդաշատ, բազմամարդ:

ԲԱԶՄԱԲՈՅԼ, ա. Բազմահոյլ, բազմագումար:

ԲԱԶՄԱԲՈՅՍ, ա. Բերրի, յուռթի, ճոխ:

ԲԱԶՄԱԲՈՑ, ա. Բոցադէզ, առատաբոց:

ԲԱԶՄԱԲՈՒԽ, ա. Առատաբուղխ, յորդաբուղխ:

ԲԱԶՄԱԳԱՀՈՒԹԻՒՆ, գ. Անյագութիւն:

ԲԱԶՄԱԳԱՆՁ, ա. 1. Գանձալից (գանձերով կամ հարստութեամբ լի): 2. Մեծագին, բազմագին:

ԲԱԶՄԱԳԷՏ, ա. Յոգնագէտ, բազմահմուտ, բանիբուն:

ԲԱԶՄԱԳԹԵԼԻ, ա. Դիւրագայթ, բազմասխալ:

ԲԱԶՄԱԳԻՆ, ԲԱԶՄԱԳՆԻ, ա. Մեծագին, ծանրագին, պատուական:

ԲԱԶՄԱԳԼԽԵԱՆ, ԲԱԶՄԱԳԼԽԻ, տե՛ս ԲԱԶՄԱԳԼՈՒԽ:

ԲԱԶՄԱԳԼՈՒԽ, ա. Բազմագլխեան, բազմագլխի, յոգնագլուխ:

ԲԱԶՄԱԳՈՅՆ[1], ա. Յոգնագոյն, յոլովագոյն:

ԲԱԶՄԱԳՈՅՆ[2], ա. 1. Գոյնագոյն, բազմերանգ: 2. մ. Բազմատեսակ, բազմօրինակ:

ԲԱԶՄԱԳՈՎ, ա. Բազմագովեստ, համբաւաւոր:

ԲԱԶՄԱԳՈՎԵՍՏ, տե՛ս ԲԱԶՄԱԳՈՎ:

ԲԱԶՄԱԳՈՐԾ, ա. Բազմահնար, ճարտար:

ԲԱԶՄԱԳՈՒԹ, ա. Բարեգութ, բազումողորմ, յաճախագութ, յոլովագութ, ազնուագութ:

ԲԱԶՄԱԳՈՒՄԱՐ, ա. Յոգնախումբ, բազմաժողով, բազմաթիւ, յոգնաթիւ:

ԲԱԶՄԱԳՈՒՆԱԿ, ա. Բազմազան, բազմապիսի, բազմայեղանակ, բազմատեսակ, պէսպէս:

ԲԱԶՄԱԳՈՒՆԴ, ա. 1. Բազմախումբ, գունդագունդ: 2. գ. Բազմութիւն:

ԲԱԶՄԱԳՈՒՆԻ, ա. Բազմատեսակ, զանազան, պէսպէս:

– ԲԱԶՄԱԳՈՒՆԻ ԱԿՆ. Սաթ:

ԲԱԶՄԱԴԱՐՁ, տե՛ս ԲԱԶՄԱԹԻՒՐ:

ԲԱԶՄԱԴԷԶ, ա. Բազմակոյտ:

ԲԱԶՄԱԴԷՄ, ա. 1. Բազմապատկեր (շատ կերպարանք ունեցող), քառակերպեան, բազմաչեայ: 2. Բազմատեսակ, բազմադիմի, բազմակերպ, բազմազան, զանազան, պէսպէս: 3. մ. Բազմօրինակ:

*ԲԱԶՄԱԴԷՏ*, ա. Քաջագէտ, քաջահայեաց (շատ բան գիտող):

*ԲԱԶՄԱԴԻՄԱԿ*, տե՛ս *ԲԱԶՄԱԴԷՄ* (2):

*ԲԱԶՄԱԴԻՄԻ*, ա. 1. Բազմադէմ, բազմազան, զանազան, պէսպէս, բազմապատիկ: 2. մ. Բազմօրինակ:

*ԲԱԶՄԱԴԻՄՈՒԹԻՒՆ*, գ. Բազմերեսութիւն:

*ԲԱԶՄԱԴՐՈՒԱԳԵԱԼ*, ա. Բազմազան, զանազան, պէսպէս (շատ դրուագներով յօրինուած):

*ԲԱԶՄԱԴՐՈՒԱԳՈՒԹԻՒՆ*, գ. Բազմամասնութիւն:

*ԲԱԶՄԱԴՐՈՒԱՏ*, ա. Բազմագովեստ, գովասանական, ներբողական:

*ԲԱԶՄԱԶԱՆ*, ա. Յոգնազան, զանազան, պէսպէս, բազմադիմի, բազմատեսակ, բազմապատիկ, բիւրազգի, ազգի ազգի:

*ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹԻՒՆ*, գ. Բազմատեսակութիւն, բազմակերպութիւն, զանազանութիւն:

*ԲԱԶՄԱԶԱՐԴ*, ա. Բարեզարդ, զարդարուն, շքեղ:

*ԲԱԶՄԱԶԱՐԴՈՒԹԻՒՆ*, գ. Շքեղութիւն (բարեզարդ լինելը):

*ԲԱԶՄԱԶԱՒԱԿ*, ա. Բազմորդի, բազմածին:

*ԲԱԶՄԱԶԲԱՂ*, ա. Բազմահոգ:

*ԲԱԶՄԱԶԳԵԱՆ*, տե՛ս *ԲԱԶՄԱԶԳԻ* (1):

*ԲԱԶՄԱԶԳԻ*, ա. 1. Բազմազգեան (շատ ազգերի վերաբերող): 2. Ազգի ազգի, բազմազան, բազմօրինակ:

*ԲԱԶՄԱԶԵՂ*, ա. Բազմազեղուն, առատաբուղխ, յորդառատ, յոգնահեղ:

*ԲԱԶՄԱԶԵՂՈՒՆ*, տե՛ս *ԲԱԶՄԱԶԵՂ*:

*ԲԱԶՄԱԶԻՆՈՒԹԻՒՆ*, տե՛ս *ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹԻՒՆ*:

*ԲԱԶՄԱԶՆ*, ա. Բազմազգի, բազմացեղ:

*ԲԱԶՄԱԶՈՒԱՐՃ*, ա. Զուարթագին, խնդալից:

*ԲԱԶՄԱԶՕՐ*, ա. Զօրաւոր, զօրեղ, հզօր:

*ԲԱԶՄԱԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ*, գ. Բազմիշխանութիւն:

*ԲԱԶՄԱԹԱԽԱՆՁ*, ա. Բազմահոգ, ճանճրացուցիչ:

*ԲԱԶՄԱԹԵՒ*, ա. Բազմաթեւեան (շատ թեւեր ունեցող):

*ԲԱԶՄԱԹԵՒԵԱՆ*, տե՛ս *ԲԱԶՄԱԹԵՒ*:

*ԲԱԶՄԱԹԻՒ*, ա. Յոգնաթիւ, յոգնահամար, անհամար, շատ:

*ԲԱԶՄԱԹԻՒՐ*, ա. Բազմադարձ, կամակոր, խեղաթիւր:

*ԲԱԶՄԱԺԱՄԱՆԱԿ*, տե՛ս *ԲԱԶՄԱԺԱՄԱՆԱԿԵԱՅ*:

*ԲԱԶՄԱԺԱՄԱՆԱԿԵԱՅ*, ա. 1. Երկայնակեաց: 2. Երկայնժամանակեան, հին, վաղուց:

*ԲԱԶՄԱԺԱՄԱՆԱԿԵԱՆ*, տե՛ս *ԲԱԶՄԱԺԱՄԱՆԱԿԵԱՅ*:

*ԲԱԶՄԱԺԱՄԱՆԱԿԷՈՒԹԻՒՆ*, գ. Երկայնակեցութիւն:

*ԲԱԶՄԱԺՈՂՈՎ*, ա. 1. Մարդաշատ, բազմամարդ, բազմամբոխ, քաղաքաժողով: 2. Բազմագումար, բազմաթիւ, խուռն, շատ: 3. գ. Բազմութիւն (հաւաքուածների մեծ խումբ):

*ԲԱԶՄԱԼԵԶՈՒ*, տե՛ս *ԲԱԶՄԱԲԱՐԲԱՌ*:

*ԲԱԶՄԱԼԻՑ*, ա. Բազմամբոխ, բազմամարդ, բազմաժողով:

*ԲԱԶՄԱԼԻ(Ք)*, ա. Բազմակոհակ, փխբ. ալէկոծ, խռովայոյզ:

*ԲԱԶՄԱԼՈՅՍ*, ա. Լուսաւոր, լուսափայլ:

*ԲԱԶՄԱԽԱԲ*, ա. Բազմապատիր, յոգնապատիր, մոլար, խաբեբայ:

*ԲԱԶՄԱԽԱՂԱԼԻ*, ա. Դիւրաշարժ:

*ԲԱԶՄԱԽԱՂԱՂ*, տե՛ս *ԲԱԶՄԱԽԱՌՆ* (1):

*ԲԱԶՄԱԽԱՌՆ*, ա. 1. Բազմախաղաղ, խառնակ: 2. Բազմաձայն, երաժշտական:

*ԲԱԶՄԱԽԻՏ*, ա. 1. Խուռնախիտ, հոծ, բազմաճիւղ, խուռն, կուռ: 2. Բազմամասն:

*ԲԱԶՄԱԽՄՈՒԹԻՒՆ*, գ. Գինըմպութիւն, արբեցութիւն:

ԲԱԶՄԱԽՈՅԶ ԼԻՆԵԼ. Բազմախուզել, հետազօտել։

ԲԱԶՄԱԽՈՐՇԱԿ, ա. Ձեռուցիչ, տոչորիչ, կիզանող (շատ խորշակ բերող)։

ԲԱԶՄԱԽՈՐՏԻԿ, ա. Մեծահաց, ճոխ։

ԲԱԶՄԱԽՈՒԶԵԼ, տե՛ս ԲԱԶՄԱԽՈՅԶ ԼԻՆԵԼ։

ԲԱԶՄԱԽՈՒԶՈՒԹԻՒՆ, գ. Հետաքննութիւն, հետազօտութիւն։

ԲԱԶՄԱԽՈՒՄԲ, ա. 1. Յոգնախումբ, յոլովախումբ, բազմաժողով, բազմաթիւ, շատ։ 2. Յոգնախմբեան (մեծ խմբով կատարուած՝ կատարուող)։

ԲԱԶՄԱԽՈՒՌՆ, ա. Յոգնախուռն, բազմակոյտ։

ԲԱԶՄԱԽՕՍ, ա. 1. Շատախօս։ 2. Յաճախաբան, յաճախապատում։

ԲԱԶՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ, գ. Շատախօսութիւն։

ԲԱԶՄԱԾԱԽ, ա. 1. Մեծածախ (շատ ծախս պահանջող), շքեղ։ 2. Մեծագին, բազմագին։

ԲԱԶՄԱԾԱՂԻԿ, ա. Յոգնածաղիկ, ծաղկալից։

ԲԱԶՄԱԾԻԾԱՂԵԼԻ, ա. Ծաղրալից, այպանալից։

ԲԱԶՄԱԾԻՆ, ա. Բազմածնունդ, յոլովածին, բեղնաւոր։

ԲԱԶՄԱԾՆՈՒԹԻՒՆ, գ. Բեղնաւորութիւն։

ԲԱԶՄԱԾՆՈՒՆԴ, տե՛ս ԲԱԶՄԱԾԻՆ։

ԲԱԶՄԱԾՈՒՓ, ա. Բազմայոյզ, բազմավրդով։

ԲԱԶՄԱԿ, գ. 1. Ճրագ, մոմ, լապտեր, կանթեղ, ղամբար։ 2. Ճրագարան, ճրագակալ, աշտանակ։

ԲԱԶՄԱԿԱԼ, գ. 1. Ճրագ։ 2. Ճրագարան, ճրագակալ, աշտանակ։ 3. տե՛ս ԲԱԶՄԱԿԱԿԱԼ։

ԲԱԶՄԱԿԱԿԱԼ, գ. Յարդարիչ (մոմի այրուած քիթը կտրելու փոքրիկ մկրատ)։

ԲԱԶՄԱԿԱՆ, ա. գ. 1. Կոչնական, սեղանակից, բարձակից, հիւր։ 2. Կոչունք, սեղան, հացկերոյթ, խնճոյք, խրախճանք, խրախութիւն, երախան։ 3. Բազմոց, նըստարան, գահոյք, գահ, բարձ։

– ԲԱԶՄԱԿԱՆ ԱՌՆԵԼ՝ ԱՐԿԱՆԵԼ. Սեղան ուղղել (բազմելու տեղ պատրաստել)։

ԲԱԶՄԱԿԱՆԱԿԻՑ, ա. Սեղանակից, սեղանորդ։

ԲԱԶՄԱԿԱՆԱՏՈՒ, տե՛ս ԿՈՉՆԱՏԷՐ։

ԲԱԶՄԱԿԱՏԱՐ, ա. 1. Ամենակատար (ամեն բանով կատարեալ)։ 2. (յունաբանութեամբ) Բազմածախ, մեծածախ։

ԲԱԶՄԱԿԱՑ, ա. Միաբանակեաց, վանական։

ԲԱԶՄԱԿԵՐՊ, ԲԱԶՄԱԿԵՐՊԻ, ա. Բազմատեսակ, բազմաձև, բազմապիսի, ազգի ազգի։

ԲԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ, գ. Բազմատեսակութիւն, բազմազանութիւն։

ԲԱԶՄԱԿԻ, ԲԱԶՄԱԿԻՆ, ա. մ. 1. Բազմապատիկ, բազմազան, բազում։ 2. Բազմաւորապէս, յոգնակի։

ԲԱԶՄԱԿՆ, ա. Բազմաչեայ։

ԲԱԶՄԱԿՈՀԱԿ, ա. Բազմալի(ք)։

ԲԱԶՄԱԿՈՅՏ, ա. 1. Բազմադէզ (շատ կուտակուած՝ դիզուած)։ 2. Բազմաժողով, բազմամբոխ։ 3. գ. Բազմութիւն, շատութիւն։

ԲԱԶՄԱԿՐԿԻՆ, ա. Ստէպ, յաճախ (յաճախակի կրկնուող)։

ԲԱԶՄԱՀԱՃՈՅ, ա. Հաճելի։

ԲԱԶՄԱՀԱՄԲԱՐ, ա. Յոգնահամբար։

ԲԱԶՄԱՀԱՄԲԱՒ, ա. Մեծահռչակ, հըռչակաւոր, երևելի։

ԲԱԶՄԱՀԱՄԲԵՐ, ա. Համբերատար։

ԲԱԶՄԱՀԱՅԵԱՑ, ա. Բազմաչեայ, բազմադէտ։

ԲԱԶՄԱՀԱՆԴԷՍ, ա. 1. Մեծավաստակ, քաջայաղթ։ 2. Հռչակաւոր։

ԲԱԶՄԱՀԱՆՃԱՐ, ա. Յոգնահանճար, շատահանճար, բազմագէտ, ճարտար։

ԲԱԶՄԱՀԱՌԱՉ, ա. Յոգնահառաչ, հառաչական:
ԲԱԶՄԱՀԱՏ, ա. Բազմահատեայ (հատիկները շատ):
ԲԱԶՄԱՀԱՏԵԱՅ, տե՛ս ԲԱԶՄԱՀԱՏ:
ԲԱԶՄԱՀԱՏՈՒԱԾ, ա. Բազմամասնեայ:
ԲԱԶՄԱՀԱՐԿԻ, ա. Մեծահարկի:
ԲԱԶՄԱՀԱՐՈՒՍՏ, ա. Ճոխ, պերճ, փառացի, նշանաւոր:
ԲԱԶՄԱՀԱՒԱՔ, ա. Յոգնահաւաք, բազմաժողով, բազմամարդ:
ԲԱԶՄԱՀԵՂ, ա. Յորդահոս:
ԲԱԶՄԱՀԻՒՍ, ա. Բազմամանուած, պատ ի պատ, փխբ. պատիր, խաբէական:
ԲԱԶՄԱՀՄՈՒՏ, ա. Բանիբուն, քաջահմուտ, շատիմաց, բազմափորձ:
ԲԱԶՄԱՀՄՏՈՒԹԻՒՆ, գ. Շատահմտութիւն:
ԲԱԶՄԱՀՆԱՐ, ա. 1. Ճարտար, հնարագիւտ: 2. Հնարիմաց, խորամանկ: 3. Քաջարուեստ: 4. Չարարուեստ, չարիմաց:
ԲԱԶՄԱՀՆԱՐԱԳԷՏ, ա. Մեծահնար:
ԲԱԶՄԱՀՈԳ, ա. Բազմազբաղ:
ԲԱԶՄԱՀՈԾ, ա. Խառն, բազմաթիւ:
ԲԱԶՄԱՀՈՅԼ, ա. Յոգնահոյլ, բազմախումբ, բազմաժողով, բազմաթիւ, բազմատեսակ, բազմապատիկ:
ԲԱԶՄԱՀՈՍ, ԲԱԶՄԱՀՈՍԱՆ, ա. Յորդահոս, առատահոս, մեծահոսան, յոգնահոսան, յորդ:
ԲԱԶՄԱՀՌՉԱԿ, ա. Հռչակաւոր, համբաւաւոր, յոգնապանծացեալ (շատ հռչակուած):
ԲԱԶՄԱՀՐԱՇԱՒՈՐ, ա. Մեծահրաշ, մեծաքանչ (շատ հրաշալի):
ԲԱԶՄԱՁԱՅՆ, ա. 1. Մեծաձայն, յոգնաձայն: 2. Բազմաբարբառ, բազմալեզու:
ԲԱԶՄԱՁԵՌՆ, ա. Յոլովաձեռն, բազմաթիւ, յոգնախումբ, յաճախագունդ (որտեղ կռուող ձեռքերը շատ են, շատ ձեռքերով՝ մարդկանց միջոցով կատարուող):
ԲԱԶՄԱՁԵՌՆԵԱՆ, տե՛ս 1. ԲԱԶՄԱՁԵՌՆ: 2. ԲԱԶՄԱՀՆԱՐ:
ԲԱԶՄԱՁԵՌՆՈՒԹԻՒՆ, գ. 1. Յոգնաձեռնութիւն, միաբանութիւն, գործակցութիւն, ձեռնտուութիւն: 2. Յաճախութիւն (յաճախ լինելը):
ԲԱԶՄԱՁԵՒ, ա. Բազմատեսակ, բազմակերպ, յոգնատեսիլ, պէսպէս, բազմագոյն:
ԲԱԶՄԱՃԱՃԱՆՉ, ա. Բազմաճառագայթ, յոգնաճաճանչ, ճաճանչագեղ, լուսափայլ, ճառագայթաւէտ, պայծառ:
ԲԱԶՄԱՃԱՄՈՒԿ, ա. Երփնունակ, գոյնագոյն, երփն երփն:
ԲԱԶՄԱՃԱՌԱԳԱՅԹ, տե՛ս ԲԱԶՄԱՃԱՃԱՆՉ:
ԲԱԶՄԱՄԱԳԻԼ, տե՛ս ԼԻԱՄԱԳԻԼ:
ԲԱԶՄԱՄԱՂՁ, ա. Մաղձական (շատ մաղձ ունեցող):
ԲԱԶՄԱՄԱՆ, ա. Բազմամանի, բազմամանուած, բազմահիւս, բազմամանուածոյ, մանուածապատ:
ԲԱԶՄԱՄԱՆԱԿ, ա. Յոգնամանակ, յերկարաձիգ, (քեր.) երկար (ձայնաւոր կամ վանկ):
ԲԱԶՄԱՄԱՆԻ, տե՛ս ԲԱԶՄԱՄԱՆ:
ԲԱԶՄԱՄԱՆԿՈՒԹԻՒՆ, գ. Բազմորդութիւն, բարեւորդութիւն, բարեմանկութիւն:
ԲԱԶՄԱՄԱՆՈՒԱԾ, տե՛ս ԲԱԶՄԱՄԱՆ:
ԲԱԶՄԱՄԱՆՈՒԱԾՈՅ, տե՛ս ԲԱԶՄԱՄԱՆ:
ԲԱԶՄԱՄԱՍՆ, ա. 1. Բազմամասնեայ, յոգնամասնեայ, բիւրամասնեայ (շատ մասեր ունեցող): 2. Բազմապատիկ, զանազան:
ԲԱԶՄԱՄԱՍՆԱԲԱՐ, մ. 1. Բազմամասնապէս, մանրամասնաբար: 2. Յաճախաբար, յաճախակի:
ԲԱԶՄԱՄԱՍՆԱՊԷՍ, տե՛ս ԲԱԶՄԱՄԱՍՆԱԲԱՐ:
ԲԱԶՄԱՄԱՍՆԵԱՅ, տե՛ս ԲԱԶՄԱՄԱՍՆ:

*ԲԱԶՄԱՄԱՐԴ, ա. Մարդաշատ, մարդախիտ, քաղաքաժողով:*

*ԲԱԶՄԱՄԱՐԴԻ, ԲԱԶՄԱՄԱՐԴԻԿ, ԲԱԶՄԱՄԱՐԴՈՅ, տե՛ս ԲԱԶՄԱՄԱՐԴ:*

*ԲԱԶՄԱՄԱՐԴՈՒԹԻՒՆ, գ. 1. Մարդաշատութիւն, շատամարդութիւն: 2. Բազմութիւն, ամբոխ:*

*ԲԱԶՄԱՄԱՐՄԻՆ, ա. Մարմնեղ, յաղթանդամ:*

*ԲԱԶՄԱՄԱՐՏ, ա. Քաջամարտիկ, անպարտելի:*

*ԲԱԶՄԱՄԲՈԽ, ա. 1. Բազմաժողով, խուռըն: 2. Բազմապատիկ, բազում, առատ: 3. Բազմավրդով, փոփոխական: 4. գ. Խառնիճաղանջ, ռամիկ:*

*ԲԱԶՄԱՄԲՈԽՈՒԹԻՒՆ, գ. Խառնակութիւն, խռովութիւն, շփոթ:*

*ԲԱԶՄԱՄԵԱՅ, ա. 1. Հին աւուրց, ծեր: 2. Հին, երկայնաձիգ:*

*ԲԱԶՄԱՄԵԱՆ, տե՛ս ԲԱԶՄԱՄԵԱՅ:*

*ԲԱԶՄԱՄԵԾԱՐ, ա. 1. Մեծարգոյ (շատ մեծարանքի՝ պատուի արժանի): 2. Մեծաշուք:*

*ԲԱԶՄԱՄԵՂ, ա. Բազմապարտ, մեծամեղ, ամենամեղ:*

*ԲԱԶՄԱՄԻՏ, ա. Հանճարեղ, մտացի, հնարագէտ:*

*ԲԱԶՄԱՄՍՈՒԹԻՒՆ, գ. Թանձրամսութիւն, գիրութիւն, պարարտութիւն:*

*ԲԱԶՄԱՄՏՈՒԹԻՒՆ, գ. Հանճար, ճարտարմտութիւն:*

*ԲԱԶՄԱՄՕԹԵԱՅ, ա. Ամօթալից, խայտառակ:*

*ԲԱԶՄԱՅԱԾԵԱՆ, ա. Յոգնայածուկ:*

*ԲԱԶՄԱՅԱՐԴԱՐ, ա. Զարդարուն (բազմօրինակ յարդարուած՝ զարդարուած):*

*ԲԱԶՄԱՅԱՐՄԱՐ, ա. Քաջայարմար, գեղեցկայարմար, ճարտար:*

*ԲԱԶՄԱՅԵՂ, ԲԱԶՄԱՅԵՂԱՆԱԿ, ա. Բազմօրինակ, բազմազան, պէսպէս, ազգի ազգի:*

*ԲԱԶՄԱՅԵՂԱՆԱԿԱԲՈՒՆ, ա. Մեծաբոյս (ի բնէ՝ բնականից բազմապիսի):*

*ԲԱԶՄԱՅԵՂՅ, ա. Բազմազեղ, լիուլի, յորդ, առատ, բազում, բազմապատիկ:*

*ԲԱԶՄԱՅՈՅԶ, ա. Խռովայոյզ:*

*ԲԱԶՄԱՅՈՐԴ, ա. Յորդառատ, բազմապատիկ:*

*ԲԱԶՄԱՅՈՐԴՈՐ, ա. Քաջայորդոր, քաջայօժար, փոյթ:*

*ԲԱԶՄԱՅՐ, ա. 1. Բազմանկողին (շատ տղամարդկանց հետ ամուսնացած): 2. Բազմամարդ, մարդաշատ:*

*ԲԱԶՄԱՅՕԴ, ա. 1. Բազմամասն (շատ յօդեր՝ խաղեր ունեցող): 2. մ. Յօդ յօդ (կտոր-կտոր):*

*ԲԱԶՄԱՆԱԼ, չբ. 1. Շատանալ (թուով աւելանալ): 2. Առատանալ, առաւելուլ, լիանալ:*

*ԲԱԶՄԱՆԻՒԹ, ա. Բազմահնար, նենգաւոր, չարարուեստ:*

*ԲԱԶՄԱՆԿ, ա. Բազմամանուած, բազմահիւս, բազմապատիկ:*

*ԲԱԶՄԱՆԿԻՒՆ, ա. Բազմանկիւնի:*

*ԲԱԶՄԱՆԿԻՒՆԻ, տե՛ս ԲԱԶՄԱՆԿԻՒՆ:*

*ԲԱԶՄԱՆԿՈՂԻՆ, տե՛ս ԲԱԶՄԱՅՐ (1):*

*ԲԱԶՄԱՆՁՈՒԿ, ա. Անձկալի, կաթոգին:*

*ԲԱԶՄԱՆՇԱՆ, տե՛ս ԲԱԶՄԱՆՇԱՆԱԿ:*

*ԲԱԶՄԱՆՇԱՆԱԿ, ա. Բազմանշան (շատ բան նշանակող՝ արտայայտող):*

*ԲԱԶՄԱՆՇՈՅԼ, ա. Բազմալոյս, առատալոյս:*

*ԲԱԶՄԱՆՈՒԱՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ԲԱԶՄԱՆՈՒՆՈՒԹԻՒՆ:*

*ԲԱԶՄԱՆՈՒՆ, ա. Յոգնանուն:*

*ԲԱԶՄԱՆՈՒՆԱԲԱՐ, մ. Բազմանունապէս, յոգնակի (բազմանուն կերպով, յոգնակի թուով՝ ձևով):*

*ԲԱԶՄԱՆՈՒՆԱՊԷՍ, տե՛ս ԲԱԶՄԱՆՈՒՆԱԲԱՐ:*

*ԲԱԶՄԱՆՈՒՆՈՒԹԻՒՆ, գ. Բազմանուանութիւն, յոգնանուն:*

ԲԱԶՄԱՇԱՀ, ա. Շահաէտ, շահաւոր, յոգնաշահ, մեծաշահ:
- ԲԱԶՄԱՇԱՀ ԼԻՆԵԼ. Շահել, ճոխանալ, հարստանալ:
ԲԱԶՄԱՇԱՀՈՒԹԻՒՆ, գ. Շահաէտութիւն:
ԲԱԶՄԱՇԱՐԱԴՐԵԱԼ, ա. Բազմամասն:
ԲԱԶՄԱՇԱՐԺ, ա. Դիւրափոխ, դիւրափոփոխ:
ԲԱԶՄԱՇԱՐԺՈՒԹԻՒՆ, գ. Շարժականութիւն, դիւրափոփոխութիւն:
ԲԱԶՄԱՇԽԱՏ, ա. Մեծավաստակ, բազմաջան (շատ աշխատանք՝ նեղութիւն պահանջող):
ԲԱԶՄԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ, գ. Ճիգն, քիրտն:
ԲԱԶՄԱՇՆՈՐՀ, ա. 1. Բազմապարգեւ, յոգնաշնորհ, առատաշնորհ: 2. Շնորհալի, բարեշնորհ:
ԲԱԶՄԱՇՈՒՔ, ա. Մեծաշուք:
ԲԱԶՄԱՇՐՋՈՒԹԻՒՆ, գ. Շատաշրջութիւն (շատ տեղ շրջելը՝ ման գալը):
ԲԱԶՄԱՇՐՋՈՒՄՆ, գ. Յեղյեղումն (կրրկընուող խօսքի պէսպիսութիւն):
ԲԱԶՄԱՇՓՈՅԹ, ա. Խառնակ, խառնափընդոր:
ԲԱԶՄԱՈՍՏ, տե՛ս ԲԱԶՄՈՍՏ:
ԲԱԶՄԱՉԱՐ, ա. Չարալից, չարաչար:
ԲԱԶՄԱՉԱՓ, ա. Բազմաթիւ (մեծ չափով՝ քանակով):
ԲԱԶՄԱՉԵԱՅ, ա. Յոգնաչեայ:
ԲԱԶՄԱՊԱՂԱՏ, ա. Աղերսալի, աղերսալից:
ԲԱԶՄԱՊԱՃՈՅՃ, ա. Յոգնապաճոյճ, զարդարուն:
ԲԱԶՄԱՊԱՅԾԱՌ, ա. 1. Լուսաւոր, մեծապայծառ, յստակ, մաքրափայլ: 2. Մեծաշուք, հոյակապ, շքեղ:
ԲԱԶՄԱՊԱՅԾԱՌՈՒԹԻՒՆ, գ. Շքեղութիւն:
ԲԱԶՄԱՊԱՏԻԿ, ա. 1. Բազմատեսակ, բազմապիսի, բազմադիմի, ազգի ազգի, բազում, բազմազան, յոլով, շատ: 2. Բազմապատիւ, պատուական, ընտիր, ազնիւ, մեծածախ, մեծագին: 3. մ. Բազմապատկաբար, բազմապատկապէս, յոգնապատկաբար, բազմամասնաբար, բազմօրինակ:
- ԲԱԶՄԱՊԱՏԻԿ ԱՌՆԵԼ. 1. Բազմացուցանել, բազմապատկացուցանել: 2. (Թուաբ.) Բազմապատկել:
- ԲԱԶՄԱՊԱՏԻԿ ԼԻՆԵԼ. 1. Բազմանալ, շատանալ: 2. (Թուաբ.) Բազմապատկանալ:
ԲԱԶՄԱՊԱՏԻՐ, ա. Յոգնապատիր, բազմախաբ, խաբեբայ, խաբուսիկ:
ԲԱԶՄԱՊԱՏԻՒ, ա. 1. Յոգնապատիւ, մեծապատիւ, մեծաշուք: 2. Պատուական, մեծագին:
ԲԱԶՄԱՊԱՏԿԱԲԱՐ, տե՛ս ԲԱԶՄԱՊԱՏԻԿ (3):
ԲԱԶՄԱՊԱՏԿԱՆԱԼ, տե՛ս ԲԱԶՄԱՊԱՏԻԿ ԼԻՆԵԼ:
ԲԱԶՄԱՊԱՏԿԱՊԷՍ, տե՛ս ԲԱԶՄԱՊԱՏԻԿ (3):
ԲԱԶՄԱՊԱՏԿԱՌ, ա. Ամօթապարտ, ամօթալից:
ԲԱԶՄԱՊԱՏԿԱՑՈՒՑԱՆԵԼ, տե՛ս ԲԱԶՄԱՊԱՏԻԿ ԱՌՆԵԼ (1):
ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼ, տե՛ս ԲԱԶՄԱՊԱՏԻԿ ԱՌՆԵԼ:
ԲԱԶՄԱՊԱՏԿԵՐ, ա. Բազմադիմակ, բազմադիմի, բազմադէմ, բազմօրինակ:
ԲԱԶՄԱՊԱՏԿԵՑՈՒՑԱՆԵԼ, տ՛ս ԲԱԶՄԱՊԱՏԻԿ ԱՌՆԵԼ (2):
ԲԱԶՄԱՊԱՏՈՒՄ, ա. Յաճախապատում, յաճախաբան:
ԲԱԶՄԱՊԱՐԳԵՒ, ա. Յոգնապարգեւ, առատապարգեւ, առատաշնորհ, առատաձիր, առատ:
ԲԱԶՄԱՊԱՐԻՍՊ, ա. Պարսպաւոր:
ԲԱԶՄԱՊԱՐՈՒՆԱԿ, ա. Բազմապատիկ (շատ բան պարունակող):
ԲԱԶՄԱՊԱՐՏ, տե՛ս ԲԱԶՄԱՄԵՂ:
ԲԱԶՄԱՊԵՏՈՒԹԻՒՆ, տե՛ս ԲԱԶՄԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ:

ԲԱԶՄԱՊԷՍ, մ. Մեծապէս, առատապէս, բազմօք:
ԲԱԶՄԱՊԻՍԻ, ա. Յոգնապիսի, բազմազան, զանազան, պէսպէս, բազմապատիկ:
ԲԱԶՄԱՊՏՂԱԲԵՐ, ԲԱԶՄԱՊՏՂԱԿԱՆ, տե՛ս ԲԱԶՄԱՊՏՈՒՂ:
ԲԱԶՄԱՊՏՈՒՂ, ա. Յոգնապտուղ, պըտղալից, պտղաւէտ:
ԲԱԶՄԱՋԱՆ, ա. Յոգնաջան, բազմաշխատ, տաժանելի:
ԲԱԶՄԱՋՈՒՐ, ա. Ջրառատ, ջրարբի:
ԲԱԶՄԱՌԱՏ, ա. Յորդառատ, առատաձիր:
ԲԱԶՄԱՍԱՀ, ա. Դիւրագայթ, լպիրծ:
ԲԱԶՄԱՍԱՑ, տե՛ս ԲԱԶՄԱԲԱՆ:
ԲԱԶՄԱՍԵՂԵԽ, ա. Պոռնիկ (կին):
ԲԱԶՄԱՍԵՐ, ա. Բազմազաւակ (շատ սերունդ ունեցող):
ԲԱԶՄԱՍԵՐԵԼ, նբ. Յոգնասերել (սերունդը բազմացնել):
ԲԱԶՄԱՍԵՐՄ(Ն), ա. 1. տե՛ս ԲԱԶՄԱՍԵՐ: 2. Խառնակ, պոռնկական:
ԲԱԶՄԱՍԽԱԼ, ա. Բազմավրէպ, ամենասխալ, ամենավրէպ:
ԲԱԶՄԱՍՏԱՑՈՒԱԾ, ա. Մեծատուն, ընչաւէտ, հարուստ:
ԲԱԶՄԱՍՏԱՑՈՒԹԻՒՆ, գ. Մեծատնութիւն, ընչաւէտութիւն:
ԲԱԶՄԱՍՏԵՂՆ, ԲԱԶՄԱՍՏԵՂՆԵԱՆ, ա. Բիւրաստեղն, բազմոստ, բազմոստեայ, բիւրոստեան:
ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾ, ա. Յոգնաստուած, բազմաստուածեան, հեթանոսական:
- ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾՔ, գ. Կուռք (հեթանոսական աստուածներ):
ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾԱԲԱՐ, մ. Հեթանոսաբար (իբրև բազմաստուած):
ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾԵԱՆ, տե՛ս ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾ:
ԲԱԶՄԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆ, գ. Յոգնաստուածութիւն, հեթանոսութիւն, դիցապաշտութիւն, կռապաշտութիւն:
ԲԱԶՄԱՍՔԱՆՉ, ա. Մեծասքանչ, հրաշալի, հրաշափառ, սքանչելագործ:
ԲԱԶՄԱՎԷՊ, ա. Բազմապատում:
ԲԱԶՄԱՎԻՇՏ, ա. 1. Բազմաչարչար: 2. Վշտալից:
ԲԱԶՄԱՎՆԱՍ, ա. Վնասակարագոյն (շատ վնասակար):
ԲԱԶՄԱՎՏԱՆԳ, ա. Բազմորոգայթ (շատ վտանգներ պարունակող):
ԲԱԶՄԱՎՐԴՈՎ, ա. Յոգնավրդով (շատ վրդովուած՝ յուզուած):
ԲԱԶՄԱՎՐԷՊ, տե՛ս ԲԱԶՄԱՍԽԱԼ:
ԲԱԶՄԱՏԱԳՆԱՊ, ա. Վարանական, նեղիչ:
ԲԱԶՄԱՏԱՐ, ա. Յոգնատար, ընդարձակ, մեծ:
ԲԱԶՄԱՏԱՐԱԾ, ա. 1. Յոգնատարած (շատ տարածուած): 2. Յաճախակի, յաճախ:
ԲԱԶՄԱՏԵՂԵԱԿ, ա. Բազմահմուտ (շատ բանի տեղեակ):
ԲԱԶՄԱՏԵՆՉԱԼԻ, ա. Բազմափափագ:
ԲԱԶՄԱՏԵՍ, ա. Շատատես, սրատես, բազմաչեայ, բազմահայեաց, բազմակն:
ԲԱԶՄԱՏԵՍԱԿ, ա. 1. Բիւրատեսակ, յոգնատեսակ, բազմադիմի, բազմակերպ, բազմօրինակ, ազգի ազգի: 2. մ. Բազմապատկապէս:
ԲԱԶՄԱՏԵՍԱԿՈՒԹԻՒՆ, գ. Պէսպիսութիւն, զանազանութիւն:
ԲԱԶՄԱՏԵՍԻԼ, տե՛ս ԲԱԶՄԱՏԵՍԱԿ և ԲԱԶՄԱՏԵՍ:
- ԲԱԶՄԱՏԵՍԻԼՔ, գ. (յունաբանութեամբ) Բազմատեսակութիւն, պէսպիսութիւն:
ԲԱԶՄԱՏԵՍՈՂ, տե՛ս ԲԱԶՄԱՏԵՍ:
ԲԱԶՄԱՏԵՒԱԿԱՆ, ա. Տևական, տևողական, յերկարաձիգ:
ԲԱԶՄԱՏԻ, ա. Երկայնակեաց, ծերունի:
ԲԱԶՄԱՏԻՊ, ա. Բազմօրինակ, բազմադիմի, բազմատեսակ:
ԲԱԶՄԱՏԽՈՒՐ, ա. Յոգնատխուր, տըխրալից, տրտմալի, տխրական:

ԲԱԶՄԱՏՈՀՄ, ա. 1. Բազմազեղ, առատ: 2. Բազմամբոխ, բազմամարդ:

ԲԱԶՄԱՏՈՒՆԿ, ա. Տնկախիտ, բազմոստեայ:

ԲԱԶՄԱՐԴԻՒՆ, տե՛ս ԱՐԴԻՒՆԱՇԱՏ:

ԲԱԶՄԱՐԺԱՆԻ, ա. Իրաւացի, արդար (բոլորովին արժանաւոր):

ԲԱԶՄԱՐԾԱԹ, տե՛ս ԲԱԶՄԱԳԱՆՁ (1):

ԲԱԶՄԱՐԿԱԾԵԱՆ, ա. Բազմավտանգ (արկածներով լի):

ԲԱԶՄԱՐՈՒԵՍՏ, ա. Բազմահնար, ճարտար:

ԲԱԶՄԱՑԵՂ, ա. Բազմազն:

ԲԱԶՄԱՑԻՐ, ա. Ցիր և ցան:

ԲԱԶՄԱՑՆՈՐ, ա. Բազմահոգ:

ԲԱԶՄԱՑՈՒՄՆ, գ. Յաճախութիւն:

ԲԱԶՄԱՑՈՒՆԴ, ա. Բազմազեղ:

ԲԱԶՄԱՑՈՒՑԱՆԵԼ, պբ. Շատացուցանել, աճեցուցանել, յաւելուլ, առատացուցանել:

ԲԱԶՄԱԻԱՂԵԼԻ, ա. Աւաղական:

ԲԱԶՄԱԻՈՐ, ա. Շատ, բազում, բազմաթիւ:

ԲԱԶՄԱԻՈՐԱԲԱՐ, մ. Յոգնակի, յոգնաբար (յոգնակիի թուով՝ ձևով):

ԲԱԶՄԱԻՈՐԱԿԱՆ, ա. 1. Յոգնական (յոգնակիութիւն արտայայտող): 2. Շատ, բազում, բազմաւոր, բազմաթիւ, բազմապատիկ: 3. մ. տե՛ս ԲԱԶՄԱԻՈՐԱԲԱՐ:

ԲԱԶՄԱԻՈՐԱՊԷՍ, մ. Ստէպ, յաճախ:

ԲԱԶՄԱԻՈՒՐԲ, ա. Երկայնօրեայ, երկայնաձիգ:

ԲԱԶՄԱՓԱՅԼ, ա. Յոգնափայլ, լուսապայծառ:

ԲԱԶՄԱՓԱՐԹԱՄ, ա. Բազմագանձ (շատ փարթամ՝ հարուստ):

ԲԱԶՄԱՓԱՓԱԳ, ա. Բազմատենչալի, ցանկալի:

ԲԱԶՄԱՓՈԽ, տե՛ս ԲԱԶՄԱՓՈՓՈԽ:

ԲԱԶՄԱՓՈՅԹ, ա. Բազմաջան, բազմահոգ:

ԲԱԶՄԱՓՈՐՁ, տե՛ս ԲԱԶՄԱՀՄՈՒՏ:

ԲԱԶՄԱՓՈՐՁՈՒԹԻՒՆ, տե՛ս ԲԱԶՄԱՀՄՏՈՒԹԻՒՆ:

ԲԱԶՄԱՓՈՓՈԽ, ա. Բազմափոխ (շատ փոփոխական):

ԲԱԶՄԱՔԱՆՔԱՐ, ա. 1. Մեծագին, ծանրագին: 2. Ծանրաբեռն (շատ ծանր):

ԲԱԶՄԱՔՆ(Ն)ԻՆ, ա. Բազմախոյզ, հետաքնին, հետաքրքիր:

ԲԱԶՄԱՔՆՆՈՒԹԻՒՆ, գ. Հետաքննութիւն, հետազօտութիւն:

ԲԱԶՄԵԼ (իմ), չբ. Նստել, հանգչել, գետեղել:

ԲԱԶՄԵՂՈՒԹԻՒՆ, գ. Բազմածնութիւն, բեղմնաւորութիւն:

ԲԱԶՄԵՐԱԽՏ, ա. Բազմերախտիս, բազմերախտիք (երախտիքը շատ, շատ երախտիքով եղած):

ԲԱԶՄԵՐԱԽՏԻՍ, ԲԱԶՄԵՐԱԽՏԻՔ, տե՛ս ԲԱԶՄԵՐԱԽՏ:

ԲԱԶՄԵՐԱԽՏՈՒԹԻՒՆ, գ. Երախտաւորութիւն, (մեծամեծ բարերարութիւն):

ԲԱԶՄԵՐԱՄ, ա. Բազմաժողով, յոգնախումբ, գունդագունդ, դասադաս:

ԲԱԶՄԵՐԱՆ, ԲԱԶՄԵՐԱՆԱԻԷՏ, ա. Բազմերանեան, յոգներանեան, երանաւէտ (շատ երանելի՝ երջանիկ):

ԲԱԶՄԵՐԱՆԳ, ա. Բազմագոյն, երփնագոյն, երփնունակ, գոյնագոյն, գունակ գունակ:

ԲԱԶՄԵՐԱՆԵԱՆ, տե՛ս ԲԱԶՄԵՐԱՆ:

ԲԱԶՄԵՐԵՍՈՒԹԻՒՆ, տե՛ս ԲԱԶՄԱԴԻՄՈՒԹԻՒՆ:

ԲԱԶՄԵՐՋԱՆԻԿ, ա. Յոգներջանիկ, երանելի:

ԲԱԶՄԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ, գ. Երանութիւն:

ԲԱԶՄԵՑՈՒՑԱՆԵԼ, պբ. Նստուցանել:

ԲԱԶՄԵՓԵԱՑ, ա. Եփեցական:

ԲԱԶՄԸՌԻՇՏ, ա. Ռիշտ, ճղճիմ, կծծի (չափազանց ժլատ):

ԲԱԶՄԻՄԱՍՏ, ա. Հանճարեղ, իմաստալից, յոգնամիտ:

ԲԱԶՄԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ, գ. Բազմապետութիւն:
ԲԱԶՄԻՐՈՒԹԻՒՆ, գ. Հետաքննութիւն (շատ բաներով հետաքրքրուելը):
ԲԱԶՄՈՍՏ, ԲԱԶՄՈՍՏԵԱՑ, տե՛ս ԲԱԶՄԱՍՏԵՂՆ:
ԲԱԶՄՈՐԱԿ, ա. Բազմագոյն, գոյնագոյն:
ԲԱԶՄՈՐԴԻ, տե՛ս ԲԱԶՄԱԶԱՒԱԿ:
ԲԱԶՄՈՐԴՈՒԹԻՒՆ, գ. Գեղեցկորդութիւն (գեղեցիկ՝ շատ որդիներ ունենալը):
ԲԱԶՄՈՐԻՇ, ա. Բազմազան, բազմապատիկ, բազմօրինակ:
ԲԱԶՄՈՐՈԳԱՅԹ, ա. Բազմավտանգ (որտեղ շատ որոգայթներ կան):
ԲԱԶՄՈՑ, գ. Բազմական (սեղանի շուրջը բազմելու՝ նստելու տեղ):
ԲԱԶՄՈՒԹԻՒՆ, գ. 1. Յոլովութիւն, շատութիւն: 2. Յաճախութիւն, առատութիւն, առաւելութիւն, ճոխութիւն: 3. Յերկարութիւն, երկայնութիւն: 4. Ամբոխ: 5. Գունդ, խումբ:
ԲԱԶՄՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ, գ. Աւելաստացութիւն, ագահութիւն:
ԲԱԶՄՈՒՍՄՆԱԲԱՐ, մ. Իմաստնաբար:
ԲԱԶՄՈՒՍՄՆՈՒԹԻՒՆ, գ. Բազմուսումնութիւն, բազումուսմնութիւն, շատուսումնութիւն (բազմուսումն՝ շատ գիտուն լինելը):
ԲԱԶՄՈՒՍՈՒՄՆ, ա. Գիտուն (շատ ուսեալ, մեծ գիտութեան տէր):
ԲԱԶՄՈՒՍՈՒՄՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ԲԱԶՄՈՒՍՄՆՈՒԹԻՒՆ:
ԲԱԶՄՈՒՐԱԽ, ա. մ. Ուրախալից (շատ ուրախ):
ԲԱԶՄՕՐԵԱՑ, ա. 1. Երկայնօրեայ (շատ օրեր տևող): 2. Երկայնակեաց, բազմամեայ, հին աւուրց:
ԲԱԶՄՕՐԻՆԱԿ, ա. 1. Բազմայեղանակ, բազմակերպ, բազմազան, բազմապիսի, բազմապատիկ: 2. մ. Բազմօրինակաբար, բազմօրինակապէս, բազմօրինակօք, ընդ յոլով եղանակս:
ԲԱԶՄՕՐԻՆԱԿԱԲԱՐ, ԲԱԶՄՕՐԻՆԱԿԱՊԷՍ, ԲԱԶՄՕՐԻՆԱԿՕՔ, տե՛ս ԲԱԶՄՕՐԻՆԱԿ (2):
ԲԱԶՄՕՐՀՆԵԱԼ, ա. Բազմօրհնեան (շատ օրհնութեան արժանի):
ԲԱԶՄՕՐՀՆԵԱՆ, տե՛ս ԲԱԶՄՕՐՀՆԵԱԼ:
ԲԱԶՈՒԿ, գ. 1. (կզմխս.) Տիգք: 2. Թև: 3. Թև բանակի: 4. փխբ. Ոյժ, զօրութիւն, կարողութիւն, իշխանութիւն: 5. Ճիւղ, ոստ: 6. տե՛ս ԱՐՄԱԻ (2):
ԲԱԶՈՒՄ, ա. 1. Յոլով, շատ, բազմաթիւ: 2. գ. Բազում ինչ (շատ բան): 3. մ. տե՛ս ԲԱԶՈՒՄ ԱՆԳԱՄ:
- ԲԱԶՈՒՄ ԱՅՆ Է, մ. Առաւել, աւելի ևս:
- ԲԱԶՈՒՄ ԱՆԳԱՄ, մ. 1. Յոլով անգամ, շատ անգամ, բազում ինչ, բազումս: 2. Եւս առաւել, ևս աւելի:
- ԲԱԶՈՒՄ ԻՆՉ, ԲԱԶՈՒՄՍ, մ. Բազում անգամ, ստէպ, շատ, յոյժ, կարի:
- ԲԱԶՈՒՄ ՈՒՍՏԵՔ. Յոլով ուստեք:
- ԲԱԶՈՒՄ ՈՒՐԵՔ. Յոլով ուրեք:
- ԲԱԶՈՒՄՔ, գ. Յոլովք, բազմութիւն:
- ԲԱԶՄՕՔ, մ. Բազմօրինակօք (շատ կերպով):
- Ի ԲԱԶՄԱՑ ՀԵՏԷ, մ. Յոգնուստ:
- Ոչ ԲԱԶՈՒՄ, ա. մ. Սակաւ:
ԲԱԶՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԵԱՑ, տե՛ս ԲԱԶՄԱԺԱՄԱՆԱԿԵԱՑ:
ԲԱԶՈՒՄՈՂՈՐՄ, տե՛ս ԱՄԵՆԱԳԹԱԾ:
ԲԱԶՈՒՄՈՒՍՄՆՈՒԹԻՒՆ, տե՛ս ԲԱԶՄՈՒՍՈՒՄՆՈՒԹԻՒՆ:
ԲԱԶՊԱՆ, տե՛ս ՁԵՌՆՈՒՐԱՐ:
ԲԱԶՐԻՔ, գ. Բազմոց, գահոյք:
ԲԱԹՐՈՆ, տե՛ս ԲԱԴՐՈՆ:
ԲԱԺ, գ. 1. Մասն, բաժին: 2. Տուրք, մաքս, սակ, հարկ:
ԲԱԺԱԿ, գ. 1. Գաւաթ, դաշտ, նուագ, ըմպանակ, ըմբոց, սկիհ: 2. Գինի (բաժակի մէջ լցուած): 3. փխբ. Նշանակ (չարչարանքի, վշտի, բարկութեան, ինչպէս նաև փրկութեան, ուրախութեան, սիրոյ են խորհրդանիշ):

ԲԱԺԱՄԻՏ, ա. Երկմիտ, թերահաւատ:
ԲԱԺԱՄՏՈՒԹԻՒՆ, գ. Երկմտութիւն:
ԲԱԺԱՆ, գ. Բաժին, մասն:
ԲԱԺԱՆԱԲԱՐ, մ. Մասնաբար, անջատաբար, մեկուսաբար, զատ ի զատ:
ԲԱԺԱՆԱԿԱԼ, ա. Ժառանգ, ժառանգորդ:
- ԲԱԺԱՆԱԿԱԼ ԼԻՆԵԼ. Ժառանգել:
ԲԱԺԱՆԱԿԱՄ, ա. Բաժանասէր, փխբ. անմիաբան:
ԲԱԺԱՆԱԿԱՆ, ա. 1. Անջատական, մասնական (որ կարող է մասերի բաժանուել): 2. Բաժանողական, որոշիչ (որ կարող է բաժանել՝ տրոհել):
ԲԱԺԱՆԱԿԻՑ, ա. Բաժանորդ, մասնակից, հաղորդ, կցորդ, հաղորդակից, հասարակորդ, ընկեր:
ԲԱԺԱՆԱՍԷՐ, տե՛ս ԲԱԺԱՆԱԿԱՄ:
ԲԱԺԱՆԵԼ, ն. 1. Մասնաւորել, բաշխել, վիճակել: 2. Սփռել, ծաւալել, ցրել: 3. Տրոհել, զատուցանել, զատանել, անջատել, մեկնել, որոշել, քակել: 4. Զանազանել:
ԲԱԺԱՆՈՂԱԿԱՆ, տե՛ս ԲԱԺԱՆԱԿԱՆ (2):
ԲԱԺԱՆՈՐԴ, տե՛ս ԲԱԺԱՆԱԿԻՑ:
ԲԱԺԱՆՈՒՄՆ, գ. 1. Բաժին, վիճակ, բաշխումն: 2. Տրոհումն, անջատումն, զատուցումն, քակտումն: 3. Երկպառակութիւն, անմիաբանութիւն, տարաձայնութիւն: 4. Զանազանութիւն, տարբերութիւն, խտիր:
ԲԱԺԻՆ, գ. 1. Մասն, վիճակ: 2. Բաժանումն, տրոհումն: 3. Երկպառակութիւն: 4. Զանազանութիւն:
ԲԱԼ, գ. Մէգ, մառախուղ, մռայլ, շամանդաղ:
ԲԱԼԱԽ, ա. Սնոտի, անպիտան, չնչին, աննշան:
ԲԱԼԱՋԵՒ, ա. Բալատեսիլ, մառախլաձեւ, շամանդաղաձեւ, շամանդաղատեսիլ:
ԲԱԼԱՍԱՆ, գ. Բաղասամովն, բաղսամոս, ապաբալսամոն, ապրասամ:
ԲԱԼԱՏԵՍԻԼ, տե՛ս ԲԱԼԱՋԵՒ:
ԲԱԼԻՍՏՐ, տե՛ս ԲԱՂԻՍՏՐ:
ԲԱԼՂԻՆՋ, տե՛ս ԲԱԼՂԻՆՋԻԿ:
ԲԱԼՂԻՆՋԻԿ, գ. Բալղինջ (մլուկ, փայտոջիլ):
ԲԱԽ, գ. Բաբախումն, ընդհարումն:
ԲԱԽԱԾ, ա. Պակասամիտ, յիմար:
ԲԱԽԲԱԽԵԼ, նբ. և չբ. տե՛ս ԲԱԲԱԽԵԼ:
ԲԱԽԲԱԽՈՒՄՆ, տե՛ս ԲԱԲԱԽՈՒՄՆ:
ԲԱԽԵԼ, նբ. և չբ. 1. Հարկանել, զարկանել, ծեծել (դուռը, կուրծքը են): 2. Ազդել (զգայարանների վրայ): 3. Հնչեցուցանել (նուագարանի լարերին հարուածելով նուագել): 4. Ընկրկել, վանել: 5. Ի դիմի հարկանել, ընդհարկանել:
ԲԱԽԵՑՈՒՑԱՆԵԼ, պբ. Բախել, բաբախել, զարկանել:
ԲԱԽԻՒՆ, տե՛ս ԲԱԽՈՒՄՆ:
ԲԱԽՈՒԹԻՒՆ, տե՛ս ԲԱԽՈՒՄՆ:
ԲԱԽՈՒՄՆ, գ. Հարումն, ընդհարումն, զարկումն, զարկուած, զարկ:
ԲԱԽՏ, գ. 1. Ճակատագիր, հրամանք: 2. Բարեբախտութիւն: 3. Ճոխութիւն, իշխանութիւն: 4. Ոգի (բարի կամ չար):
ԲԱԽՏԱԳՐՈՒԹԻՒՆ, գ. Ճակատագիր:
ԲԱԽՏԱՆՈՑ, տե՛ս ՄԵՀԵԱՆ:
ԲԱԽՏԱՑԻ, մ. Պատահմամբ (բախտի բերմամբ):
ԲԱԽՏԱՒՈՐ, ա. Բարեբախտ, բարեբաստիկ, երջանիկ:
ԲԱԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ, գ. Բարեբախտութիւն, բարեբաստութիւն, երջանկութիւն:
